


ՅՈՎԱՆԵՖԱՅ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵ

0V-1887-1  
9971



# ՅՈՎԱՆԻՔԱՅ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ՏՆԱՅՈՑ ԵՒ ՊԱՏՄԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԳՐՈՒԱԾ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

691.9923

HOU

1887

1

DN 13971

معارف عمومیه نظارت جلیله سنك ۳۰۴ جاذی الاول  
۱۱ شباط ۳۰۲ تاریخی و ۱۱۳۱ نومروی رخصتامه سیله  
ومصارف آمریقان میسیونر شرکتی طرفندن تسویه اولنه رق طبع اوئن Sheldon



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՈՅԱՃԵԱՆ

1887

Հայութիւն. Օքանութիւն



# ՅՈՎԱՆԻ

## ՊԱՏՈՒԹԻՒՆԸ

Տաղաւորական համար գրուած :

## ԳԼՈՒԽ Ա.

Այս ժերեխն էրուելուն նայադակը :

**Ա**ստուածաշունչին օդտակար ու պիտանի պատմութիւններուն մէկն է Յակոբ նահապետին որդւոյն Յովսեփայ պատմութիւնը։ Այս պատմութիւնը մանաւանդ տղոց համար շատ զուարճալի է, ուստի ես ալ այս գիրքիս մէջ նոյն պատմութիւնը պիտի ընեմ այնպիսի կերպով մը որ, կը յուսամ թէ, սիրելի տղաք, ձեզի հաճելի պիտի ըլլայ։

Դուք շատ գիրքեր կը կարդաք զրօսանաց համար միայն, և այն գիրքերը մանաւանդ կը սիրէք կարդալ որոնք վէպ են։ Սակայն անոնցմէ զատ գիտնական և խրատական գիրքեր ալ պէտք է որ կարդաք, և այնպիսի բաներ սորվիք որ ձեզի համար օդտակար են այս աշխարհիս մէջ, անդին ալ ձեզ երջանիկ կրնան ընել։ Երբեմն ալ կը խաղաք և շատ կ'ուրախանաք։ Ես ալ կ'ուզեմ այդ բանը, քանզի ձեզի օդուտ է, և ձեզ զուարթ կ'ընէ։ և օդտակար վարժութիւն մըն է՝ որ պատճառ կ'ըլլայ ձեզիքաջ և աշխոյժ ըլլալու։ Սակայն ամէն ատեն խաղի պարապիւ չ'ըլլար, ուրիշ գործեր ալ պարտիք ընել։ Պատրաստուեցէք աղէկ բաներ սորվիւ որ, երբ մեծնաք, օդտակար անձինք ըլլաք։ Այն

տղաք և աղջկունք որ միշտ կը խաղան զուարճանալու համար, և ուրիշ բան չեն ըներ, երբ կը մեծնան, ամէն տեսակ գործ կ'ատեն. ծոյլ և անպիտան կ'ըլլան, և ոչ իրենց օդուտ կրնան ընել ոչ աւ ուրիշն։ Այսպէս ալ եթէ միայն վէպ կարդաք զուարճութեան համար, ետքը այն տեսակ գիրքեր միայն պիտի սիրէք կարդալ, և ուրիշ օդտակարները պիտի ատէք իբրև ձանձրալի բաներ։

Գիտնական կամ խրատական գիրքերը կարդալ շատ դժուարին պիտի ըլլայ ձեզի, ինչպէս այն տղան որ միշտ կը խաղայ՝ գործի ատեն դժկամակութիւն կը զգայ։

Դարձեալ ձեր միտքերը պիտի տկարանան, և հազիւ կարող պիտի ըլլաք շահաւոր բանի մը վրայ խորհիլ. և ամէնէն գէշը սա է, որ Աստուածաշունչն ալ, որ ամէն գիրքերուն ընտիրն է՝ թերեւս անօդուտ պիտի երևայ ձեզի։ Զեմ ըսեր թէ դուք ամենեին մի կարդաք զուարճալի վէպեր, կամ թէ անոնք անօդուտ են. այլ կ'ըսեմ թէ պարտիք գիտնական և խրատական գիրքեր ալ կարդալ, որոնք ձեզ խելացի կ'ընեն, և որոնցմէ օդուտ կը քաղէք։

Մանաւանդ այն տեսակ գիրքեր շատ բաղձալու էք կարդալ, որոնք առաջնորդ կ'ըլլան ձեզի խորհելու ձեր հոգւոյն վրայ, և թէ ի՞նչ պարտիք ընել փրկուելու համար։

Թերես հիմայ, սիրելի տղաք, պիտի ըսէք թէ ի՞նչ երկայն սկզբնաւորութիւն մը եղաւ աս, և պիտի ուղէք որ շուտով Յովսեփայ պատմութիւնը սկսիմ։

Այս անհամբերութիւնը կը ցուցընէ որ դուք մինչև հիմայ զուարճալի գիրքեր միայն կարդացած էք, և չէք ուզեր չորս կամ հինգ ըսպէ անդամ պիտանի և օդտակար բաներ լսել։

Եթէ այսպէս է, շուտով ջանացէք այն տեսակ

գիրքեր կարդալ որոնք խորունկ ու ծանր մտա-  
ծել կու տան :

Եթէ մէկը չ'ուզեր այսպէս ընել, շատ աղէկ կ'ըլլայ  
որ այս գիրքը դոցէ և ամենեին ձեռք չառնէ :


Յովսեփայ պատմութեանը մէջ շատ օդտակար  
և պիտանի բաներ կան, որոնք զուարձալի կերպով  
մը պիտի աշխատիմ ցուցընելու ձեզի :

Երբեմն ուրիշ բանի վրայ ալ պիտի խօսիմ. այս-  
ինքն՝ ձեր մեղաւոր ըլլալուն, ձեր յանցանքին  
ու վտանգներուն, ձեր ապաշխարութեան կարօտ  
ըլլալուն, Յիսուսի Քրիստոսի վրայ հաւատք ու-  
նենալ և ձեր սիրտերը Հոգւոյն Սրբոյ շնորհքովը  
փոխուիլ պէտք ըլլալուն, և ուրիշ ասոնց նման բա-  
ներու վրայ, զորոնք գիտնալ և ընդունիլ շատ  
հարկաւոր է ձեզի :

Եթէ գիտնամ, սիրելի տղաք, որ ամէնքդ ալ  
աս տեսակ բաներու մուադրութեամբ ականջ պիտի  
դնէք՝ երբ Յովսեփայ պատմութիւնը կարդաք, ո՞ր-  
շափ ուրախ պիտի ըլլամ աս գիրքը գրելուս :

Ուստի աղօթք ըրէք որ ամէնքդ ալ այսպիսի  
բաներ ուզէք կարդալ, ես ալ աղօթք պիտի ընեմ  
ձեզի համար :

Աստուած ինծի կարողութիւն տայ որ այս գիր-  
քը գրեմ, ձեզի ալ զօրութիւն տայ որ կարող  
ըլլաք զանի կարդալ, և անիկայ Հոգւոյն Սրբոյ  
զօրութեամբը ձեր հոգիներուն օդուտ ընէ :



## ԳԼՈՒԽ Բ

Յաշեմայ աղքաբանութիւնը : Յահովայ Միջադեպէն եւլէւը =  
Ռատելը մահը : Բենիամինի ծնունդը : Տշտ էնցու պարուն  
իրենց ծնողաց հետ վարուել :

**Յ**ովսէփ Յակոբայ որդին էր, իսահակ՝ Յովսէ-  
փայ հօրը հայրը, Աբրահամալ իսահակայ հայրը :  
Քիչ շնորհք չէր Յովսէփայ որ այսպիսի նախնիք  
ունէր, քանզի անոնք աստուածապաշտ էին, և  
ընտանեաց մէջ անոնց սովորութիւն եղած էր ընել  
ինչ որ պէտք է՝ Աստուծոյ հետ բարեկամութիւն  
ստանալու և անկէ օրհնուելու համար :

Յովսէփ Միջագետի մէջ ծնաւ երեք հազար  
հինգ հարիւր տարի առաջ, անոր հայրն այն երկրին  
մէջ իրը տասնուշորս տարի բնակեցաւ Լաբան  
անուն հարուստ երկրագործի մը հետ, որուն օգ-  
նութիւն կ'ընէր՝ անոր արջառներուն, ոչխարներուն  
ու այծերուն պահպանութիւն ընելով :

Լաբան Յակոբայ մօրեղբայրն էր, այսինքն՝ Յա-  
կոբայ մօրը Ռեբեկայի եղբայրը : Անիկայ պտղաբեր  
երկիր մը կը բնակէր՝ երկու գեղեցիկ գետերու, այս-  
ինքն՝ Տեգրիսի և Եփրատայ մէջ տեղ. շատ երկիր-  
ներու, այծերու և ոչխարներու տէր էր, շատ ալ  
ծառաներ ունէր որոնք անոր համար կ'աշխատէին :

Յակոբ ամուսնացաւ Լաբանու երկու աղջկանը,  
Լիայի ու Ռաքելի հետ, որոնց վերջինը Յովսէ-  
փայ մայրն էր : Յակոբ ուրիշ երկու կին ալունէր Բալ-  
լա և Զելփա անուն : Աստուած այն ժամանակ մար-  
դոց թոյլտութիւն ըրած էր որ մէկէ աւելի կին  
ունենան, և այսպէս հրաման տալուն պատճառ  
կար. բայց ասիկայ հիմայ արգելեալէ, և մեծ մեղքէ :

**Յակոբ մեծ ընտանիք մը եղած էր Լաբանի հետ  
բնակած ատենը :** Կարծեմ թէ աղէկ՝ է որ դուք  
անոր որդւոց անունները սորվիք : Ետքը անոնք  
ալ հայր եղան , անոնց որդիքն ալ նոյնպէս . և  
այսպէս անոնց սերունդը մեծ ժողովուրդ մը եղաւ  
որ իսրայելացի կը կոչուի : **Այս ժողովուրդը յետոյ  
Քանանու երկրին մէջ զօրաւոր ազգ մը եղաւ :**

**Ասոնց իսրայելացի կոչուելուն պատճառն աս է  
որ անոնք սերեցան Յակոբէն , որ իսրայէլ ալ  
կ'ըսուէր . և անոր տասներկու որդիքը տասներկու  
նահապետներ ըսուեցան : Յակոբայ որդւոց անուններն , անոնց տարիքներուն կարգովն , ասոնք են .  
Ռուբէն , Շմաւոն , Ղեի , Յուդա , Դան , Նեփա-  
թաղիմ , Գաղ , Ասեր , Իսաքար , Զաքուղոն , Դինա  
աղջիկ մը , Յովսէփի ու Բենիամին : Ռաքէլ Յով-  
սեփայ ու Բենիամինի մայրն էր :**

**Ասոնք բոլորը Միջագետի մէջ ծնան , բաց'ի Բե-  
նիամինէ , որուն վրայ ուրոյն քիչ մը բան պիտի  
խօսիմ :**

**Երբ Յովսէփ վեց տարեկան էր , և Ռուբէն , ամե-  
նէն մեծը , տասնեինը տարեկան , անոնց հայրը խոր-  
հեցաւ որ Միջագետէն ելլէ ու իր ընտանեօքը նորէն  
Քանան երթայ իր հայրենիքը , ուր իր ծերունի հայրն  
իսահակ դեռ ողջ էր : Քանան պտղաբեր և զուար-  
ծալի երկիր մընէր : Յակոբ խորհեցաւ որ իրեն  
ու իր ընտանեացն աղէկ պիտի ըլլար , եթէ եղած  
տեղէն ելլելով Քանան երթար : Ասկէ զատ՝ Աս-  
տուած Յակոբայ ըսած էր տեսիլքի մէջ որ այսպէս  
ընէ . ինք ալ դիտէր որ Աստուծոյ հնազանդելով  
ինք , իր կանայքը և տղաքն իրենց պարտքը կա-  
տարած և Ամենակարողին պաշտպանութեանը ներ-  
քե պիտի ըլլային :**

**Քանան Միջագետէն հեռու ըլլալով շատ դըժ-**

ուարին էր Յակոբայ այս ճամբորդութիւնն ընել .  
մանաւանդ որ անիկայ հարուստ մարդ մը ըլլալով՝  
տեսակ տեսակ կարասիք , և ուղտերու , էշերու , ար-  
ջառներու , ոչխարներու և այծերու մեծամեծ  
հօտեր ունէր :

Ասոնց բոլորը , նաև կանայք , տղաք , ծառաներ ,  
աղախիններ , Միջագետէն հանել ու Քանան տա-  
նին արդարև շատ դժուար էր . բայց Աստուած  
այնպէս հրաման ըրած էր : Եթէ դուք ալ անոր  
պատուիրաններուն հնազանդիք , սիրելի տղաք ,  
որչափ մեծ վտանգներու և նեղութիւններու մէջ  
ըլլաք , անոնց մէկն ալ ձեր մտաց հանդարտու-  
թիւնը չի կրնար խռովել կամ ձեզ վախցընել :

Ո՞վ կը վախնայ , երբ Աստուծոյ պատուիրած  
ճամբուն մէջն է , երբ ամենակարող Աստուած անոր  
առջեւէն կ'երթայ ու անոր ճամբան կ'ուղղէ : Հիմայ  
Յակոբայ ճամբայ ելլելուն վրայ պիտի չխօսիմ , ոչ  
ալ անոր Քանան հասնելէն առաջ ճամբան պատա-  
հածներուն վրայ . քանզի ասոնք Աստուածաշուն-  
չին մէջ կրնաք կարդալ :

Բայց Յովսեփայ վրայ բան մը կայ զոր ա-  
ռանց պատմելու չեմ կրնար անցնիլ : Թէպէտ պա-  
տանի էր ան , անոր սիրտը խորին տրտմութեամբ  
լեցուած էր :

Յակոբ Միջագետէն ելլելէն հինդ տարի ետքը ,  
քիչ մը ժամանակ տեղ մը մնալով ու քիչ մը ժամանակ  
ուրիշ տեղ մը , Եփրաթայի սկսաւ մօտենալ . Հոն ,  
Քանանու մէջ , ան ժամանակ Ռաքէլ յանկարծ հի-  
ւանդացաւ ու մեռաւ : Բենիամին անոր մեռնելէն  
քիչ ժամանակ առաջ ծնած էր :

Այն ատեն Յովսէփ տասնումէկ տարեկան էր :  
Ռաքէլ Եփրաթա երթալու ճամբան թաղուեցաւ ,  
և այն տեղը յետոյ Բեթղեհեմ կոչուեցաւ . և անոր

այրը Յակոբ՝ անոր գերեզմանին վրայ քարէ յիշատակարան մը կանգնեց :

Յովսէփի ան ատեն բաւական մեծ ըլլալով անտարակոյս իր մօրը մահուանը վրայ շատ տրտմութիւն կը զգար և կուլար . բոլոր անոր մայրական խնամքը յիշելով կը տրտմէր որ ալ անոր երեսը պիտի չտեսնէր, և անոր քաղցր ձայնը պիտի չլսէր :

Յովսէփի շատ կը սիրէր իր կրտսեր եղբայրը Բենիամին, որ այնպիսի ցաւալի պարագայի մէջ ծնածէր : Յովսէփայ իր եղբօրը վրայ ունեցած սէրը ետքը պիտի տեսնէք :

Սիրելի տղաք, բարի և որդեսէր մօր մը յարդը գիտէ՞ք . տղու մը այսպիսի մայր ունենալը հազար ոսկիէ աւելի կ'արժէ :

Աստուածապաշտ մօր մը յարդը գիտէ՞ք . ան իր տղուն համար և անոր հետ աղօթք կ'ընէ, կը ջանայ որ անոր հոգին երկինք առաջնորդէ : Լաւագոյն է տղու մը այսպիսի մայր մը ունենալ, քանի թէ բոլոր աշխարհ և անոր մէջինները :

Այսպիսի մայր մը ունի՞ք . եթէ ունիք, սիրեցէք անիկայ, հնազանդ եղիք անոր, ձեզի տուած իրաւաներուն միտ դրէք, յիշեցէք բոլոր անոր տուած բարի հրահանգները, ջանացէք որչափ որ կրնաք երջանիկ ընել անիկայ :

Այսպիսի մայր մը ունէի՞ք . եթէ ունէիք՝ յիշեցէք անիկայ խանդակաթ սիրով . բոլոր անոր ձեզի համար ըրած բաներուն յիշատակը ձեր սրտին մէջ պահեցէք . և բոլոր աղօթքները, խրաւաները, զգուշութիւնները և յանդիմանութիւնները միտք բերէք : Ի՞նչպէս պէտք է ձեզի վարուիլ այսպիսի մօր մը հետ, եթէ ողջ է . կամանոր յիշատակն ընել, եթէ մեռած է : Կրնայ ըլլալ որ անհնազանդ, ապերախտ և չար տղայ մը աս երեսները կարդայ,

ըովէ մը Յովսեփայ հետ Ռաքելի գերեզմանին  
քով կայնի , և չխորհի ու չողբայ իր սրտին չարու-  
թիւնը որ կրնայ տղու կամ աղջկան մը պատճառ  
ըլլալ սիրելի և աստուածապաշտ մօր աղօթք-  
ներն , աղաշանքներն և արցունքները մոռնալու :  
Եթէ այն մայրը ողջ է , ի՞նչպէս տրտմութեամբ  
կը վշտացընէ անոր հոգին տղուն այս տեսակ վարք  
ունենալը . Եթէ մեռած է , ի՞նչպէս կրնայ տղան  
անոր դէմքը , սիրոյ ձայնը , քաղցրութիւնը և գթու-  
թիւնը միտք բերել՝ առանց լալու և ապաշխարելու  
Աստուծոյ առջեւ :

## ԳԼՈՒԽ Գ

Յակոբայ Մամբրէ հասնելը : Քենընէ նկարագրունենը :  
Յովսեֆայ վարժը : Յակոբայ սանեցած սէրը Յովսեֆայ վըայ :  
Եղբայրներուն նախանյը : Մեղք և շատնայ , ենէ շուտով  
չողաշխարհունի :

Յակոբ Ռաքելի մահուրնէն քիչ ժամանակ ետ-  
քը Մամբրէ հասաւ , ու իր ծերունի հայրն իսա-  
հակ գեռ ողջ գտաւ հոն , թէպէտ անիկայ հարիւր  
վաթսուն տարին անցուցած էր : Անոնք շատ երջա-  
նիկ եղան երբ ողջ գտան զիրար : Անտարակոյս  
Յովսէփի ալ շատ ուրախացաւ երբ տեսաւ իր  
հաւը (պապը) , որուն վրայով շատ բան լսած էր :  
Իսահակայ բնակած զուարծալի տեղը Երուսա-  
լեմին քսանեեօթը մղոնի չափ հեռու էր դէպ'ի  
հարաւ , և յետոյ Քերըն ըսուեցաւ : Հոն մօտ  
քարանձաւ մը կար՝ զոր Աբրահամ գնած էր՝  
որ ինք և իր Սարրա կինը հոն թաղուին , ի՞նչ-  
պէս որ թաղուեցան : Իսահակ ալ՝ երբ հարիւր ութ-  
սուն տարեկան մեռաւ , նոյն քարանձաւին մէջ

Եր հօրը և մօրը քով թաղուեցաւ : Պաղեստինու  
այն կողմերը պտրտող ճանապարհորդք կ'ըսեն թէ՝  
Քերըն շինուած է արդասաւոր ձորի մը մէջ, լե-  
ռան մը տակ . չորս կողմի բլուրները կաղնիներով,  
մաթուզենիներով, եղեիններով և ուրիշ գեղեցիկ  
ծառերով ծածկուած են :

**Ա.** քաղաքն ունի զօրաւոր բերդ մը , շատ խա-  
նութներ , գեղեցկաշէն տուներ , ինը մզկիթ և իբր  
չորս հարիւր տուն **Արաբացի** բնակիչ՝ բաց'ի հարիւր  
**Նրեայ** տուներէն : **Անտարակոյս Իսահակայ** ու **Յա-  
կոբայ** ժամանակ ասոր բոլորտիքը շատ ծաղկեալ ու  
բարեբեր երկիր մըն էր . եթէ այնպէս չըլլար , ա-  
նոնք պիտի չընակէին հոն իրենց մեծ ընտանիքովն ,  
անթիւ ոչ խարներովն ու այծերովը : **Յակոբայ** գը-  
խաւոր գործն էր արջառ , ոչ խար , այծ և ասոր պէս  
բաներ պահել . տղաքն ալանոր օդնութիւն կ'ընէին :  
**Յովսեփայ** համար **Աստուածաշունչին** մէջ կը կար-  
դանք որ **Բալլայի** ու **Զելփայի** տղոցը հետ ոչ խար  
կ'արածէր :

**Ա.** յն ատեն **Յովսէփի** տասնուեօթը տարեկան  
էր , և անոր հայրը միւս որդիներէն աւելի կը  
սիրէր զանի . քանզի **Յակոբ** իննսուն տարե-  
կան էր երբ **Յովսէփի** ծնաւ : Թերեւս **Յովսէփի**  
կրթեալ տղայ մը ըլլալուն ու խմաստութեան  
նշաններ ցուցընելուն համար , որ անոր հասա-  
կին նայելով մեծ բաներ էին , հայրը զանիկայ  
շատ կը սիրէր :

Կ'երեկի թէ **Յակոբայ** միւս որդիները , բաց'ի  
Բենիամինէն որ ան ատեն պղտիկ տղայ մըն էր ,  
**Յովսեփայ** պէս կրթեալ չէին : **Բալլայի** ու **Զելփայի**  
որդիքը , որոնց հետ **Յովսէփի** ոչ խար կ'արածէր ,  
անդամմը գէշ բան մը ըսին , և **Յովսէփի** իրեն պարտք  
համարելով գնաց բանը հօրն խմացուց :

**Յովսէփի այսպիսի տղայ մը ըլլալով**, զարմանալի չէ որ անիկայ իր եղբայրներէն աւելի սիրելի էր իր հօրը . և թերեւս Յակոբ զանի միւսներուն իբր օրի նակ ցուցընելով կը խօսէր անոր վրայ : Յովսէփի նաև գեղեցիկ և պատուական հանդերձներ կը հագնէր զանազան գոյներով, զոր հայրը տուած էր անոր՝ իբրև յատուկ նշան իր սիրոյն, կամ անիկայ միւս եղբայրներէն որոշելու համար, և կամ նաև անոր անոնցմէ աւելի պատուաւոր ըլլալը ցուցընելու համար : **Աստուածաշունչին մէջ անկէ ետքը Յովսէփի ոչխար արածելը չյիշուելուն համար կը կարծուի թէ անիկայ տունը հօրը քով կը կենար**, անոր օգնութիւն կ'ընէր, և անոր ընտանեացը և ուրիշ գործերու հոգ կը տանէր : **Բոլոր այս բաները Յովսէփի ոչխար արածելը չյիշուելուն ու նախանձ պատճառեցին**, այնպէս որ երբ անոր կը պատահէին, խաղաղութեամբ չէին կրնար խօսիլ անոր հետ . շատ անդամ ալ, երբ քովէն կ'անցնէին, ամենեւին բարև չէին տար անոր . երբեմն ալ դառն ու դէշ խօսքեր կ'ընէին անոր դէմ . և թերեւս, երբ մինակ կ'ըլլային, իրենց ծերունի հօրը համար ալ նախատական խօսքեր կ'ըսէին, և անոր դէմ կը տրտնջէին իրենց եղբօրն այնքան սէր տուած ըլլալուն համար, ու նաև Յովսէփի վրայ ամբաստանութիւն կ'ընէին թէ իրենց գործին կը խառնուէր ու իրենց ըրածները կամ ըսածները Յակոբայ կը պատմէր :

**Հիմա**, սիրելի տղաք, արդեօք դուք ալ ձեր եղբայրներուն կամ քոյրերուն կամ դպրատան ընկերներուն կը նախանձի՞ք՝ անոնց վարքը ձերինէն աղէկ ըլլալուն համար, անոնց ծնողքները կամ վարժապետներն անոնց վրայ աւելի սէր ունենալուն համար քան թէ ձեր վրայ, կամ թէ անոնց այսինչ բանը շնորհելուն համար՝ որ դուք ունեցած չէք :

Եթէ կը նախանձիք, գիտէ՞ք թէ նախանձն ի՞նչ  
է։ Գիտէ՞ք արդեօք թէ ուրիշի վրայ նախան-  
ձիլը ո՞րչափ գէշ ու մեծ մեղք է։ Եթէ անոնք  
բարի ու երջանիկ են, կը սիրուին և կը պատուին,  
և այնպիսի ձիրքեր ունին որ դուք չունիք, պէտք  
չէ՞ որ ուրախանաք։ և փոխանակ նախանձելու, փո-  
խանակ անոնց այն ձիրքերէն զրկուին ուզելու,  
աղէկ չ'ըլլա՞ր որ ջանաք անոնցմէ օրինակ առնելու,  
անոնց նմանելու և անոնց երջանկութեանը մասնակից  
ըլլալու։ քանզի ծնողք ու վարժապետներ բաւական  
պատիւ, սէր և ուրիշ շատ բաներ ունին, և կը ր-  
նան բոլոր տղոց տալ, որոնք իրենց համեստ և  
բարի վարուցը համար պարզելի և պատույ արժա-  
նի են։ Յովսեփիայ պատմութեանը մէջ պիտի տես-  
նէք թէ անոր եղբայրներուն նախանձին հետեւանքն  
ի՞նչ եղաւ, և թէ եղբօր ու քրոջ իրարու նա-  
խանձելուն վերջն ո՞ւր կ'երթայ։ Ամէն տեսակ  
մեղք ՚ի սկզբան փոքր կ'երեայ, բայց ետքը շուտով  
կ'աճի, ու վերջը շատ մասսակար կ'ըլլայ։

Գիտէ՞ք արդեօք որ, եթէ բարկութեան տե-  
ղի տալով իրարու զարնէք ու ետքը շապաշխա-  
րէք, վերջն ի՞նչ կ'ըլլայ։ Եթէ չապաշխարէք ու  
չաղօթէք Աստուծոյ որ ձեզ այս կիրքէն աղա-  
տէ, ետքը երբ բարկանալու ըլլաք, առաւել  
սաստիկ պիտի զարնէք։ Գիտէ՞ք արդեօք ասոնց  
բոլորին վերջն ո՞ւր կ'երթայ։ Եթէ ըսեմ թէ վերջը  
սպանութիւն կը ծնանի, արդեօք պիտի զարմա-  
նա՞ք։ Շատեր գործածեն այն ոճիրը, ու կընայ ըլլալ  
որ դուք ալ գործէք։ նախանձը մարդս սպանու-  
թեան կը տանի։ Արդարեւ եթէ նախանձու սիրտ  
ունեցողները չզղջան ու չապաշխարեն, կընան Յով-  
սեփիայ եղբայրներուն պէս գէշ բաներ ընել։ անոնց  
ըրածները պիտի տեսնէք այս պատմութեան մէջ։

Հիմայ ուղիղ սրտով ապաշխարեցէք, և աղա-  
չեցէք Աստուծոյ որ իր Սուրբ Հոգին տայ ձե-  
զի, որ դուք կարող ըլլաք բոլոր ձեր գէշ կիր-  
զի, աղատիւ աղատիւ . և Եթէ տակաւին չէք ապաշ-  
քերէն աղատիւ . և Եթէ տակաւին չէք ապաշ-  
քերած անոնց վրայ, կ'աղաչեմ ձեզի որ այս ձեր  
խարած անոնց վրայ, կ'աղաչեմ ձեզի որ այս ձեր  
երևելի պարտքն առանց դանդաղելու ջանաք  
կատարել :

## ԳԼՈՒԽ Դ

**Յ**ԱՎԵՒՔ ԵՐԱՎՀ : ԱՆՈՐ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ ՍԵ-+ԷՅ ԵՐԵՄԱԿԻ : ԱՅ-  
ՆԵՂԵՐՆ ՆՀԱՐԱԳԻՐՈՒՆԻՆԵԼ : **Յ**ԱՎԵՒՔ ԵՐ ԵՂԲԱՅՐՆԵՐՆ հարցընել  
ԱՎԵՒՔ :

**Յ**ՈՎՍԵՎԻ իր Եղբայրներէն այսչափ կ'անարգուէր,  
բայց Աստուծած անոր տեսնել տուաւ Երազ մը  
որ կը ցուցընէր թէ անիկայ բարձր վիճակի մը  
պիտի հասնէր, և իշխան պիտի կարգուէր իր Եղ-  
բայրներուն վրայ :

Անիկայ Երազին մէջ տեսաւ որ ինք և բոլոր  
Եղբայրները դաշտի մը մէջ արտէն հնձուած ցորենի  
որաներ կը կապէին . յանկարծ Յովսեվիայ կապած  
որան կանգնեցաւ, ու Եղբայրներուն կապածներն  
անոր որային չորս կողմը պատելով անոր խոնար-  
հութիւն ըրին :

**Յ**ՈՎՍԵՎԻ իր Երազը Եղբայրներուն պատմեց, և  
անոնք ևս առաւել սկսան նախանձիլ անոր . նա-  
խատական կերպով մը հարցուցին անոր թէ ի՞նչ  
ըսել ուզեց այն Երազը պատմելով . “Միթէ  
դուն մեր վրայ պիտի իշխե՞ս,” ըսին . “մենք քեզի  
խոնարհութի՞ւն պիտի ընենք ու հնագանդինք  
երը մեր իշխանին կամ թաղաւորին . ի՞նչ մեծ  
յիմարութիւն և հպարտութիւն է որ քեզի պէս

պատանի մը , մանաւանդ մեր փոքր եղբայրը , այս պիտի երազ մը տեսնելով , յոյս ունենայ թէ պիտի կատարուի” :

**Փիչ ժամանակ ետքը Յովսէփի ուրիշ երազ մալ տեսաւ , որ միւսէն աւելի զարմանալի էր :**

**Երազը սա էր . արեգակը , լուսինը և տասնումէկ աստղ Յովսէփայ չորս կողմը շարուած երկրպագութիւն կ'ընէին անոր :**

**Յովսէփ աս երազն ալ իր հօրը և եղբայրներուն պատմեց , և անոնք կը կարծէին թէ մարդարէութիւն կ'ընէր որ , ոչ միայն իր եղբայրները՝ որ տասն ումէկ աստղերով կը ցուցուէին , հապա հայրն ու մայրն ալ որոնց նշանակ էին արևն ու լուսինը , անոր երկրպագութիւն պիտի ընէին և իբր իրենց իշխանին ու թագաւորին պիտի հնազանդէին անոր :**

**Յակոբ կարծելով թէ Յովսէփ այսպիսի երազ ներ տեսնելով պիտի հպարտանար ու գոռողանար , կամ չհաւատալով թէ Յովսէփայ տեսած երազները մարդարէութիւն էին որ ստուգիւ պիտի կատարուէին , յանդիմանեց անիկայ ըսելով , “Այդ երազը պատմելով ի՞նչ ըսել կ'ուզես . ես ու մայրդ և եղբայրներդ քեզի երկրպագութիւն պիտի ընենք” :**

**Սակայն Յովսէփայ երազը զարմանալի կ'երևար Յակոբայ , մանաւանդ որ անոր առջի երազին շատ նման էր . ու Յակոբ ասիկայ չմոռցաւ : Յովսէփայ այս երկրորդ երազը կրկին բարկացուց անոր եղբայրները . անոնք սկսան առաջուընէ աւելի նախանձիլ անոր ու ատել անիկայ . անտարակոյս անոնք պատեհութիւն մը կը փնտուէին , որ անոր մեծ մնաս մը ընեն . քանզի նախանձն ու ատելութիւնը չեն կը նար անդործ կենալ . կը նմանին կրակի որ քիչ մը ժամանակ պահուած մնալով , ետքը նորէն սաստկութեամբ կը փռնկի . մենք ալ պիտի տեսնենք՝ որ**

Յովսեփայ եղբայրներուն կիրքերն այսպէս անոնց  
ներսիդին կը վառէին :

Ասկէ քիչ ժամանակ ետքը՝ Յակոբ զանոնք Ահւ-  
քէմ խրկեց իր ոչխարներն ու այծերն արածելու :  
Աս տեղը Քերոնէն դէպ'ի հիւսիս վաթսուն կամ  
եօթանասուն մղոն ըլլալով՝ ոչխարներն ու այծերը  
տանելու համար շատ երկայն ճամբայ էր . բայց հարկ  
էր զանոնք տեղէ տեղ տանիլ մինչև որ բաւական  
կերակուր գտնէին :

Ահւքեմայ ձորին մէջ շատ առատ սնունդ կը դըտ-  
նուէր , քանզի Աստուած այն դաշտն օրհնած էր :

Այժմեան ճանապարհորդները որ Պաղեստինու  
այն կողմերը կ'երթան՝ կ'ըսեն թէ անիկայ շատ  
զուարծալի և պտղաբեր երկիր է :

Հիմայ այն քաղաքը Կապլուզ կ'ըսուի , և եթէ  
անոր քովի բլուրներէն նայուելու ըլլայ՝ կը տես-  
նուի որ երկիրը գեղեցիկ և անուշահոտ հովանոց-  
ներով , տուներուն կէսն ալ սիրուն պարտէզնե-  
րով և բարձր ծառերու անտառներով ծած-  
կուած են :

Աշ ու ձախ կողմը Գարիզինի ու Գերաղի լեռ-  
ներն են , որոնց երկայն ապառաժ ու անբերրի  
բարձրութիւնները բոլորովին տարբեր են վարի  
պտղաբեր ձորէն , ու այն ընդարձակ ձիթենեաց  
երկրէն :

Այս տեղին մօտ , որ Փրիստոսի ատենը Աքար  
կ'ըսուէր՝ Յակոբ նահապետի հորը կար , որուն  
քով Փրիստոս Սամարացի կնոջ հետ խօսեցաւ . Յով-  
սէփի ալ հոն թաղուեցաւ , ինչպէս որ պիտի տես-  
նենք անոր զարմանալի պատմութեանը վերջին  
մասին մէջ :

Այս զուարծալի տեղը ղրկած էր Յակոբ իր  
որդիքը , որ իր անթիւ ոչխարներն արածեն . բայց

տեղը բաւական հեռու ըլլալուն պատճառաւ քիչ  
ժամանակ ետքը սկսաւ հոգ ընել անոնց համար.  
ուստի և Յովսէփը զրկեց որ երթայ զանոնք և  
ոչխարները տեսնէ և անոնց վրայով լուր բերէ:

Դատ երկայն ճանապարհ մըն էր պատանւոյ մը  
համար՝ քալելով և միայնակ այնքան տեղ երթալ.  
ասկէ զատ Յովսէփ անտարակոյս կը վախնար իր  
եղբայրներէն, քանզի անոնք անոր շատ հակառակ  
և թշնամի էին. բայց հայրը հրամայեց որ երթայ,  
ու հնազանդ տղու մը այսչափ խօսքը բաւական է:

Յովսէփ ուրախութեամբ հնազանդեցաւ, իր  
տունը թողուց որ այն Փերրոնի գեղեցիկ ձորին  
մէջն էր, ու ճամբայ ելաւ Սիւքէմ երթալու, որ  
իր եղբայրները դտնէ և անոնց վիճակին վրայ տե-  
ղեկանայ: Յովսէփ չէր գիտեր թէ իրեն ինչ պիտի  
պատահէր, և թէ ինչպէս Աստուած զանիկայ այն  
ճամբուն մէջ առաջնորդելով մեծութեան պիտի  
հասցընէր, ու անոր երազները կատարել պիտի տար:

Յովսէփայ ծերունի հայրն ալ իր հրաժարական  
ողջոյնը տուած ժամանակն, ամենենին չէր գիտեր  
թէ իր գլխուն ինչ պիտի դար, և թէ շատ տարի-  
ներ պիտի անցընէր առանց իր հնազանդ ու սիրելի  
որդին նորէն տեսնելու: Անոնք ուրախութեամբ  
իրարու մնաս բարով ըսին, ու չէին գիտեր թէ մին-  
չև որ իրար կրկին տեսնէին, ինչ փորձանքներու  
պիտի հանդիպէին:



## ԳԼՈՒԽ Ե

**Յ**ավետ եր Եղբայրներուն Եղած արելը կու գայ ։ Անոնց ըստուն  
նիւնը որով է մասնաւուն երենց Եղբայրը մերացնելը Միթքը նշուա-  
նուածան պատրաստ է, ամէն ըստուննեներուն գլուխն է ։ Ենէ  
անհետ աղաղաքարուննեամբ դարձ չըւլու, վախճանը շատ գել է ։

**Յ**ովսէփի Սիւքէմ հասնելով, երբ դաշտին մէջ կը<sup>1</sup>  
ատըտէր իր եղբայրները գտնելու, օտարական մը  
բատահեցաւ անոր ու հարցուց, թէ ի՞նչ կը փըն-  
նուէր հոն։ Յովսէփ պատասխան տուաւ թէ եղ-  
բայրները կը փնտուէր։ Կ'աղաչեմ, ըսաւ, ըսէք  
ինծի, անոնք ո՞ւր կ'արածեն իրենց ոչխարները։  
Մարդն ըսաւ, Անոնք ասկէ դացին, քանզի  
լսեցի որ կ'ըսէին, Եկէք Դովթայիմ երթանք։  
Դովթայիմ դէպ՚ի հիւսիս քսան մղոնէ աւելի  
հեռու էր Սիւքէմին։ Յովսէփ շուտով հոն դնաց,  
և իր եղբայրները գտաւ։

\* **Ա**րդարև Յովսէփի իր ճամբորդութիւնը լմացը-  
նելուն համար շատ ուրախացաւ, և կը յուսար շու-  
տով իր սիրելի հօրը դառնալ, ու իր եղբայրնե-  
րուն ողջ առողջ ըլլան անոր պատմել։

Երբ Յովսէփայ գալը տեսան անոր եղբայրները,  
ստոյգ դիտցան որ իրենց եղբայրն է։ Գիտէք անոր  
վրայով ի՞նչ խորհեցան։

**Մ**իթէ ուրախացա՞ն որ անիկայ տեսնելով իրենց  
տանը, ընտանեացն ու սիրելի հօրը որպիսութիւնը  
պիտի իմանային։

**Ա**րդարև եթէ դուք անոնց տեղն ըլլայիք,  
պիտի ուրախանայիք։ Բայց, ո՞հ, շատ քիչ դիտէք  
մարդուս սրտին չարութիւնը։

**Ե**ս ձեզի ըսի որ, եթէ նախանձն ու ատելու-

թիւնը բոլորովին սրտէ չհանուին, վերջը ուր կ'երթայ . հիմայ դուք պիտի տեսնէք խօսքիս ճշշմարիտ ըլլալը :

Ոչ անոնց տուներուն հեռու ըլլալը, ոչ ալ այն զուարձալի ու անմեղ արուեստին մէջ գտնուիլը կարող եղան անոնց սիրտերը կակղցընել և մոռցընել անոնց այս կարծիքը թէ Յովսեփէն ու իրենց հօրմէն շատ անիրաւութիւն կը կրեն :

Անոնք Սիւքեմի զուարձալի ձորին մէջ կը պըտըտէին, այն գեղեցիկ օդը կը շնչէին, այն զուարձալի տեսարանները կը տեսնէին, կանանչ խոտերուն վրայ իրենց ոչխարները կ'արածէին, ու երկար ժամանակ այն զովագին վտակներուն ու ծառերուն տակը կը հանդչէին :

Սակայն այս շնորհքներուն մէկն ալ ամենեւին անոնց ազդեցութիւն չըրաւ, իրենց սրտէն հանելու ոխը զոր իրենց եղբօրը Յովսեփայ դէմ ունէին :

Ի՞նչ հանդարտ արուեստ մը ունէին, և Աստուած անոնց ո՞րչափ աղէկութիւն կ'ընէր, ու իր քաղցը գթութիւնը կը ցուցընէր անոնց բոլոր իր գործքերովը, որոնք անոնց չորս կողմը կը տեսնուէին : Պէտք էր որ այս բաներն անոնց սիրտերը լեցընէին շնորհակալութեամբ դէպ' իրենց երկնաւոր հայրը, նաև բարի սիրտ ունենալ տային անոնց իրենց ընկերներուն վրայ . սակայն անոնց սիրտերը շատ տարբեր էին :

Երբ տեսան որ Յովսէփ հեռուէն կու գար, և թերեւս հօրը տուած հանդերձները հագած էր, խկոյն անոնց սիրտերուն չար կիրքերը շարժեցան : Յիշեցին անոր երազը, որուն համար մանաւանդ անիկայ այնչափ կ'ատէին, և իրարու ըսին, Ահա երազատեսը կու գայ, եկէք անիկայ մեռցընենք, ու փոսի մը մէջ նետենք, և ըսենք թէ՝ Գաւ-

զան մը անիկայ փարատեց .ու տեսնենք թէ անոր երազն ի՞նչ պիտի ըլլայ .Անոնց ամբարտաւանութիւնը , նախանձը և ատելութիւնը կը դրդէին զարդիւնը իրենց հարազատ եղբայրը մեռցընելու :

Եթէ Յովսեփայ երազը կատարուէր , անիկայ երբւ իրենց իշխանն ու թագաւորը պիտի համարէին : Ի՞նչպէս կրնային անոնք իրենց փոքր եղբօրէին : Ի՞նչպէս կրնային անոր խոնարհութիւն ընել , երբ ըր հնազանդիլ և անոր խոնարհութիւն ընել , եղածք կը բերէին իրենց հօրը Յովսեփայ ցուցումիտք կը բերէին իրենց հօրը գանի միւս եղդերձները , որոնք անոր սիրոյն՝ և զանի միւս եղդերձներէն պատուաւոր ընելուն մէկ յատուկ նշանն էին . ուստի անոնց նախանձն աւելի կը շատնար :

Գիտէին որ անիկայ այս պատուոյն արժանի էր .քանզի անոր վարքն ու բնութիւնն անոնց վարքէն ու բնութենէն լաւ էր :

Կ'ուզէին որ Յովսէփ իր ունեցած և վայելած բաներէն զրկուէր . ասով իբր թէ իրենց երջանկութիւնը պիտի աւելնար :

Անոնց ատելութիւնը շատցաւ . կ'ուզէին Յովսեփայ մեծ չարիք մը ընել . պատրաստ էին անիկայ մեռցընելու :

Կ'ուզէմ հոս քիչ մը կենալ , որպէս զի ձեզի հասկցընեմ մեղքին ի՞նչ ըլլալը : Դուք կը տեսնէք թէ Յովսեփայ եղբայրներուն չար խորհուրդներն ու զգացումներն ի՞նչպէս սոսկալի էին :

Բայց կը խորհիք արդեօք ձեր չար խորհուրդներուն ու զգացումներուն վրայ , որոնք ձեր սըրտերուն մէջ կը պահէք , երբեմն ալ ձեր խօսակցութեանն ու վարքին մէջ կը ցուցընէք :

Գիտէք թէ ինչպէս կ'երևան անոնք Աստուծոյ առջին , որ բոլորը կը տեսնէ և գիտէ : Եթէ ձեր մեղքերէն բոլորով սրտիւ ապաշխարած , ու

Քրիստոսի միջնորդութեամբն անոնց համար Առաջուծմէ թողութիւն խնդրած չէք, Հոգւոյն Սրբոյ համար ալ աղօթքը ըրած չէք որ իր զօրութիւնը ձեզի տայ մեղքէն ետ կենալու, դուք ալ Յովսեակայ եղբայրներուն պէս նոյն աղետալի վիճակին մէջ էք. մեղքն ինչպէս որ անոնց կը տիրէր, այն պէս ալ ձեզի պիտի տիրէ:

Ասով ըսել կ'ուզեմ թէ, եթէ չապաշխարէք, ետքը գէշ բաղձանքներու ու կիրքերու պիտի ծառայէք: Այս գէշ սովորութիւնները ձեր վրայ պիտի տիրեն, ու միշտ գէշ խօսքեր ու դործքեր պիտի ընել տան ձեզի, և պիտի չդիտնաք թէ ձեր չարութեան վերջն ուր պիտի երթայ: Հիմայ կը կարծէք թէ ձեր մեղքերը շատ թեթև են, ասկայն այն մեծ, բարի և ճշմարիտ Աստուծոյ պատուէրներն աւրելը թեթև բան չէ:

Այն ձեր բարեկամն է. բարեսիրտ մարդ մը պարտի բոլոր անոր մարդասիրութիւններն յիշել, անիկայ սիրել ու անոր հնազանդ ըլլալ: Այն ձեզ ստեղծեց, ու դուք անոր ստացուածն էք. պէտք է որ դուք անիկայ սիրէք, և անոր հնազանդիք. անոր պահանջածն ալ ձեր սէրն ու հնազանդութիւնն է, որ դուք ձեզ երջանիկ ընելէ զատ, ուրիշներն ալ երջանիկ ընէք. քանզի տղոց սէրն ու հնազանդութիւնն է որ զանոնք և անոնց ընտանիքը երջանիկ կ'ընէ, ինչպէս որ յայտնի է: Այսպէս ալ զԱստուած սիրելն ու անոր հնազանդիլն՝ անոր բոլոր արարածները երջանիկ կ'ընէ: Մեղքը բոլոր արարածներուն թշուառութեան պատճառ է. ինչպէս դուք գիտէք որ ծնողաց անհնազանդութիւն ընելն ու գէշ վարք ունենալն՝ ընտանեաց մէջ մեծ թշուառութեան պատճառ կ'ըլլայ:

Ուստի պէտք չէ որ մեղքի մը թեթև կամ փոքր

ըսուի. վասն զի եթէ ձեր մեղքերուն վրայ չապաշը լսուի. ու Յիսուսի Փրկուսուի չապաւինիք՝ անով խարէք, ու Յիսուսի Փրկուսուի չամար, ետքը ձեր չար ձեր մեղքերէն փրկուելու համար, ետքը ձեր չար խորհուրդներն ու զգացումները պիտի շատնան և զօրանան քանի որ մեծնաք։

**ՄԵՂՔ** գործելուն վերջն ո՞ւր պիտի երթայ. այս կենաց մէջ ի՞նչ բաներ ընել պիտի տայ, գաւ աշխարհին մէջ ալ ո՞ւր պիտի առաջնորդէ։ Ըստ աշխարհին մէջ մահէ, հոգւոյ մահ, որ երկնային ուրախութենէն յաւիտեանս կը զրկէ, և այն աղետալի, չար և ամենաթշուառ տեղը կը տանի, ուր որդը ընաւ չի մեռնիր, ու կրակը չի մարիր։

## ԳԼՈՒԽ Զ

**ՅԱՀԱԵՒԻԱՅ** կենաց համար **ՌԱՄ-ԲԵՆԻ** աղաւանուր = **ՅԱՀԱԵՒԻԱՅ** Քուր ներուն-էլը = **ԱՆՈՐ** Եղբայրներուն կարծրասրարուն-նիւնը = **ՅԱՀԱԵՒԻԱՅ** կեանունին համար **ՅԱ-ԴԱՅԻ** աղաւանուր = **ՅԱՀԱԵՒԻԱՅ** Իւմայելաց-ոց ծախուն-էլը = **ԵՇԵԴՎՈՒԱ** աղաւանուր, և **Ա-ԱՐՈՒ-ՃՈՅ** նախանամունիւնը =

**ՅՈՎՍԵՒԻԱՅ** եղբայրները զանի մեռցընելու վրայ էին. մէկէն զատ բոլորն ալ այս չար գործն ընելու դիտաւորութիւն ունէին. բոլորն ալ կը մտածէին թէ ի՞նչ կերպով ընեն որ չյայտնուի, ու իրենց հօրը հաւտացընեն թէ վայրի գազան մը փարատեց զանի։ **ՌԱՄ** զՅովսէփի մեռցընելու համար կը խօսին, և կ'ըսեն, **ԵԿԵՔ** մեռցընենք զանի, և այնպիսի փոսի մը մէջ նետենք որ մարդ կարող չըլլայ տեսնել. և այսպէս հիմայ բոլորն ալ կը պատրաստուին իրենց ամբարտաւանութեան, նախանձու և ատելութեան չար կիրքերն հաճեցընելու։

**Բայց Աստուած չի թողուր որ անոնք իրենց  
ուզածն ընեն :**

**Յովսեփայ եղբայրներուն մէջ Ռուբէն ամենէն  
մեծն էր . Աստուած ասոր խիղճն արժնցուց որ  
իրենց ընելու չարութիւնը տեսնէ , ու անոր սիրար  
կակղացուց որ իր եղբօրը և հօրն ողորմի :**

**Ռուբէն իր եղբայրներուն աղաչեց որ զՅովսէփ  
չմեռցընեն , ու խրատեց զանոնք որ անիկայ իրենց  
մօտն եղող խորունկ փոսր նետեն :**

**Ռուբէն կը խորհէր թէ անոնք Յովսեփայ այն-  
պէս բարկացած էին որ ամենեին անիկայ թող  
պիտի չտային . և կը յուսար թէ ետքը պատեհու-  
թիւն մը կրնար գտնել զանի աղատելով նորէն իր  
հօրը Յակոբայ դարձընել :**

**Միւս եղբայրները Ռուբէնի խրատին հնազան-  
գեցան . թերեւս խորհեցան թէ , եթէ իրենց եղ-  
բայրը մեռցընէին , Ռուբէն այն մասին անոնց հետ  
մասնակից պիտի չըլլար , ու եղածն իրենց հօրը  
պիտի պատմէր :**

**Երբ անոնք այս խորհուրդներուն վրայ էին ,  
Յովսէփ անոնց մօտեցաւ որ հօրը կողմէն լուր տար ,  
անոնց որպիսութիւնն ալ խմանար :**

**Յովսէփ ի՞նչպէս լացաւ ու աղաչեց երբ զինքը  
բռնեցին , ու զանազան գոյներով հագած գեղե-  
ցիկ հանդերձներն հանելով խորունկ փոս մը նե-  
տեցին . Հոն նետուած ատենը կը զարմանար ու  
կը դողար , չգիտնալով թէ տակաւին ի՞նչ պիտի  
ընէին իրեն . կը մտածէր թէ նորէն պիտի դայի՞ն  
արդեօք զինքը մեռցընելու , և կամ պիտի թողէին  
հոն որ անօթութենէ մեռնէր :**

**Բայց եղբայրներն ի՞նչ ըրին . կանանչ խոտին  
վրայ նստեցան իրենց կերակուրն ուտելու , իբր թէ  
ամենեին բան մը ըրած չէին :**

Ո՞վ կը խորհի թէ անոնք այս անդթութիւնն  
իրենց եղբօրն ընելէն ետքը՝ կրնային նստել լոիկ,  
և ուրախութեամբ իրենց հացն ուտել. բայց մեղքը  
մարդուն սիրտը կը կարծրացնէ. ատելութենէ ան-  
գեթութիւն առաջ կու դայ։ Մէկ հօր որդիք երբ  
իրարու կը նախանձին, վայրենի ու պատառող դա-  
զաններու պէս իրար կը մնասեն։

Այն միջոցին Յովսեփայ եղբայրները տեսան որ  
հեռուէն ուղտերու վրայ հեծած մարդիկ կու դային։

Ասոնք Իսմայելացի և Մադիանացի վաճառա-  
կաններ էին, որ Դովթայիմի արևելեան կողմը  
Գաղաադ ըսուած երկրէն շատ համեմներ, անու-  
շահոտ իւղեր և ստաշին կը տանէին Եղիպտոս  
ծախելու։

Եղիպտացիք այնպիսի բաներ գործածել շատ  
կը սիրէին։

Այս դէպքն Աստուծմէ էր։ Աստուած այնպէս  
կարդադրած էր, որ այս վաճառականներն այն  
ժամանակը յիշեալ ճամբէն անցնելով. Յովսեփայ  
կեանքն ազտուելու պատճառ ըլլային, և անոր ե-  
րազը կատարուէր։

Հիմայ Յուղա ալ սկսաւ կսկծալ դՅովսէփ, ու  
ըսաւ եղբայրներուն, ի՞նչ օդուտ կայ մեզի մեր  
եղբայրը մեռցընելէն։ Արդարե կրնանք այնպիսի  
կերպով մը ընել որ ամենեին չիմացուի. բայց ին-  
չո՞ւ մեռցընենք մեր եղբայրը, մեր հօրը զաւակը։  
Եկէք, ծախենք անիկայ վաճառականներուն որ  
հիմայ հոս պիտի դան. անոնք հեռու տեղեր կը  
տանին անիկայ, և մենք կ'ազատինք անոր անտե-  
ղի երազներէն։

Յուղա միւսներն յորդորեց, և ամէնքը մէկտեղ  
դացին ու Յովսէփի փոսէն դուրս հանեցին։ Յով-  
սէփ անօթի, դողալով և վախնալով կը մտածէր թէ

արդեօք իրեն ի՞նչ աւելի գէշ բան պիտի ընէին :

**Վ**երջապէս իսմայելացիները մօտեցան, և Յովսէփայ եղբայրներն ոչխար մը կամ այծ մը ծախելու պէս անոր գինը կտրեցին, և անոր արտասուացնու աղաչանացը հակառակ՝ զանի այն օտարականներուն քսան կտոր արծաթի ծախեցին, անոնք աւ Եղիպտոս տարին անիկայ : **Ա**ստուած կ'ուղէր որ Յովսէփ հոն երթար . սակայն անոր չար եղբայրներն այս բանը չէին գիտեր . անոնք ամեննեին չէին կարծեր որ իրենց եղբօրն այսպէս ընելով իրենց մտքին մէջ ունեցած չար խորհուրդներն ՚ի գերե կը հանէին, և թէ այս կերպով իրենց եղբօրն առջին խոնարհելու և ամչնալու ճամբայ կը բանային :

**Ա**ստուած անոնց չար խորհուրդներուն յաղթեց, որ իր ընելու աղէկ բաները կատարէ : **Ա**ստուծոյ այսպէս ընելուն, այսինքն՝ պատահելու բաներն առաջուց գիտնալով, զանոնք տնօրինելուն և կարդադրելուն, նաև բոլոր մարդիկ և արարածները մարդասիրաբար և արդարութեամբ խնամելուն, կ'ըսենք **Ն**ախախնամութիւն **Ա**ստուծոյ :

**Ա**ստուծոյ նախախնամութիւնն է, սիրելի տղաք, որ ձեզի պատահելու բաները կը տնօրինէ ու կը կարգադրէ, ձեզ կը հոգայ, և բոլոր ձեր մխիթարութիւններուն ու երջանկութիւններուն պատճառ է :

**Ա**ստուծոյ նախախնամութիւնն էր որ Յովսէփը պաշտպանեց . և պիտի տեսնէք թէ **Ա**ստուած իր նախախնամութեամբն ի՞նչ զարմանալի կարդադրութիւններուն մը ըրաւ, որ Յովսէփայ վրայ իր իմաստուն խորհուրդներն ՚ի գործ դնէր :

**Ն**աև պիտի տեսնէք որ **Ա**ստուծոյ նախախնամութիւնն էր որ աւելի զարմանալի կերպով Յովսէփը խնամեց Եղիպտոսի մէջ, ուր անիկայ գա-

ցած էր իր սիրելի հօրմէն զատուելով, և իբրև դե-  
ղի օտար երկիր ծախուելով։

## ԳԼՈՒԽ Ե

Ուստի այս աշխատած գոյնելուն համար ։  
Յանձնելու եղանակներուն իրենց հայրը հաւաքացնելու նէ անի-  
կայ մեռաւ ։ Անոնց մէջ յանցանուց ։ Մեջը իտքեռնեն և  
ապանեն յառաջ իւ բերե։

Ռուբէն որ իր եղբայրները խրատած էր որ Յով-  
սէփը փոսը նետեն, որպէս զի այս կերպով կարող  
ըլլար անոր կեանքն ազատել ու նորէն իր հօրը դար-  
ձրնել։ Յովսեփայ Իսմայելացւոց ծախուած ժամա-  
նակն հոն չէր. ետքը եկաւ ու փոսին քով գնաց,  
բայց անիկայ հոն չգտաւ։ Այս բանիս վրայ Ռու-  
բէն շատ տրտմեցաւ և յուսահատեցաւ, ու իր  
հանդերձները պատռեց։ Այն ատեն սովորութիւն  
էր այն երկրին մէջ այսպէս ընել, և ասիկայ խորին  
տրտմութեան նշան էր. թերեւս Ռուբէն գիտնալով  
ըրաւ ասիկայ որ անոնց հասկըցնէ, թէ ի՞նչպէս  
սաստիկ տրտմած էր եղբօրը կորստեանը համար։  
Ռուբէն եղբայրներուն քով եկաւ, և սրտառուչ  
կերպով մը գոչեց, Տղան չկայ, և ես ուր երթամ։  
Եղբայրներն անոր պատմեցին թէ ի՞նչ ըրած էին  
Յովսեփայ. ան ալ տեսաւ թէ անոր ազատու-  
թեանը համար ջանք ընել անօդուտ էր, քանզի  
եթէ Իսմայելացւոց երթար, անհնարին էր Յով-  
սէփն անոնց ձեռքէն առնել, թէ և ստակը ետ տար.  
բաւական ստակ ալ չունէր իր եղբայրն ազատելու,  
և յոյս չկար որ եղբայրներն այն քսան կտոր ար-  
ծաթը Ռուբէնի տային Յովսէփը փրկելու. քանզի

եթէ այսպէս ընէին, իրենց վրէմն առած պիտի ըլլային։

Հիմայ իրենց յանցանքը ծածկելու համար սկըսան հնարք խորհիլ, որ իրենց հայրը չիմանար թէ Յովսէփի ինչ եղած էր։

Մեղք մը ուրիշ մեղքի մը պատճառ կ'ըլլայ. անոնք այս մեծ չարութիւնն ըրին իրենց անմեղ եղբօրը, ու հիմայ իրենց ծերունի հայրը խաբելու համար ստութիւններ կը հնարեն։

Սակայն յայտնի չէ թէ արդեօք Ռուբէն այն խարէութեան մէջ անոնց հետ միաբան էր, բայց բանը ծածկելով անոնց չարութեանը հաղորդ եղաւ, և այնպէս ցուցուց թէ կը վախնար իր պարտքը կատարելու։ Անոնք իրենց հայրը սա կերպով խաբեցին. ու մը մորթեցին, և Յովսէփայ գեղեցիկ հանդերձն անոր արեանը մէջ թաթխելով, իրենց հօրը տարին բոլորովին արիւնոտ և ըսին, Ասիկայ գտանք, բայց չենք գիտեր թէ քու որդւոյդ հանդերձն է։

Յակոբ իսկոյն ճանչցաւ հանդերձը, և ըսաւ, Զար գազան փարատած է զՅովսէփի. անտարակոյս որդիս կտոր կտոր եղած է։

Ի՞նչ մեծ տրտմութիւն եղաւ Յակոբայ այս բանը. անիկայ ասկէ աւելի սաստիկ ցաւ մը չէր կրնար ունենալ։ Ռաքէլ զոր այնչափ կը սիրէր՝ մեռած էր Բեթղեհեմի ճամբուն վրայ՝ Եփրաթա կոչուած տեղը. հիմա Յովսէփին ալ կորսնցուց, իր սիրելոյն Ռաքելայ ճնած զաւակը, որուն վրայ Յակոբ յոյս ունէր թէ իր ծերութեանը օդնութիւն և միսիթարութիւն պիտի ըլլար։

Յակոբ իր վիշտերուն դառնութեանը մէջ իր հանդերձները պատռեց և թանձր կտաւ մը հագաւ, ու շատ օր սուգ կ'ընէր և կու լար։

Անոր որդիքն ու աղջիկները կու գային զանի  
մխիթարել, բայց ան չէր ուզեր մխիթարուիլ,  
քանզի՝ Ես իմ որդւոյս սուզովը գերեզման պիտի  
երթամ, կ'ըսէր, և այնպէս Յովսեփայ համար  
կու լար։

Յակոբայ որդիքն իրենց հայրը կը մխիթարէին  
Յովսեփայ կորստեանը համար. Յովսեփայ՝ զոր ի-  
րենք իբրև գերի ծախած և հեռու երկիր մը  
զրկած էին։

Անոնք իրենց հօրը Յակոբայ ցաւակից ըլլալ  
կը կեղծէին, բայց ներքուստ կ'ուրախանային. կը  
շանային անոր վիշտը թեթևը ընել, բայց անոնց խա-  
բէութիւնն էր որ անոր վիշտն այնպէս սաստկա-  
ցընելու պատճառ էր։

Անոնք կ'երթային իրենց հօրն արտասուքը սըր-  
բելու, բայց անոնց ձեռքն էր իրենց ձերունի հայ-  
րը մխիթարել, և անոր տրտմութեան արտասուքն  
ուրախութեան դարձընել՝ Յովսէփ ողջ է ըսելով։

Ի՞նչ ապերախտ, խաբերայ և կեղծաւոր զաւակ-  
ներ էին. անոնք որչափ որ իրենց յանցանքը կ'ա-  
ւելցընէին, այնչափ ալ Աստուծոյ բարկութիւնն  
անոնց վրայ կը բորբոքէր։

Բոլոր այս բաներէն կրնաք տեսնել որ ձեզի  
շատ վտանգ կը բերէ չար խորհուրդներ և զգա-  
ցումներ ունենալ, և գէշ գործքեր ընել։

Այս վտանգին, և մանաւանդ Յովսեփայ եղ-  
բայրներն այն մեղքին մէջ ձգող սուտին և խա-  
բէութեան վրայ խորհեցէք։

Յիշեցէք որ յանցաւոր և չար վարք ունեցող  
մարդիկ միշտ կ'ուզեն և կը շանան իրենց յան-  
ցանքը ծածկել։ Դուք ալ միշտ այնպէս չէք ըներ,  
երբ գիտնալով չար բան մը կ'ըսէք կամ կ'ընէք։  
Բայց անոնք որ կ'ուզեն իրենց չարութիւնը ծած-

կել, կը ջանան որ հնարքով կամ սուտով մը ընեն  
այս բանը։

Ինչպէս գիտէք, հասարակօրէն կ'ըսուի թէ անոնք  
որ գողութիւն կ'ընեն՝ սուտ ալ կը խօսին։ Ասի-  
կայ ճշմարիտ է. քանզի գող մը ըրածը չխացընե-  
լու և չպատժուելու համար ստիպուած է ամէն  
տեսակ սուտ և խարէութիւն դործածել։

Ի՞նչ անարդ, վախկոտ և յանցաւոր են ստա-  
խօսները։ Սուտ խօսող շրթունքները Տէրոջ առ-  
ջև պիղծ են. բայց անոնք որ ճշմարիտ կը խօսին  
անոր ընդունելի են։ Ստախօսներն իրենց բաժին  
պիտի ունենան այն լճին մէջ որ կրակով և ծծրմ-  
բով կը վառի։

Ուրեմն վախցէք մեղք դործելէ, բոլոր չար-  
խորհուրդներէ, զգացումներէ և վարքէ. քանզի  
այս բաները մարդս խարէութեան և ստութեան  
կ'առաջնորդեն։

Այս վտանգներուն մէջ ամենսին ապահովու-  
թիւն չկայ. զԱստուած սիրելով և անոր հնագան-  
դելով միայն կրնայ մարդ ապահով ըլլալ։

Դուք զԱստուած սիրելու և անոր հնագան-  
դելու սիրտ ունիք. եթէ չունիք, յիշեցէք Յով-  
սեփայ եղբայրներուն ցցուցած չար կիրքերը՝ որոնք  
անոնց սրտին գէշութենէն յառաջ գալով, զանոնք  
այնպիսի ծանր մեղքի մէջ ձգեցին։



## ԳԼՈՒԽ Ը

Յանձնական ծախութեւը Պետական ներքինոյն ։ Անոնց պատշաճութեանը մեղք արդառութեան է՝ Ասպարուս նախականամունիւնը շուրջնելու համար ։ Պետական անեցած սերը Յանձնական վրայ ։ Մեր առ այլ անեցած պարագաներունիւնն Ասպարուս երկեւ շեւը կատարելու են ։

**Ք**անի մը հարիւր մղոն ճամբայ էր Պովթայիմէն, այսինքն՝ Յովսեփայ Իսմայելացւոց ծախուած տեղէն, մինչև Եղիպտոս, ուր անիկայ տարուեցաւ ։ Աղէկ է որ այն տեղերը ձեզի ցուցուին աշխարհացոյցի վրայ, նաև Միջագետք՝ ուստի Յակոբ իր ընտանեօքն եկած էր, Քերրոն՝ ուր անիկա գտաւ իր հայրը Իսահակ, և Սիւքէմ կամ Սուքար՝ ուր Յովսեփայ եղբայրներն իրենց հօրը ոչխարներն ու այծերը կ'արածէին, ուր զրկուած էր և Յովսէփ իր եղբայրներուն վրայ տեղեկութիւն առնելու ։

Եղիպտոս մեծ երկիր մըն է Ափրիկէի մէջ, Կարմիր ծովուն արևմտեան կողմը ։ Հին ատենը շատ բազմամարդ էր, և անոր թագաւորները Փարաւոն կը կոչուէին որ տիրող կամ թագաւոր ըսելէ ։ Այս թագաւորները շատ հզօր էին ։ Շատ ալ զօրք ունենալով, ինչ որ կ'ուզէին կը հրամայէին. և այս պատճառաւ մարդիկ վախնալով կը հնազանդէին անոնց ։

Զօրքին պահապան կոչուած մասը թագաւորը կը պահպանէր ։ Ասոնք դահիճ ալ կը կոչուէին, քանզի երբ թագաւորը յանցանքի մը համար մէկը մահուան կը դատապարտէր, ասոնք կը մեռցընէին մահապարտը ։ Այս պահապանները հրամանատար մը ունէին՝ ինչպէս որ հիմայ ալ կը տեսնէք

որ ամէն խումբ զինուոր զօրապետ մը ունի որ  
անոնց կը հրամայէ : Յովսեփայ Եղիպտոս տարուած  
ատենը՝ յիշեալ պահապան զօրաց հրամանատարին  
անունը Պետափրէս էր : Ասիկայ պատուաւոր  
մարդ մըն էր . թագաւորին երկրորդը կը համար  
ուէր , մեծամեծ տուներու և երկիրներու տէր , և  
իր իշխանութեանը ներքեւ ունէր շատ պաշտօնեա  
ներ և ծառաներ :

**Երբ Իսմայելացիք Եղիպտոս հասան , զՅովսէփ**  
**Պետափրեսին ծախեցին :** Զենք գիտեր թէ քանիի  
ծախեցին զանի , բայց անտարակոյս իրենց տուած  
քսան կտոր արծաթէն շատ աւելի բան առին . անի  
կայ ծախու առած էին ստակ վաստկելու համար ,  
ինչպէս որ մարդիկ ապրանք կ'առնեն ու շահով  
կը ծախեն :

**Այսպէս խեղճ Յովսէփի իբրև գերի ծախուեցաւ ,**  
և հիմայ ալ օտար մարդու մը ձեռք ինկաւ օտար  
երկրի մէջ , իր տունէն , հօրմէն և բարեկամներէն  
հարիւրաւոր մղոն հեռու : Բայց պատճառ ունինք  
հաւտալու թէ Յովսէփի իր յոյսն **Աստուծոյ Վրայ**  
գրած էր , և անոր կ'աղաչէր ու միշտ անոր կը  
նայէր պաշտպանութեան և առաջնորդութեան  
համար . **Աստուածային նախախնամութեամբ եղաւ** որ  
**Յովսէփի թագաւորին պահապաններուն հրամա**  
**նատարին ծախուեցաւ , որպէս զի Աստուծոյ որո**  
**շումը և Յովսեփայ երազը կատարուէին :**

**Միրելի տղաք , կ'ուզեմ որ , Յովսեփայ պատ**  
**մութիւնը կարդալու ատեն միշտ նկատէք Աստու**  
**ծոյ նախախնամութիւնը :**

**Աստուածաշունչին պատմութենէն շատ սքան**  
**չելի բաներ պիտի սորուիք , որոնք Յովսեփայ**

ծախուելէն ու Եգիպտոս երթալէն յառաջ եկան։  
Պիտի տեսնէք թէ Աստուած ամէն բան իր նա-  
խախնամութեամբը կարգադրելով յառաջ կը տանի,  
և թէ՝ անոր խորհուրդները բարձր են և գործ-  
քերը զօրաւոր . և դուք ալ Յովսէսի պէս պիտի  
ըսէք . Ո՞վ կայ քեզի պէս, ո՞վ Տէր, ո՞վ կայ քե-  
զի պէս սրբութեան մէջ փառաւոր, գովութիւննե-  
րուն մէջ ահաւոր և հրաշքներ ընող :

Յովսէփ քիչ մը ժամանակ Պետափրեսի քով  
կենալէն ետքը՝ անոր սիրտը շահեցաւ, քանզի աշ-  
խատասէր էր, հաւատարիմ և բարի վարուք . անոր  
ինչ պաշտօն որ յանձնուէր, ճարտարութեամբ և  
իմաստութեամբ յառաջ կը տանէր : Աստուածա-  
շունչն աս բանին վրայ խօսելով կ'ըսէ . Անոր տէրը  
տեսաւ որ Տէրը անոր հետն է, քանզի ինչ որ ընէր  
Տէրը կը յաջողէր անոր ձեռքովը : Արդարև Սուրբ  
գիրքին մէջ Յովսեփայ համար ըսուածներէն յայտ-  
նի կը տեսնուի որ անիկայ Աստուծմէ կը վախնար .  
Պետափրէս ալ անոր բարի վարքը տեսնելով ան-  
տարակոյս կը սիրէր և կը պատուէր զանի :

Սիրելի տղաք, աղօթք ըրէք Աստուծոյ որ իր  
Սուրբ Հոգին ձեզի տայ, որ դուք ալ կարող ը-  
լաք Յովսեփայ օրինակին նմանել :

Դուք ալ պարտիք ձեր ծնողաց և ձեր վրայ  
իշխանութիւն ունեցող ուրիշ մարդոց հրամանները  
խոնարհութեամբ կատարել : Ասիկայ ձեր պարտքն  
է, և Աստուած կը պատուիրէ ձեզի այսպէս ընել .  
եթէ անկէ կը վախնաք պէտք է որ անոր հնազան-  
դիք . ան ալ միշտ ձեր պաշտպանն ու բարեկամը  
պիտի ըլլայ ինչպէս որ Յովսեփայ եղաւ :

## ԳԼՈՒԽ Թ

**Յ**ԱՆԵՔԱՅ ՎԵՐԱԿԱԿՈՒ ԴՐՈՒՅ ՊԵՏԱԺՐԵԱՅ ՄԱՆՅ ՎՐԱՅ ։  
ՊԵՏԱԺՐԵԱՅ ԻՆՉ ՍՈՐՈՇՆԵԱԾՆ ԱՆՈՐ ՔՈՐՅՈՒՅ ԵԼՅ ։ ԱՆԵԿԱՅ ԱՆ-  
ԱՆ-ՃԱՅ ԴԵՅ ԽԵՂ ՔՈՐՃԵԼՈՒ ԻԸ ՎԱՅԻՆԱՅ ։ ԿԵ ԴՐՈՎՐՈՒՅ Ե-  
ԲԱՆԱՄ ԻԸ ԴՐՈՒՅ ։ ԲԱՆԱՄԻՆ ՁՉ ԱՆՈՐ ԲԱՐԵ ՎՈՐԻՑ ։ ԲՈՎՐ ԲԱՆ-  
ԱՄԻՆ ՎՐԱՅ ԱՆԵԿԱՅ ԻՆԱԱԾԻՑ ։ ԱՆԱՊՈՒՅ ՁԵՐ ՀԵՄ ԱՆԵԿԱԱԾԻ-  
ՆԻ ԵՐՋԱՆԻՐ-ՌԵՆԵՆ ։

**Յ**ՈՎՍԵՎԻԱՅ ՎԱՐՔՆ ԱՆՈՐ յանձնուած պաշտօննե-  
րուն մէջ այնպէս աղեկ էր, որ ՊԵՏԱՎԻՐԵՍ ուրիշ  
շատ գործքեր ալ յանձնեց անոր. և վերջապէս  
անոր վրայ ունեցած վստահութիւնն այնչափ աւել-  
ցաւ, որ զանի իր տանը վրայ վերակացու դնելով  
ինչ որ ունէր անոր ձեռքը յանձնեց ։

Ուստի Յովսէփ հիմայ ՊԵՏԱՎԻՐԵՍԻ բոլոր գործ-  
քերուն վերակացու ըլլալով, անոր ծառաներուն  
կը հրամայէր, և ամէն բան կը տնօրինէր, ինչպէս  
որ Աստուածաշունչը կը պատմէ ըսելով թէ՝ ՊԵ-  
ՏԱՎԻՐԵՍԻ ինչ որ ունէր չեր գիտեր, կերած հացէն  
զատ։ Ամէն բան Յովսէփի իր խելքովն ու ճարտա-  
րութեամբը կը հոգար իր տէրոջը և անոր ընտանի-  
քին համար՝ առանց մէկու մը հարցընելու ։

Իր այսչափ յաջողութեանը մէջ չմոռցաւ իր  
մարդասէր Աստուծոյն խնամքը և իր առ նա ու-  
նեցած պարտականութիւնը, այլ մանաւանդ ևս ա-  
ռաւել կը վախնար Աստուծմէ, և անոր կը հնա-  
զանդէր։ Յովսեփիայ երկիւղածութիւնը սա դիպ-  
ուածէն ալ յայտնի կը տեսնուի։ Անիկայ քիչ ժա-  
մանակ ետքը փորձուեցաւ դէշ գործք մը ընելու-  
սակայն դէմ կեցաւ այն փորձութեան, և ցուցուց  
թէ ամէն բանէ աւելի Աստուծոյ դէմ մեղանչելէ

կը վախնար։ Պետափրեսի կինն էր որ այն մեղքը  
գործելու հրաւիրեց զՅովսէփ։ Ասիկայ չար կին մը  
ըլլալով սկսաւ զՅովսէփ սիրել որպէս թէ իր այրն  
էր։ Անիկայ արդէն այր մը ունէր և աղէկ գիտէր  
որ մեծ մեղք էր Յովսէփն ալ իրեն այր ընել, և  
պահանջել անկէ որ զանի իրըն կին սիրէ։ Քանզի  
եթէ ամուսնացեալ մարդ մը կամ կին մը այսպէս  
վարուի ուրիշ մարդու մը հետ, որ իր ամուսինը  
չէ, Աստուծոյ եօթներորդ պատուիրանին դէմ  
կը գործէ, որ կ'ըսէ, «Մի շնար»։ Աս կը նշանա-  
կէ թէ ամուսնացեալ մարդ մը ուրիշ կին պիտի չու-  
նենայ, բաց անկէ որու հետ ամուսնացած է. Նոյն  
պէս ամուսնացեալ կին մը իր ամուսինէն զատ ու-  
րիշ այր պիտի չունենայ։ Այս պատուերին հակա-  
ռակ գործողը կամ գործելու դիտաւորութիւն  
ունեցողը շնութիւն կ'ընէ, ինչպէս որ մեր Տէրը  
մեղի կը սորվեցընէ, և շատ մեծ մեղաւոր կ'ըլլայ  
Աստուծոյ առջեւ։

Պետափրեսի կինը ջանաց զՅովսէփ համոզել Աս-  
տուծոյ դէմ այն մեղքը գործելու, և Յովսէփ եթէ  
անոր մտիկ ընէր, Աստուծոյ հրամանն աւրելով  
սոսկալի չարութիւն մը ըրած պիտի ըլլար։

Բայց այն չար կինը նյաջողեցաւ, քանզի Յով-  
սէփ հաստատ կամք ունէր Աստուծոյ հնազան-  
դելու։ Այս մեծ չարութիւնն ի՞նչպէս կրնամ  
ընել, ըստ Յովսէփի, և Աստուծոյ դէմ մեղանչել։  
Ան ատեն Պետափրեսի կնոջ սէրն ատելութեան  
դարձաւ։ Անիկայ սկսաւ ամէն կերպ անիրաւու-  
թիւն ընել Յովսէփայ։ Անոր դէմ զրպարտութիւն  
ըրաւ որպէս թէ Յովսէփ ուզած էր անիկայ իրեն  
կին ընել։ Պետափրէս կնոջը խօսքին հաւատաց և  
շատ բարկանալով զՅովսէփ բանտ մը դնել տուաւ,  
ուր թագաւորին կամացը կամ երկրին օրէնքնեւ

ըուն դէմյանցանք գործողները կը դրուէին։ Աստուածաշունչին մէջ կը կարդանք թէ հոն բանտարկեալներ կապուած էին. թերևս Յովսէփ ալձեռուըներէն և ոտուըներէն կապուած մութ սենեակի մը մէջ դրուած էր։

Ինչ մեծ դժբախտութիւն էր անօդնական և անպաշտպան երիտասարդին համար, այսպէս չար կնոջ մը զրպարտութեամբ իր տիրոջ երեսէն կյնալովյանիրաւի պաշտօնէն զրկուիլ ու բանտ ալ դրուիլ։

Սակայն եթէ Յովսէփ մարդոցմէ բարեկամ չունէր, վերն ամենակարող պահապան ու բարերար մը ունէր։

**Արդարև Աստուած** իր իմաստուն նախախնամութեամբն այնպէս տնօրինեց որ **Պետափրեսի** կնոջ զրպարտութեամբը Յովսէփայ բանտ դրուիլը միջոց ըլլար անոր ապագայ յաջողութեանն ու մեծութեանը, և այնպէս երազն ալ կատարուէր։

Շատ մարդիկ եթէ Յովսէփայ պէս իրենց եղբայրներէն ծախուելով հեռու երկիր տարուէին, և հոն յանիրաւի ամբաստանուելով բանտ դրուէին, շատ գանգատներ պիտի ընէին **Աստուծոյ դէմթէ** անողորմ և անիրաւ է, քանզի թողուց որ այն նեղութիւններն անոնց վրայ գան։

Սակայն Յովսէփ այսպէս չըրաւ։ Անիկայ ինչպէս որ յաջողութեան մէջ չհպարտացաւ, այնպէս ալ նեղութեան մէջ համբերութիւնը չկորսնցուց։

Բանտապետը տեսաւ **Յովսէփայ** բարի զգացումներն ու բարի վարքը, **Աստուած** ալ որ բոլոր մարդոց սիրտերուն կը տիրէ՝ անոր սիրտը շարժեց որ **Յովսէփայ** մարդասիրութիւն ցուցընէ, ինչպէս որ իրօք ալ եղաւ։ Բանտապետը բանտին կառավարութիւնն ու տնօրինութիւնը բոլորովին **Յովսէփայ** յանձնեց։

Աս պաշտօնը նոր և դժուարին պաշտօն մըն էր  
Յովսեփայ պէս երիտասարդի մը համար։ Աը կար-  
ծուի թէ անիկայ այն ատեն քսան և եօթը տարե-  
կան էր բայց իր տարիքին նայելով մեծ իմաստու-  
թիւն, բարեպաշտութիւն և մոքի հաստատու-  
թիւն ունէր։

Բանտին վերաբերեալ գործքերը Յովսէփի այնչափ  
իմաստութեամբ յառաջ տարաւ՝ որ Աստուածա-  
շունչին մէջ կը կարդանք թէ «Բանտին պահա-  
պանը չէր նայեր Յովսեփայ ըրած բանին, ինչու որ  
Տէրն անոր հետ էր ու ինչ որ կ'ընէր Տէրը կը յա-  
ջողէր»։

Տէրն անոր հետ էր, և ասիկայ ի՞նչ երջանկու-  
թիւն էր անոր։ Դուք մեծ մխիթարութիւն կ'իմա-  
նաք, երբ ձեր հայրը և մայրը ձեր հետ է. մանա-  
ւանդ երբ տրտմութեան կամ հիւանդութեան մէջ  
էք և կարօտ էք մէկուն որ ձեզի խրատ տայ և հոգ  
տանի։ Որչափ անդամ ձեր ծնողքը ձեր քովն ը-  
լալով ձեր վախն ու տրտմութիւնը հանդարտե-  
ցուցած են։

Քանի քանի անդամ ձեր տկար և շուարեալ ժա-  
մանակը, ձեր գլուխն անոնց վրայ դնելով օգնու-  
թիւն փնտռած էք։ Տղաք այսպիսի օգնականնե-  
րու միշտ կարօտ են։ Արդ հայր մը ունիք դուք  
երկինքը որ ամենիմաստ ու ամենազօր է, և կ'ու-  
զէ որ միշտ զինքը սիրէք և իրեն հնազանդիք։  
Անիկայ Աստուածաշունչին մէջ կը սորվեցնէ թէ  
ինչ պէտք է ընել զանի հաճեցընելու համար։

Ամէն բանէ առաջ Աստուած ձենէ կը պահանջէ  
որ սրտով տրտմիք ձեր մեղքերուն վրայ, անոնցմէ  
ետ կենաք ու փրկութեան համար Յիսուսի Քրիս-  
տոսի ապաւինիք. և կը հրամայէ ձեզի աղօթքով  
ինդրեւ զնողին Սուրբ, որպէս զի անոր շնորհքովը

կարող ըլլաք Աստուծոյ ուղածը կատարել։ Եթէ  
այսպէս աղօթք ընէք, Աստուած կը խոստանայ իր  
Սուրբ Հոգին տալ։ Ուրեմն պարտիք երթալ այս  
երկնաւոր Հօրը ձեր մեղքերուն համար տրտմած,  
ու անոնց բոլորը խոստովանելով խնդրել որ Փրիս-  
տոսի միջնորդութեամբը ներէ ձեզի ձեր մեղքերը,  
և իր Սուրբ Հոգին ձեզի տայ որ, կարող ըլլաք  
զինքը սիրել ու իրեն հնազանդիլ։

Եթէ այսպէս ընէք, Տէրը ձեզի հետ պիտի ըլ-  
լայ, ինչպէս որ Յովսեփայ հետ էր, և ձեզի ձեր  
երկրաւոր բարեկամներէն աւելի հոգ պիտի տանի,  
իր նախախնամութեամբը պիտի պաշտպանէ զձեզ  
յաջողութեան մէջ փորձանքներէ, ու ձախորդու-  
թեան մէջ ձեզի պիտի օդնէ։ Բոլոր ձեր գործ-  
քերուն մէջ ձեր հետ պիտի ըլլայ ձեր աղէկու-  
թեանը համար։ և վերջապէս ձեզ երկինքն իր և  
իր որդւոյն Յիսուս Փրիստոսի քով պիտի առնէ  
ուր են բոլոր հաւատացեալք։ և հոն ձեզ յա-  
ւիտեանս մեղքէ ու նեղութենէ ազատ պահելով  
գիտութեան, բարութեան և երջանկութեան մէջ  
պիտի յառաջացնէ։

## ԳԼՈՒԽ Ժ

Աստուծոյ վախն բնշ է և բնշ է անոր օդուառը։ Մար-  
տահայեան երաշը։ Յունեէի այն երաշը և մէնէ։

**Թ**երեւ զարմանաք թէ Յովսեփայ պէս պան-  
դուխտ երիտասարդ մը, ինչպէս քիչ ժամանակի  
մէջ Պետափրեսին ու բանտապետին վստահութիւնը  
կատարելապէս ստացաւ, թէպէտ անիկայ Պետա-

փրեսի քով ծառայ էր, միւսին քովս ալ բանտարկեալ մը :

Բայց Յովսեփայ այսպէս յառաջանալուն պատճառն անոր Աստուծմէ վախնան էր : Անիկայ ուրոր ըլլար և ինչ բան որ ընէր՝ կը յիշէր Աստուծոյ ներկայութիւնը, և կը խորհէր թէ հաշիւ պիտիտար անոր բոլոր իր գործքերուն համար :

Ասոր մէկ օրինակը տեսաք վերը : Երբ Յովսէփ Պետափրեսի կնոջմէն փորձուեցաւ մեղք գործելու, ըսաւ անոր, Ի՞նչպէս կրնամ այս մեծ չարութիւնը ընել և Աստուծոյ դէմ մեղանչել :

Աստուծոյ վախէն աւելի զօրաւոր բան մը պիտի չկրնաք գտնել որ ձեզ մեղք գործելէ պահէ ու ձեր պարտքը կատարելու քաջալերէ : Աստուծոյ վախը սիրով միացեալ վախ մըն է, և անիկայ ունեցող տղայ մը միշտ կը ջանայ մեղքէ ետ կենալ և իր ամէն պարտաւորութիւնը կատարել :

Կարդացէք Աստուածաշունչը և ջանացէք Աստուծոյ և անոր մեծութեանն ու բարութեանը վրայ տեղեկութիւն ստանալ որ տեսնէք թէ որչափ պատճառ ունիք այսպիսի փառաւոր և ողորմած էակ մը սիրելու և անոր հնազանդելու :

Աղօթք ըրէք որ Աստուծմէ վախնաք և անիկայ սիրէք ամէն ժամանակ : Միտք բերէք որ ան միշտ ձեր քովս է, և բոլոր ձեր խորհածին, ըսածին ու ըրածին համար անոր հաշիւ պիտիտարք :

Ան ատեն Յովսեփայ պէս միշտ Աստուծոյ պաշտպանութեանը ներքեւ եղած պիտի ըլլաք . գէշ մարդիկ ձեր բարեգործութեան պատճառը տեսնելով ձեզ պիտի յարգեն, աղէկ մարդիկ ալ ձեզ պիտի սիրեն, և դուք այն հաստատուն ճամբուն մէջ քալելով ինչպէս որ Յովսէփ ըրաւ թէ յաջու

զութեան և թէ ճախորդութեան մէջ, ամենուն  
համարումն ու վստահութիւնը պիտի շահէք :

**Աւելի** պիտի յայտնուին աս ճշմարտութիւնները  
Յովսեփայ պատմութեանը մէջ, ինչպէս որ պիտի  
տեսնենք :

**Յովսէփ** բանտին կառավարութիւնն իր վրայ  
առնելէն քիչ ժամանակ ետքը երկու մարդ բե-  
րուեցաւ հոն, որոնց վրայ կ'ուզեմ քիչ մը ծանօ-  
թութիւն տալ :

**Մէկը** Եղիպտոսի թագաւորին մատուակա-  
պետն էր. այս մարդը թագաւորին խմած գինւոյն  
հող կը տանէր, և թերեւս թագաւորին գինւոյն բա-  
ժակն ինք անոր կու տար : Երբեմն գեղեցիկ հա-  
սուն խաղողները կ'առնէր, և անոնց ջուրը կը քա-  
մէր բաժակին մէջ, ու թագաւորին կու տար խմե-  
լու : Հին ժամանակները Եղիպտոսի և **Ասիոյ** մէջ  
թագաւորները մատուակներ ունէին, և մատուա-  
կապետութիւնը մեծ պաշտօն մը համարուած էր :

**Միւս** մարդը թագաւորին հացագործապետն  
էր, որ անոր կերած հացին և ուրիշ կերակուրնե-  
րուն վերակացու էր . ասոր պաշտօնն ալ միւսին  
պաշտօնին պէս շատ պատուաւոր էր :

**Պատճառ** ունինք ըսելու թէ այս մարդոց եր-  
կուքն ալ բարձր աստիճանի մարդիկ էին . քանզի  
**Դիոդոր** **Սիկիլիացի** հին պատմագիրը Եղիպ-  
տոսի վրայ դիրքին մէջ կ'ըսէ թէ թագաւո-  
րին պաշտօնատարները (ինչպէս մատուակապետն  
ու հացագործապետը) ազնուականաց կարգէն էին :

**Կ'երեկի** թէ յիշեալ երկու անձինք սաստիկ բար-  
կացուցած էին թագաւորը որ զանոնք դնել տուաւ  
Յովսեփայ եղած բանտը, որ թագաւորին դիկնա-  
պահներուն հրամանատարին **Պետափրեսի** տանը  
մէկ կողմը, և անոր իշխանութեանը տակ էր :

**Պետափրէս պատուիրեց Յովսեփայ անոնց հոգ  
տանիլ:**

Քիչ ժամանակ բանտին մէջ կենալէն ետքը՝ եր-  
կուքն ալ միւնոյն գիշերուան մէջ մէյմէկ երազ  
տեսնելով, շատ զարմացան ու տրտմեցան։ Երբ  
Յովսէփի առաւօտուն գնաց զանոնք տեսնելու, զա-  
նոնք տրտմած գտնելով պատճառը հարցուց, ա-  
նոնք ալ ըսին թէ Երազներ տեսանք, և անոր հա-  
մար շատ տրտմած ենք, քանզի չկայ մէկը որ զա-  
նոնք մեզի մեկնէ։

Յովսէփի անոնց ըսաւ, Աստուծոյ կը վերաբերի  
ձեր երազներուն մեկնութիւնը. բայց կ'աղաչեմ  
որ զանոնք ինծի պատմէք։ Ասկէ կը տեսնուի թէ  
Յովսէփի, որ քանի մը երևելի երազներ տեսած էր՝  
այն մարդոց մէկն էր որոնց Աստուած հին ատենը  
կարողութիւն տուած էր երազներու մեկնութիւն  
տալու, և առյապա ըլլալու բաներն առաջուց  
գուշակելու։

Մատուուակապետն իր երազն այսպէս պատմեց  
Յովսեփայ։ Երազիս մէջ տեսայ խաղողի որթ մը,  
որ երեք ոստ ունէր. քանի մը ըոպէի մէջ ոստերը  
մեծցան և շուտով ծաղկեցան ու խաղողները հա-  
սան. և թագաւորին բաժակն իմ ձեռքս ունենա-  
լով այն խաղողները քաղելով քամեցի բաժակին  
մէջ ու թագաւորին տուի։

Յովսէփի անոր երազին սա մեկնութիւնը տուաւ  
Երեք ոստերն, ըսաւ, երեք օր կը նշանակեն. այն  
երեք օրուան մէջ թագաւորը քեզ պիտի յիշէ և  
նորէն առջի պաշտօնիդ մէջ պիտի դնէ, ու դուն  
դարձեալ անոր մատուուակապետը պիտի ըլլաս։

Անիկայ շատ ուրախացաւ այս մեկնութեան վրայ,  
յուսալով թէ քիչ ժամանակէն բանտէն ելլելով  
նորէն թագաւորին շնորհքը պիտի վայելէր։

## ԳԼՈՒԽ ԺԱ

Հայագործին երազն ու անոր մէհնութիւնը : Երազներուն կապարանիւը Յովսէդայ առուած մէհնութեանը համեմատ : Աղեշակաբութեան մէպը :

**Յովսէփի** մատուակապետին երազը մեկնելէն ետքը, անկէ շնորհք մը խնդրեց : Երբ, ըստ, պաշտօնիդ մէջ հաստատուելով թագաւորին հետ բարեկամանաս, կ'աղաչեմ որ մարդասիրութիւն ընելով ինծի համար խօսիս **Փարաւոնին**, որ զիս այս բանտէն հանէ . քանզի ես Եբրայեցւոց երկրէն եմ, և այս բանոը դրուած եմ յանիրաւի :

**Յովսեփիայ** մատուակապետին երազին տուած մեկնութենէն քաջալերուելով հացագործապետը, ինքնալիր երազը պատմեց :

Երազիս մէջ, ըստ, երեք ճերմակ սակառի տեսայ գլխուս վրայ . վրայի սակառւոյն մէջ թագաւորին համար եփուած ամէն տեսակ կերակուրներէն կար . տեսայ նաև որ թռչունները գալով այն կերակուրներէն կ'ուտէին :

**Աս** ըսելէն ետքը՝ անհամբերութեամբ կը սպասէր թէ **Յովսէփի** ինչ մեկնութիւն պիտի տար երազին : **Յովսէփի** ըստ անոր, **Այն** երեք սակառին երեք օր կը նշանակեն . ուստի երեք օր ետքը թագաւորը քեզ պիտի կախել տայ և թռչունները գալով մարմինդ պիտի ուտեն :

**Յովսեփիայ** այս երազներուն մեկնութիւնները տալէն երեք օր ետքը **Փարաւոնին** ծննդեան օրն էր : **Այն** օրը մեծ ուրախութիւն կ'ընէր թագաւորն իր տանը մէջ, և ըոլոր ազնուականներուն,

հրամանատարներուն ու գործակալներուն խնջոյք  
կու տար։ Այս հանդէսին ատենը հրաման ըրաւ  
Փարաւոն որ մատուռակապետը բանտէն արձա-  
կուելով, նորէն առջի պաշտօնին մէջ հաստատուի.  
և իսկոյն հրամանը կատարուեցաւ։

Նոյն օրը հացագործապետն ալ կախուեցաւ, և  
անոր մարմինը կախաղանին վրայ թողուեցաւ երկ-  
նից թռչուններուն կերակուր ըլլալու։

Այսպէս Յովսէփ այն երազներուն մեկնութիւն-  
ները տալով իր ճշմարիտ մարդարէ մը ըլլալը հաս-  
տատեց։ Ասիկայ կը ցուցընէ որ Աստուած անոր  
սորվեցուցած էր երազի մեկնութիւն տալ. քանզի  
միայն Աստուած և այն մարդիկը՝ որոնց Աստուած  
կը սորվեցընէ, ապառնի գիպուածներու վրայ գի-  
տութիւն ունին։

Աստուածաշունչին մէջ շատ մարդարէութիւն-  
ներ կան. այսինքն՝ ապագայի մէջ պատահելու  
բաներուն գուշակութիւնը։ Այսպիսի գուշակու-  
թեանց կատարուիլը կը ցուցընէ թէ անոնք Աս-  
տուծմէ յայտնուած են, և թէ Աստուածաշունչն  
ալ որ այն մարդարէութիւնները կը պարունակէ՝  
Աստուծոյ յայտնութիւնն է։

Աստուածաշունչն կը սորվինք որ մատուռա-  
կապետն իր աստիճանին հասնելէն ետքը՝ մոռցաւ  
գՅովսէփ, անոր բանտին մէջ ըրած մարդասիրու-  
թիւնը և երազին մեկնութեամբը տուած ազատու-  
թեան ուրախութիւնը, նաև Յովսէփայ իր ազա-  
տութեանը նկատմամբ ըրած աղաչանքը։

Մատուռակապետին զանցառութիւնն անոր մեծ  
ապերախտութիւնն ու անհոգութիւնը կը ցուցընէ։

Աւաղ, այսպիսի մարդիկ ո՞րչափ կան աշխար-  
հիս մէջ։ Ասոնք իրենց օդուտը միայն կը փնտուեն,  
ուրիշներուն օդուտը բոլորովին կը մոռնան։ Տղաք

ալ երբեմն իրենց ծնողաց տարած խնամքը կը մոռնան, զանոնք կը թողուն անոնց հիւանդութեան և ծերութեան ատենը, և ասով իրենց ապերախտ ու չար սիրտ ունենալը կը ցուցընեն։ Աիրելի տղաք, դուք այնպիսի չար սիրտ ունիք, թէ ընդհակառակն ձեր ծնողաց երախտիքը յիշելով զանոնք կը սիրէք, կը հոգաք, և կը ջանաք ըստ կարի որ անոնք հանդիսաւ և միսիթարութիւն ունենան։

**Մ**տիկ ըրէք թէ Աստուած ինչ կ'ըսէ Աստուածաշունչին մէջ. և այն խօսքը թող ձեր սրտին մէջ տպաւորուի։ “Անիծեալ ըլլայ ան՝ որ իր հօրը կամ մօրը դէմ հայհոյութիւն կ'ընէ, և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ”։ Բ Օքն. Իէ. 16։

---

## ԳԼՈՒԽ ԺԲ

Փարա-ռնի Երաշները։ Յուշեֆայ Փարա-ռնի Շահնշահնը։  
Անոր Էտնասընունիւնները։

**Մ**ատուակապետն իր պաշտօնին համելէն իբր երկու տարի ետքը՝ Յովսէփ տակաւին բանտն էր, քանզի, ինչպէս ըսինք, յիշեալ պաշտօնատարը զանի բոլորովին մոռցած էր։ Այն միջոցին Փարաւոն երկու երազ տեսաւ մէկ գիշերուան մէջ։

Կը տեսնէր որ իբր թէ Նեղոս գետին քովերը կը պտըտէր, և յանկարծ եօթը գէր ու գեղեցիկ կովեր գետէն ելլելով սկսան արածուիլ հոն մօտը գտնուած դաշտերուն մէջ։ Ետքը ուրիշ եօթը տկար և տղեղ կովեր ելլելով, գէրերուն քով դաշին և անոնց վրայ յարձակելով զանոնք կերան, բայց տղեղ ու նիհար մնացին ինչպէս որ առաջ էին։

Թագաւորն արթնցաւ, և յետոյ նորէն քնանաւ լով ուրիշ երազ մ'ալ տեսաւ։ Յորենի եօթը գեղեցիկ և լեցուն հասկեր բուսան ծղօտէ մը։ անոնց ետևէն եօթը թոռմած ու վտիտ հասկեր բուսնելով միւս լեցունները կերան։ Փարաւոն շփոթեցաւ այս երազներուն համար, քանզի խորհեցաւ թէ թերեւս անոնք նշանակութիւն մը ունէին, զոր շատ հարկաւոր էր իրեն դիտնալ։ Ետքը Եգիպտոսի բոլոր մոգերն ու իմաստունները ժողվելով անոնցմէ իր երազներուն մեկնութիւնը կը խնդրէր։

Եգիպտացւոց մոգերն ու իմաստունները կը պարծենային թէ երազներ մեկնելով ապագայ դիպուածներ կրնան գուշակել։ Գիտէին թէ իրենց ըսածները սուտ էին, բայց շատ անգամ ուրիշները կը խաբէին անոնց երազներուն սուտ մեկնութիւններ տալով։ Սակայն այս անգամ անոնցմէ մէկը չհամարձակեցաւ թագաւորին երազներուն մեկնութիւն տալ։ այլ ըսին թէ բոլորովին տարակուսանաց մէջ են, և չեն դիտեր թէ ինչ կը նշանակեն այն երազները։ և ասոր վրայ թագաւորն առաւել ևս նեղացաւ։

Այս առթիւ թագաւորին մատուակապետը յիշեց զՅովսէփ, անոր աղաչանքը, և իր խոստումը թագաւորին միջնորդ ըլլալու անոր ազատութեանը համար։ Կ'երևի թէ մատուակապետին խիղճը զանի տանջեց Յովսեփայ դէմ ապերախտ գտնուելուն համար։ քանզի թագաւորին սա խօսքը ըսելէն ետքը թէ Ես իմ յանցանքս կը յիշեմ այսօր, սկսաւ Յովսեփայ պատմութիւնն ընել։ Երբ, ըսաւ, երկուքս, ես ու հացագործապետը, բանտն էինք, երազ տեսանք։ Յովսէփ անունով մէկը որ հոն կը գտնուէր՝ անոնց ստոյգ մեկնութիւնները մեզի տուաւ։



WHITNEY



Թագաւորն Յովսեփայ այս ճարտարութիւնը  
լսելով՝ հրաման ըրաւ որ անիկայ շուտով իր առ-  
ջևը բերուի։ Յովսէփ հանդերձները փոխելով և  
ուրիշ պէտք եղած պատրաստութիւնները տեսնե-  
լով, Փարաւոնին ներկայացաւ։

Փարաւոն պատմեց անոր իր երազները, և ըստ .  
Ա ոք կրցաւ ասոնց մեկնութիւնը տալ. լսեցի որ  
դուն կարող ես այդ բանն ընել։

Թագաւորը կը կարծէր թէ Յովսէփ իր ճար-  
տարութեամբը կամ հանճարովը երազ կը մեկնէր,  
ինչպէս որ մոգերն ու իմաստունները կը պնդէին  
իրենց համար։

**Չէր** գիտեր թէ ճշմարիտ **Աստուած** միայն կը ը-  
նայ երազներ մեկնելու կարողութիւնը տալ մարդոց։

Յովսէփ կը այնպիսի ճամբայ մը բռնել որ  
թագաւորը կարծէր թէ անիկայ իր իմաստութեամբը  
կու տար երազներու մեկնութիւնը, և պատիւ գըտ-  
նել թագաւորին և բոլոր Եղիպտացւոց քով։

Բայց անիկայ **Աստուծմէ** կը վախնար, և չէր  
ուզեր որ ուրիշներն իրեն համար կարծեն թէ իր  
իմաստութեամբը կ'ընէր այն բանը. քանզի գիտ-  
նալով որ **Աստուծմէ** ունէր այն կարողութիւնը  
բոլոր փառքն անոր կ'ընծայէր։

Ուստի պատասխան տուաւ **Փարաւոնին** թէ,  
կարող չեմ այդ բանն ընելու. բայց **Աստուած** **Փա-**  
**րաւոնին** խաղաղութեան պատասխան մը պիտի տայ։

**Աղէկ** միտք պահեցէք Յովսեփայ այս խօսքը,  
այսինքն թէ երազին տալու մեկնութիւնն իրմէ  
չէր։

Երբեմն կը պատահի որ մէկը ուրիշին ըրած  
աղէկ մէկ գործը ձեզի կ'ընծայէ. կամ մեծ գո-  
վութիւն կ'ընդունիք գործի մը համար զոր ու-  
րիշներու օգնութեամբ ըրած էք. և կամ ուրիշ

ները կը կարծեն թէ դուք գիտէք այս ինչ բանը  
որուն ամենևին տեղեակ չէք : Դուք այս բաները  
լսելով ճշմարտութիւնը չէք խոստովանիր, և այս-  
պէս յանիրաւի փառաւորուելով, կը հաճեցընէք  
ձեր հպարտութիւնը և ուրիշները կը զրկէք իրենց  
իրաւացի պատուէն :

**Այս** բանը շատ գէշ է և ես ասիկայ շատ անդամ  
դպրատան տղոց վրայ տեսած եմ : **Տասներորդ**  
պատուիրանքը կ'արգիլէ մեզ ուրիշներուն ունե-  
ցածին աչք տնկելու : **Ուժերորդ** պատուիրանքն ալ  
կ'արգիլէ դողութիւնը . ուրիշին պատիւը յափշտա-  
կելն ալ տեսակ մը դողութիւն է : **Ապա** երբ այս-  
պիսի բանի մը մէջ փորձուիք, **Յովսեփայ** վերո-  
յիշեալ խօսքը միտք բերէք . և միշտ ազատաբար  
ճշմարիւը խոստովանեցէք :

**Զեր** գիտցածը կամ չգիտցածը, ըրածը կամ  
չըրածը, և ուրիշներուն ձեզի ըրած օգնութիւնը,  
վերջապէս ամէն բան չիտակ ըսէք : **Յիշեցէք** որ  
թէպէտ այնպիսի ժամանակ ձեր ընկերը կրնաք  
խարել, ինչպէս որ **Յովսէփ**, եթէ ուզէր, կրնար  
զՓարաւոն խարել, բայց **Աստուած** չէք կրնար  
խարել . քանզի անիկայ ոչ միայն ձեր խօսքերը և  
գործքերը, ձեր գաղտնի խորհուրդներն ու զգա-  
ցումներն ալ գիտէ :

**Զեր** վրայ բարձր համարում մի ունենաք . թող  
մարդ խոնարհութեամբ իրմէ աւելի ուրիշը պա-  
տուէ : **Տէրն** ամբարտաւաններուն հակառակ է,  
խոնարհներուն շնորհք կու տայ :

## ԳԼՈՒԽ ԺԳ

Յաշե՞ն Փարաւոնի երազները իւ մէնէ Եգիպտոսի վրայ  
կառավար իւ տրուեն Անոր նոր անունը և ամսանունիւնը ։  
Ճշմարտունիւն իսօնելը և Աստուծոյ ու մարդոց վայելով  
պատրիւն անոնց ընծայելը առոյժ մշջուներ են ուրէշներուն վըս-  
պահունիւնը ադանալու ։

**Փ**արաւոն իր երազները Յովսեփայ պատմելէն  
ետքը՝ Յովսեփին սա պատասխանն առաւ ։ Փարա-  
ւոնի երազները մէկ են. Աստուած անոր յայտնեց  
թէ ինչ պիտի ընէ ։ Յովսէփ ասոնք ըսելէն ետքը  
երազներուն մեկնութիւնը տուաւ սա կերպով ։

Այն եօթը գեղեցիկ կովերն ու ցորենի եօթը  
լեցուն հասկերն, ըսաւ, կը ցուցընեն թէ բոլոր  
Եղիպտոսի մէջ եօթը տարի առատութիւն պիտի  
ըլլայ. այս եօթը տարուան մէջ այս երկիրն ամէն  
տեսակ բերք առատօրէն պիտի բուսցընէ, մարդոց  
և անոնց պահած անասուններուն համար պէտք  
եղածէն շատ աւելի ։

Իսկ եօթը տկար և վտիտ կովերը որ եօթը  
գեղեցիկ ու գէր կովերը կերան, ու եօթը չոր-  
ցած հասկերը որ լեցունները կերան՝ կը ցուցը-  
նեն թէ եօթը տարի ալ մեծ սով պիտի ըլլայ և  
երկիրը շատ քիչ պտուղ պիտի բերէ. պարէնի  
կողմանէ շատ նեղութիւն պիտի ըլլայ, և առա-  
տութեան տարիները պահուածը՝ սովին տարինե-  
րուն մէջ պիտի ուտուի ։

Աստուած այս երկու երազներով ցուցուցածը  
քիչ ժամանակի մէջ պիտի կատարէ ։

**Ասոր Վրայ Յովսէփ Փարաւոնի խրատ տուաւ**  
**որ բոլոր երկրին մէջ պաշտօնեաներ դնէ , որ առաւ**  
**տութեան այն եօթը տարիներուն հունձքին հինգ**  
**բաժինէն մէկն առնեն ու այլեայլ քաղաքներու**  
**մէջ դիզեն , որպէս զի սովին եօթը տարիներուն**  
**մէջ մարդիկ բաւական կերակուր ունենան , և ա-**  
**նօթութենէ չմեռնին :**

**Յովսեփայ այս խրատը թագաւորին և անոր**  
**նախարարներուն շատ հաճելի երեցաւ :** Փարաւոն  
**ըսաւ իր մեծամեծներուն , Այս մարդուն վրայ**  
**արդարեւ Աստուծոյ հոգին կայ :** Յետոյ Յովսեփայ  
**դառնալով ըսաւ , Որովհետև Աստուած այս բա-**  
**ները քեզի ցուցուց , քենէ աւելի իմաստուն և**  
**յարմար մէկը չեմ կրնար դտնել այս դործը կա-**  
**տարելու :**

**Դուն իմ տանս վրայ վերակացու պիտի ըլլաս ,**  
**և քու խօսքովդ բոլոր իմ ժողովուրդս պիտի կա-**  
**ռավարուի . ես աթոռովս միայն քենէ վեր պիտի**  
**ըլլամ :** Ահա քեզ բոլոր Եղիպտոսի երկրին վրայ  
**վերակացու դրի :** Աս ըսելին ետքը Փարաւոն իր  
**ծանրագին մատանին հանելով Յովսեփայ մատը**  
**դրաւ , անոր գեղեցիկ հանդերձներ հագցուց , պա-**  
**րանոցն ալ ոսկիէ մանեակ մը անցուց :**

**Ասոնք ընելով Փարաւոն կ'ուզէր իմացընել թէ**  
**Յովսեփայ գերագոյն իշխանութիւն տուած է , և**  
**թէ անիկայ մեծ պատիւ և յարդ ունի իր առջեր :**

**Ապա հրաման ըրաւ որ Յովսէփ թագաւորա-**  
**կան կառքը նստի , և առջեն քարոզ կարդա-**  
**ցուի որ բոլոր ժողովուրդն անոր առջե խոնար-**  
**հութիւն ընէ :**

**Այսպէս Յովսէփ Եղիպտոսի վրայ իբր առա-**  
**ջին վերակացու կամ փոխարքայ կարդուեցաւ :**

**Հին ատենը սովորութիւն էր արևելեան ազգաց**

մէջ, որ երբ թագաւոր մը մէկը կ'ընդունէր, մանաւանդ օտարական մը, անոր անունը կը փոխէր։ Այս սովորութեան համեմատ Փարաւոն Յովսեփայ նոր անուն մը տուաւ, այսինքն Փառմթոմիանէ, որուն նշանակութեանը նկատմամբ այլեայլ կարծիքներ կան։ Ոմանք կը կարծեն թէ Փառմթոմիանէ՝ Գաղտնիք յայտնող ըսել է, և թէ այս անունը Յովսեփայ տրուեցաւ անոր մեծ խմասութեանը և մարդարէական հոգի ունենալուն համար, որով երազներու մեկնութիւն կու տար։ Ուրիշները կը կարծեն թէ Փառմթոմիանէ Եղիպտացերէն բառ է և կը նշանակէ Փրկիչ աշխարհի։ Ինչ և իցէ, սա ստոյգ է որ այն անունը փառաւոր պատուանուն մըն էր։ Արևելեան ազգերը պատուանուն շատ կը գործածեն, և Փարաւոն ասով Յովսեփայ բարերարութիւնը բոլոր ազգին ցուցընելուզեց։

Փարաւոն Յովսեփայ կին մ'ալ տուաւ ազնուական ընտանիքէ, Ասանէթ անուն աղջիկ մը, որուն հայրը Պետափրէս։ Արեգ քաղքին քուրմը, այսինքն քահանան էր։ Այս քաղաքը Եղիպտոսի մէջ անուանի էր, և հաւանական է թէ Պետափրէս այն քաղքին և անոր քով եղող երկրին իշխանն էր։

Տարակոյս չկայ թէ Յովսէփ Աստուծոյ սիրելի և անոր հոգւովը լեցուած ըլլալուն համար կըցաւոչ միայն Փարաւոնի երազը մեկնել, այլ և անոր այն խմասուն խրատները տալ, որոնց համար այնպէս սիրելի ըլլալով Փարաւոնի, այսչափ մեծ պատիւներու հասաւ։ Արդարեւ Փարաւոն քիչ բան գիտէր կամ ամենենին բան չէր գիտեր ճըշմարիտ Աստուծոյ վրայ որուն Յովսէփ կը հաւատար. բայց Յովսեփայ վարքին ու կենցաղավարու-

թեանը մէջ շատ սքանչելի թուեցաւ անոր, երբ  
անկէ լսեց թէ, Աս իմ իմաստութիւնս չէ, հապա  
Աստուած Փարաւոնին խաղաղութեան պատաս-  
խան մը պիտի տայ: Աս բանին համար Փարաւոն  
զՅովսէփի յարդեց և անոր վստահացաւ: Ապա  
գիտցէք, սիրելի տղաք, որ միշտ ճշմարտութիւնը  
խոստովանելով, թէ Աստուծոյ և թէ մարդոց վա-  
յելած պատիւն անոնց մատուցանելն ամէն բանէ  
աւելի ուրիշներուն, նաև գէշ մարդոց, յարդանքն  
ու վստահութիւնը շահելու ամենէն ստոյդ միջոցն  
է: Անոնք որոնց հետ գործ ունիք՝ թող գիտնան  
որ գուք Աստուծմէ կը վախնաք, և առանց մէ-  
կուն անիրաւութիւն ընելու, բոլոր ձեր պարտա-  
կանութիւնները ճշդիւ կը ջանաք կատարել: Զեր  
այս զգացումը որչափ աւելի գիտցուի, այնչափ  
աւելի պատիւ և վստահութիւն կը ստանաք, և ձե-  
զի այլ և այլ պաշտօններ ու գործեր կը յանձնուին:

Դուք իշխանութեամբ և պատուով Յովսեփայ  
շափ չէք կրնար մեծնալ, սակայն ձեզի շատ օգ-  
տակար է որ ձեր հասարակ վիճակին մէջ ալ ու-  
րիշներուն պատիւն ու վստահութիւնը վաստկիք:  
Ասիկայ ներքին զուարճութիւն մալ կու տայ ձե-  
զի, և ստուգիւ գիտցէք որ այս վիճակին կրնաք  
համնիլ Աստուծոյ շնորհաց օգնութեամբը, եթէ  
անկէ վախնալով՝ անոր պատուիրանքը հաւատար-  
մութեամբ պահէք:

## ԳԼՈՒԽ ԺԴ

**Ա**ստուծոյ նախախնամութեւնը : **Ա**նոր հոգանուել ու աղաւինել մէր պարագահնութեւնն է : **Յ**ովսեդայ ցորեն ժողովեւը : **Ա**նոր երկու որդեւք : **Ա**նոնց անուններուն պարագահնը : **Ս**ովուն ականեւը :

**Ի**՞նչ զարմանալի եղաւ **Յ**ովսեփայ յառաջանալը : **Ա**նիկայ Փանանու մէջ երկրագործի մը որդի էր, և քանի մը տարի բանտը մնալէն ետքը՝ **Եղիպտոսի** կառավարութեան առաջին պաշտօնին կը բարձրանայ, և այն ընդարձակ երկրին մէջ իշխանութեամբ երկրորդ կ'ըլլայ թագաւորին : **Եթէ** **Յ**ովսեփայ յառաջադիմութիւնը լաւ նկատելու ըլլանք, որ չափ պիտի զարմանանք **Ա**ստուծոյ նախախնամութեանը վրայ, որ չարէն բարիք յառաջ բերելով, ու մարդոց չար կիրքերուն յաղթելով, իր իմաստուն ու բարի խորհուրդները կը կատարէ :

**Ա**ստուծոյ նախախնամութիւնն այսչափ կրկնելուս պատճառը սա է, սիրելի տղաք, որ երբ **Յ**ովսեփայ պատահած դիպուածներն անոր պատմութեանը մէջ կը կարդաք, այն նախախնամութիւնը յիշէք : **Փ**անզի չկայ ճշմարտութիւն մը որ **Ա**ստուծոյ նախախնամութենէն աւելի զգացուելու արժանի ըլլայ : **Ա**նիկայ **Ա**ստուածաշունչին ուրիշ մասերուն, և այլեւայլ ազգերու պատմութիւններուն մէջ ալ կրնաք տեսնել : **Զ**եր կենացն ու ձեր բարեկամներուն կենացը մէջ ալ կրնաք տեսնել :

**Եթէ** ճշմարտապէս զ**Ա**ստուած սիրելու ու անոր ապաւինելու ըլլաք, **Ա**ստուծոյ նախախնամու-

թեան գիտութիւնը ձեզի մեծ մխիթարութեան և  
օրհնութեան պատճառ պիտի ըլլայ։

Եթէ գիտնալու ըլլաք որ առանց Աստուծոյ  
գիտութեանը և հրամանին բան մը չ'ըլլար, և թէ  
անոր խնամքն ինչպէս մեծամեծ բաներու այնպէս  
ալ շատ փոքր բաներու կը հասնի, անատեն, ինչ  
պէս որ տղայ մը իր հօրը կամ մօրը ձեռքին տակ  
ապահով է, դուք ալ միշտ ապահովութիւն մը  
պիտի զգաք անոր պաշտպանութեանը տակ։

Առուրք Գիրք մեզի կը սորվեցընեն որ Աս-  
տուած զինքը սիրողներուն հետ է. յաջողութեան  
և ձախորդութեան, առողջութեան և հիւանդու-  
թեան, կենաց և մահուան, վերջապէս ամէն բանի  
մէջ անոնց կ'օգնէ։

Աստուած այս կերպով Յովսեփայ հետ էր. ձեր  
հետն ալ պիտի ըլլայ, եթէ դուք ալ բոլորով սրտիւ  
զանի սիրէք ու ձեր յոյսն անոր վրայ դնէք։ Այս  
աշխարհիս վրայ պիտի գտնուիք այնպիսի պարա-  
գաներու մէջ որ ՚ի սկզբան շատ երկիւղալի պի-  
տի երեան ու մեծ վիշտ և նեղութիւն պիտի տան  
ձեզի։ Սակայն ետքը, Աստուծոյ նախախնամու-  
թեամբն այն նեղութիւնները ձեզի մխիթարութեան  
և երջանկութեան պիտի դառնան. բայց եթէ  
չդառնան, և նեղութիւններն ու փորձութիւնները  
շարունակեն, հնազանդութեամբ ու համբերու-  
թեամբ անոնց տարէք։ Փանզի Աստուած կը  
տեսնէ որ իր զաւկներն երբեմն այսպիսի խրատ-  
ներու կարօտ են, ուստի և զանոնք կը գործածէ  
իբրև դարման, ինչպէս որ մարդասէր հայր մը,  
երբ իր տղան հիւանդ կը տեսնէ, դեղ կը պատ-  
րաստէ անիկայ բժշկելու։

Աս նեղութիւններն ու փորձութիւնները ձեր  
հողիններուն շատ օգուտ պիտի ընեն, եթէ Աս-

տուծոյ աղաչելու ըլլաք որ իր Առլրբ Հոգին ձեզի  
տայ, որպէսզի այն տառապանաց տանիք համբե-  
րութեամբ :

**Անոնք** ձեր առ Աստուած և առ Փրկուոս  
ունեցած սէրը պիտի աւելցրնեն, ու ձեզ պիտի  
յորդորեն անոր ամենօրհնեալ օրինակին նմանելու .  
անոնք ձեզ խաղաղական մահուան ու երկնից մէջ  
յաւիտենական երջանկութեան պիտի պատրաստեն :

**Ուրեմն** սորվեցէք Աստուծոյ նախախնամու-  
թիւնը, և գիտցէք որ ձեր խմաստութիւնն ու միսի-  
թարութիւնն անկէ կու դայ :

**Յովսէփ** ևս առաւել պատճառ ունէր Աստուծոյ  
այս նախախնամութեանը վրայ զարմանալու և անոր  
ապաւինելու : **Երբ** անիկայ Եղիպտոսի վրայ վե-  
րակացու դրուեցաւ, իբր երեսուն տարեկան էր, և  
յանկարծ գժուարին գործերու մէջ մտաւ : **Բոլոր**  
Եղիպտոսի մէջ ճամբորդութիւն ընելով, և երկրին  
ու մարդոց վիճակը քննելով, հասկցաւ թէ ինչ բան  
հարկաւոր էր պատրաստել այն գալու սովին եօթը  
տարիներուն համար :

**Առատութեան** եօթը տարուան միջոցին երկիրն  
ամէն տեսակ բերք առատութեամբ բուսցուց . **Առ-**  
**տուած** այնպէս տնօրինած էր ինչպէս որ **Յովսէփ**  
**Փարաւոնին** ըսած էր : **Անոր** խմաստուն նախախ-  
նամութեամբը կրնան բոլոր յաջող բաներ մէկտեղ  
զուգընթանալ . այսինքն **Աստուած** կրնայ այնպէս  
տնօրինել որ օդին փոփոխութիւնները, ինչպէս  
ցուրտը, տաքը, անձրևն ու հովերը, նաև գործե-  
լու համար մարդոց բնական և բարոյական յարմա-  
րութիւնները, բանի մը համար նպաստաւոր ըլլան :  
**Այսպէս** **Աստուծոյ** նախախնամութիւնն այն տա-  
րիներուն մէջ ամէն բան այնպէս տնօրինեց որ  
Եղիպտոսի ամէն կողմը, ինչպէս որ **Առլրբ** Գիրք

կը պատմէ , այնչափ առատութիւն եղաւ որ Յովսէփի ցորենը ծովին աւազին պէս կը ժողուէր . անկէ ետքը սկսաւ շափել և համրել , տեսնելու համար թէ մթերուած պաշարը որչափ եղած էր . և այնչափ շատցած գտաւ որ համրելէ դադրեցաւ :

Յորենն այլ և այլ քաղաքներ շտեմարաններու մէջ պահեց և անշուշտ իր իշխանութեանը տակ պաշտօնեաներ կարգած էր համբարուած ցորեններուն պահպանութեանը . հոգ տանելու , որպէս զի ետքը ժողովուրդին պատրաստ կերակուր գտնուի սովի տարիներուն մէջ :

Դեռ առատութեան եօթը տարիները չսպառած , Յովսէփի երկու որդի ունեցաւ **Մանասէ** ու **Եփրեմ** :

**Մանասէ** Հույնող ըսել է . Յովսէփի այս անունը տուաւ իր երեց որդւոյն , քանզի **Աստուած** , ըսաւ Յովսէփի , բոլոր իմ վիշտերս և հօրս տանը վիշտերը մոռցընել տուաւ ինձի . այսինքն այն փորձութիւններն ու չարչարանքները որ ես կրեցի իմ նախանձու ու չար եղբայրներէս երբ հօրս տունն էի , և ետքը հոս **Եգիպտոսի** մէջ :

**Միւս** որդւոյն անունը **Եփրեմ դրաւ** , որ աճէ Հույնած կը նշանակէ , Քանզի **Աստուած** , ըսաւ Յովսէփի , տառապանաց երկրի մէջ զիս աճեցուց :

Յովսէփի ընտանիքի մը տէր և երկու որդւոց հայր ըլլալով , իր հօրմէն , ազգականներէն և հայրենի երկրին զուարճութիւններէն զատուած ըլլալուն վիշտը կը մոռնար , և մխիթարութիւն կը զգար :

Վերջապէս առատութեան տարիներն անցան և սովը սկսաւ : **Այս** հարուածը ոչ միայն **Եգիպտոսի** , հապա ուրիշ երկիրներու վրայ ալ եկաւ :

**Ամեն** տեղ սովը սաստիկ էր և ժողովուրդն

Եր կեանքը պահելու համար բաւական կերակուր գտնելու շատ դժուարութիւն կը կրէր. սակայն բոլոր Եգիպտոսի երկրին մէջ բաւական ցորեն պահուած էր բնակիչներուն ուտելու համար։

Երբ Եգիպտացիք իրենց տանը մէջ պահուածը սպառելէն ետքը կերակրոյ կարօտութիւն ունեցան, սկսան Փարաւոնին աղաղակել որ հաց տայ. Փարաւոն ալբոլոր Եգիպտացիներուն ըստ. Յովսեփայ դացէք, և ինչ որ անիկայ կ'ըսէ՛ ըրէք։

## ԳԼՈՒԽ ԺԵ

Եժեղացոց ԴՅՈՆԵՔ եբրա երենց Փրկեալ պատուելը։ Յեսոս Փրկառուի առասել գերադոյն Փրկեալ ըլլուը։ Եժեղացիներուն Յոնեքն դնելը։ Փանանու մէջ սովոր։ Յահոնայ եր որդեւու իերակուու դնելու համար Եժեղառու որկելը։

Եգիպտացիք երբ Յովսեփայ առջին ծնկան վրայ եկած անոր կ'աղաչէին, և այս սաստիկ սովին ատեն կ'ընդունէին անկէ իրենց և իրենց ընտանեացը համար պէտք եղած կերակուրը, կը խորհէին թէ իրաւ անիկայ իրենց փրկիչն էր, ինչպէս անոր անունն ալ կը ցուցընէր, այսինքն՝ Փարաւոնի անոր տուած նոր անունը որ, ինչպէս առաջ յիշուեցաւ, հաւանականաբար իրեւ կը նշանակէր Եգիպտացւոց լեզուաւ։

Յովսէփ արդարեւ փրկիչ եղաւ Եգիպտացւոց, բայց ոչ այն մտքով, որով մենք Յիսուս Փրիստոս Փրկիչ աշխարհի կը կոչենք։ Յիսուս Փրիստոս Փրկիչը կարող է մարդիկ ոչ միայն հոգեորսով աղատել՝ զանոնք լեցընելով Աստուածային ճշմարտութեամբ ու Հոգւոյն Սրբոյ զօրութեամբ,

քանզի ասոնք ալ կերակուր են, երկնային և հոգեսոր կերակուր, որ հոգին կը սնուցանեն, և պատճառ կ'ըլլան որ մարդիկ կենդանի ըլլան առաւել գերազանց և երջանիկ աշխարհի մը համար, հագա անիկայ զմարդիկ կը փրկէ նաև իրենց մեղքերէն, և յաւիտենական մահուանէ որ մեղքին վարձքն է:

**Եղիպտացիք** անտարակոյս պէտք ունէին հոգեսոր կերակրոյ և հոգեսոր փրկութեան, բայց այն ողորմելի տգէտները չեն զգար իրենց այս կարօտութիւնը. անոնց բոլոր ջանքն էր այն մարմնաւոր սովէն ազատիլ. և երբ տեսան որ **Յովսէփ** կարող էր զանոնք անկէ փրկել, անիկայ իրենց ամենէն մեծ բարերարը և փրկիչը համարեցան:

**Հիմա** կը հարցընեմ ձեզի, սիրելի տղաք, դուք կը փափաքիք արդեօք և պատրաստ էք **Յիսուս** **Քրիստոսի** երթալ հոգեսոր սովէն ու հոգւոյն մահէն փրկուելու համար, ինչպէս որ **Եղիպտացիք** **Յովսէփիայ** կ'երթային մարմնաւոր սովէն ազատելու համար, թէ անոնց պէս դուք ալ անզգայ էք ձեր հոգեսոր և յաւիտենական վիճակին: **Ես** այս հարցումը հոս կ'ընեմ, դուք անոր վրայ առանձին խորհեցէք, և դուք ձեզի տուէք պատասխանը:

**Յովսէփ** բացաւ ցորենի շտեմարանները զորոնք այլեայլ քաղաքներու մէջ պահած էր, ու սկսաւ **Եղիպտացւոց** ցորեն ծախել:

**Խեղճ** և անօթութենէ նուաղեալ փոքր տղայք և աղջկունք ի՞նչպէս կ'ուրախանային արդեօք տեսնելով որ իրենց հայրը տուն ցորեն կը բերէր, որպէս զի իրենց մայրը հաց շինէր անոնց, և ո՞րչափ շնորհակալ կ'ըլլային **Յովսէփիայ**:

**Առչափ** ևս առաւել դուք, սիրելի տղաք, շնոր-

Հակալ ըլլալու պարտական էք ձեր երկնաւոր Հօրը, որ ձեր արարիչն է և բոլոր ձեր պիտոյքն առատաբար կուտայ. և ձեր երախտագիտութիւնը ցուցընելու էք՝ անիկայ սիրելով և անոր պատուի բաններուն հնազանդ ըլլալով։

Ու միայն Եղիպտացիք կու դային Յովսեփին ցորեն գնելու, հապա ուրիշ երկրի մարդիկ ալ, ուր որ սովը տիրած էր. և այսպէս Աստուծոյ առաջնորդութեամբը՝ Յովսեփայ իմաստութիւնն ու ճարտարութիւնը պատճառ եղաւ շատերուն մահուանէ ազատելուն։

Աստուծոյ զարմանալի նախախնամութեամբը Յովսէփ կարող եղաւ սովէն ազատել նաև իր սիրելի հայրը, իր եղբայրներն ալ որոնք զանի անողորմաբար վաճառած էին, և անոնց ընտանիքները. քանզի սովը մինչև Քանանու երկիրը, այսինքն՝ Յակոբայ եղած տեղը հասած էր, ու այն տեղի մարդիկ ալ շատ նեղութիւն կը կրէին այս պատճառաւ։

Այս նեղութիւններուն մէջ երբ Յակոբ լսեց որ Եղիպտոս ցորեն կրնայ գնուիլ, խորհեցաւ հոն մարդ դրկել։ Կանչեց իր որդիքը, և հարցուց թէ ինչո՞ւ համար այսչափ տրտմութեամբ և յուսահատութեամբ կը կենան, իբր թէ իրենց ազատութեանը համար բան մը ընել հնար չէր։

Յետոյ ըսաւ անոնց, Լսեցի որ Եղիպտոս ցորեն կայ, պէտք է որ հոն երթաք ու քիչ մը պաշար գնէք մեզի համար, որ չմեռնինք։

Թուրես այն ժամանակ Յակոբ, անոր ընտանիքը և անոր որդիներն իրենց ընտանիքներովը մէկտեղ կամ իրարու մօտ կը ընակէին, և Յակոբ անոնց ամենուն իշխանը կամ գլուխն էր։ Բայց ինչպէս որ ալ էր, ամէնը մէկտեղ կերակրոյ նեղութիւն կը կրէին։ Ալդարե անոնց ընակած տեղէն մին-

չև Եղիպտոս հարիւրաւոր մղոն ճամբայ է, և  
Յակոբայ որդւոցը շատ դժուարին կը թուէր այն  
չափ հեռու տեղ երթալ. բայց ինչ օդուտ, ուրիշ  
կերպ մը չկար կերակուր գնելու. ուստի և, բացի  
Բենիամինէ, մնացեալ որդւոց բոլորն ալ յանձն  
առին երթալ:

Բենիամին Յովսեփայ կրտսեր եղբայրն էր, և  
զիտէք որ անոնց մայրը Ռաքէլ մեռնելին քիչ  
մը առաջ ծնած էր: Ռաքէլի կենդանութեան  
ատենը, Յակոբ զանի աւելի կը սիրէր քան իր  
միւս կանայքը. զանի այնչափ սիրելուն համար  
անոր զաւկըներուն վրայ ալ աւելի սէր ունէր. և  
երբ հաւատաց թէ Յովսէփ մեռած էր, չէր ու  
զեր զԲենիամին քովին հեռացընել, որ չըլլայ թէ  
անոր ալ վտանգ մը պատահի: Բաց ասկէ՝ Յա-  
կոբ իբր հարիւր և երեսուն տարեկան ըլլալով,  
իր այս ծեր և տկար հասակին մէջ կը մխիթա-  
րուէր Բենիամինով, զոր Յովսեփայ տեղ դրած էր.  
շատ հաւանականէ թէ Բենիամին ալ իբրև բարե-  
պաշտ և հնազանգ որդի ամէն բանի մէջ կ'օգնէր  
իր տկար հօրը, և անոր ծերութեանը նեցուկ ե-  
ղած էր:

Թերեւս Յովսեփայ եղբայրները խորհեցան թէ  
իսմայելացի վաճառականները կրնային զՅովսէփ  
Եղիպտոս տարած և հոն վաճառած ըլլալ, ուս-  
տի և ենթադրեցին թէ անհնարին բան մը չէր  
անիկայ դիպուածով հոն տեսնել: Բայց անտարա-  
կոյս չէին կրնար խորհիլ թէ անիկայ հոն մեծ  
պատույ և իշխանութեան հասած կրնային տես-  
նել. հարկաւ պիտի խորհէին թէ, եթէ իրենց  
եղբայրը երբէք Եղիպտոս տարուած և հոն տա-  
կաւին կենդանի էր, և եթէ պատահէր որ անի-  
կայ հոն տեսնէին, գերութեան և յետին աստիճան

աղքատութեան և թշուառութեան մէջ պիտի գըտ-  
նէին անիկայ : **Ք**անզի արդարև մարդկօրէն խոր-  
հելով, անկարելի էր ենթադրել թէ օտար երկրի  
մը մէջ իբրև գերի ծախուած երիտասարդ մը  
կրնար այնպէս բարձր իշխանութեան, զօրութեան,  
պատույ և ազդեցութեան տէր ըլլալ, ինչպէս  
Յովսէփի եղած էր :

## ԳԼՈՒԽ ԺԶ

**Յ**անձնէ Եղիշեայ անոր առջին խոնարհութեան է՛լնէն :  
**Յ**անձնէ ինչ համար ինչպին անոնց չէ ճանշացնէր : **Ա**նոնց  
բանու դրուելը : **Ա**նոնց մէկուն բանուը պահուելը որուէն զէ  
Բէնիամին բերուել :

**Ե**րբ **Յ**ակոբայ որդիքը Եղիպտոս հասան, հար-  
ցուցին թէ ինչ կերպով ցորեն կրնային գնել . և  
իմացան որ պէտք էր երթալ **Փ**առմթոմվանէի որ  
բոլոր երկրին կառավարն էր : **Ո**ւստի ստիպուե-  
ցան **Յ**ովսեփայ ներկայանալ, առանց գիտնալու  
թէ անիկայ ով էր . և անոր այն մեծ պատիւն ու  
իշխանութիւնը տեսնելով, մինչև գետին ծռեցան  
և անոր խոնարհութիւն ըրին, ինչպէս արևելեան  
ազդաց մէջ հին ատենը սովորութիւն էր թագա-  
ւորաց առջե ընել, իրրև նշան յարգանաց և  
հպատակութեան : **Ա**յսպէս ընողն իբր թէ կը խոս-  
տովանէր, թէ այն անձը որուն առջե խոնարհու-  
թիւն կ'ընէր՝ իրմէ շատ վեր էր աստիճանաւ և  
զօրութեամբ :

**Ա**յսպէս կատարուեցաւ **Յ**ովսեփայ երազը . այն  
երազը որուն մէջ կը տեսնուէր որ իր եղբայրնե-  
րուն որաներն իրեն երկրպագութիւն կ'ընէին :

**Անոնք** ոչ միայն **Յովսեփայ** երկրպագութիւնը, հապա իրենց բոլոր յոյսն ալ անոր վրայ դրած էին թէ ան պիտի ազատէր զիրենք, իրենց ծեր հայրը և բոլոր ընտանիքը սովին վտանգէն:

**Անոնք** այն խոնարհութիւնն ընելին ետքը ելան ու **Յովսեփայ** առջին կայնեցան. ամենակին անոնց մտքէն չէր կրնար անցնիլ թէ անիկայ իրենց եղբայրն էր, քանզի շատ փոխուած էր. բայց **Յովսէփի** կրնար զանոնք ճանչնալ, և ճանչցաւ իսկ անմիջապէս:

Հոս կրնաք մտածել որ, **Յովսէփի** եթէ ուզէր կրնար անոնցմէ վրէժ առնել՝ անոնց իրեն ըրած չարութեանը փոխարէն: Բայց անոր դիտաւորութիւնն այս չէր. անիկայ չարեաց փոխարէն բարիք ընել դիտէր, ու միտքը դրած էր որ իր եղբայրներուն և իր ծեր հօրը աղէկութիւն ընէ. բայց խորհեցաւ որ աղէկ չէր մէկէն 'ի մէկ ինք զինք անոնց ճանչցընել:

**Յովսէփի** իր երազները միտք բերաւ և անոնց մէկ մասին կատարուիլը տեսաւ. և կ'ուրախանար որ **Աստուծոյ** նախախնամութեամբը կարող էր իր հայրը և բոլոր ազգատոհմը սովամահ ըլլալու վտանգէն ազատել:

**Կ'երեկի** թէ **Յովսէփի** իր եղբայրները փորձել կ'ուզէր, և թերեւս անոնց ճշմարիտ ապաշխարութիւն ընել տալ կը բաղձար, իրենց առջի չարութեանը համար:

**Յովսէփի** տեսաւ նաև որ իր կրտսեր և սիրելի եղբայրը **Բենիամին** անոնց հետ չէր. կասկածեց որ թերեւս, հօրը սիրելի զաւակն ըլլալուն համար, անոր ալ ըրած էին ինչ որ իրեն ըրին, կամ թերեւս սպաննած էին զանի:

**Գիտէր** որ եթէ այսպիսի բան մը ըրած էին,  
պիտի չխոստովանէին, եթէ ինքզինք ճանչցընելով  
Բենիամինի վրայ հարցընէր. այլ սուտ ըսելով զանի  
պիտի խաբէին, ինչպէս որ առաջ իրենց հօրն ը-  
րած էին։

**Այս** պատճառներուն կամ նաև ուրիշ բաներու  
համար որ չենք գիտեր, **Յովսէփ** ոչ միայն ինք-  
զինք իր եղբայրներուն չճանցուց, հապա այնպէս  
երեցուց որ անոնց ով ըլլալը չէր գիտեր։

**Անոնց** հարցուց թէ ուստի կու գային։

**Երբ** անոնք ըսին թէ **Քանանացւոց** երկրէն  
կ'ուգային ցորեն գնելու համար, անատեն կաս-  
կածել ձևացուց անոնց վրայ որպէս թէ լրտես-  
էին, և ըսաւ թէ **Դուք** Եղիպտոսի երկրին վի-  
ճակը դիտելու եկած էք, որպէս զի լուր տանիք  
երեելի և զօրաւոր ազգի մը որ հոս գայ ու **Ե-**  
**ղիպտացիները** կողոպտէ, և անոնց երկրին տիրէ։

**Անոնք** պատասխան տուին թէ լրտես ըլլալ և  
այնպիսի միտք ունենալ իրենցմէ շատ հեռու էր։  
**Քաւ լիցի,** տէր, ըսին, քու ծառաներդ կերակուր  
գնելու համար եկած ենք. մենք բոլորս ալ մէկ  
մարդու զաւկըներ ենք։ **Ըսել** կ'ուզէին թէ, զօ-  
րաւոր ցեղի մը կամազգի մը վերաբերեալ մարդիկ  
չէին, այլ թուով նուազ և զօրութեամբ տկար ազ-  
գատոհմ մըն էին՝ նահապետի մը գլխաւորութեանը  
ներքեւ։ **Մենք**, ըսին, հաւատարիմ մարդիկ ենք,  
քու ծառաներդ լրտես չենք։ **Յովսէփի** առջի ը-  
սածը կը պնդէր, անոնք ալ նորէն պատասխան  
տուին թէ, **Մենք** տասներկու եղբայր ենք և  
Քանանու երկրին մէջ մէկ մարդու զաւկըներ  
ենք. մեր ամէնէն կրտսերը տունն է իր հօրը քով,  
մեր մէկ եղբայրն ալ չկայ։

**Այս** վերջին չոսքն ըսելով, հաւանականաբար

կ'ուզէին կարծեցընել թէ իրենց եղբայրներէն մէ կը մեռած էր։ Յովսէփ անոնց ըսածներուն ամենախն չհաւատալ կեղծելով, ըսաւ թէ ըսածներուն սուտ կամ ճշմարիտ ըլլալը հաստատելու ճամբայ մը կայ, այն է՝ իրենց կրտսեր եղբայրը Եգիպտոս բերել։

Ուստի Յովսէփ Փարաւոնի կենացը վրայ երդում ընելով ըսաւ անոնց թէ, Մինչև որ ձեր կրտսեր եղբայրը հոս չդայ, չեմ կրնար հաւատալ թէ դուք համեստ և ճշմարտախօս մարդիկ էք։ Զենէ մէկը թող երթայ ձեր հօրը քով ձեր կրտսեր եղբայրը հոս բերելու. դուք հոս բանտարկեալ մնացէք։

Այսպէս ըսելով Յովսէփ զանոնք այն օրը բանտ դնել տուաւ, հետևեալ օրը զանոնք իր առջեր կանչելով ըսաւ, Ես Աստուծմէ կը վախնամ. չեմ ուզեր որ ամէնքդ հոս մնաք, այլ թող ձենէ մէ կը միայն բանտը մնայ, մնացեալքդ ցորենն առնելով դացէք ձեր հօրը, և ձեր կրտսեր եղբայրն առնելով նորէն հոս եկէք. եթէ այս ընէք, կը հաւատամ թէ դուք լրտես չէք, և կ'արձակեմ զձեզ, ապա թէ ոչ մահապարտ էք։

Քսան տարիէ աւելի էր որ անոնք իրենց եղբայրն իսմայելացւոց ծախած էին, սակայն անոնց ըրած անողորմ և չար գործքերուն յիշատակութիւնը հիմա սկսաւ անոնց խիղճն արթնցընել, այնպէս որ սկսան իրենց սրտին մէջ մեծ ցաւ զգալ։ Տեսան որ նեղութեան մէջ էին, և չէին գիտեր թէ իրենց վերջն ինչ պիտի ըլլար։ Աը զգայն որ այս վիշտը բաւական պատիժ մը չէր իրենց անօրէնութեանը, ուստի և կը վախնային թէ Աստուծ շատ աւելի սաստիկ վրէժ մը պիտի պահանջէր իրենցմէ։

**Այսպէս սկսան իրենց զգացումներն իրարու**  
**ըսել.** **Մենք մեծ յանցանք դործած ենք մեր**  
**եղբօրը դէմ.** տեսնելով անոր հոգւոյն տառա-  
**պանքը մեզի աղաչանք ըրած ատենը, չողորմե-**  
**ցանք անոր, և այն մեծ անօրէնութիւնը դործե-**  
**ցինք.** ուստի հիմա այս վիշտը մեր վրայ եկաւ:  
**Դուրէն պատասխան տուաւ անոնց և ըսաւ,** **Ես**  
**ձեզի չըսի՞ որ տղուն չմեղանչէք.** **Դուք մտիկ**  
**չըրիք,** ու հիմա ահա անոր արիւնը կը խնդրուի  
**մենէ.** **թերեւ Աստուած մեզ սաստիկ կերպով պիտի**  
**պատժէ այն անդութ և բարբարոս դործին համար:**

---

## ԳԼՈՒԽ ԺԷ

**Յանձնէդայ, եղբայրներուն իրենց յանցանին իրարու ըսելն ա-**  
**նոր արտին իւներդործէ:** **Եմաւոն կ'ընտրուի բանաբն մշալու-**  
**Յանձնէդայ, եղբայրներուն յորեն առնելով Փառան երնալը:**  
**Աղէն աւ ժեշ մարդուն մշարեղէ առաբերութիւնը:** **Արտեօ-**  
**սա կարդացողն այն երկուունն ո՞ւ դասեն է:** **Թող ինչն իւ**  
**ժործուը կառաջէ:**

**Յովսէփ իր եղբայրներուն խօսակցութիւնը լսեց,**  
**և անոնց բոլորն ալ հասկցաւ, թէպէտ անոնք չէին**  
**գիտեր թէ ան կը հասկնար իրենց խօսքը, քանզի**  
**Յովսէփ անոնց հետ թարգմանով կը խօսէր.** այս  
**ինքն՝ ինչ որ անիկայ Եգիպտացւոց լեզուաւ կ'ըսէր՝**  
**կը թարգմանուէր եղբայրներուն Եբրայեցերէն,** որ  
**անոնց խօսած լեզուն էր:** **Անոնց Եբրայեցերէն**  
**ըսածն ալ թարգմանը Եգիպտացւոց լեզուաւ կը**  
**թարգմանէր Յովսէփայ, իբրև թէ անիկայ Եբրայե-**  
**ցւոց լեզուն չէր հասկրնար:** **Յովսէփ այսպէս ըրաւ**  
**որ իր ով ըւլան անոնք չդիտնան:** **Երբ Յովսէփ իր**

եղբայրներուն խօսքը լսեց, սիրտը շարժեցաւ և երեսն անդին դարձընելով որ չտեսնուի՝ սկսաւ լալ։ Ասկէ կը տեսնուի որ Յովսեփայ բնաւորութիւնը և զգացումները շատ տարբեր էին իր եղբայրներուն խիստ և անողորմ բնաւորութենէն։ Յովսէփ թերեւս կ'ուզէր իր ով ըլլան անոնց յայտնելով զանոնք այս տագնապէն ազատել. սակայն խորհեցաւ որ աղէկ չէր, և միտքը դրաւ անոնց հաւատարմութիւնն աւելի փորձել և հասկընալ թէ արդեօք Բենիամինի համար ըսուածը ճշմարիտ էր, միանգամայն զանոնք ապաշխարութեան առաջնորդել իրենց ըրած յանցանացը համար։

Յովսէփ այսպէս թարգմանով քիչ մը ժամանակ իր եղբայրներուն հետ խօսելէն ետքը, առաջարկեց որ անոնցմէ մէկը Եգիպտոս մնայ, և միւսները Քանան երթալով Բենիամինը բերեն։ Ուստի հրաման ըրաւ անոնց առջև զՇմաւոն կապել։ Այսպէս ընելով կ'ուզէր անոնց ցուցընել թէ անիկայ այնպէս կապուած պիտի մնար բանտին մէջ մինչև որ անոնք ետ դառնային Բենիամին իրենց հետ բերելով։ Ետքը Յովսէփ հրաման ըրաւ իր մարդոցը, որ եղբայրներուն քուրձերը ցորենով լեցընելու ատեն ամէն մէկուն տուած ստակն իր քուրձին մէջ դնեն։ Այսպէս անոնք իրենց ընտանիքներուն տանելու, ճամբորդութեան ատեն ալ ուտելու համար բաւական ցորենով լեցուն քուրձերն՝ իրենց էշերուն վրայ բառնալով ճամբայ ելան Քանան երթալու։ Իսկ Շմաւոն գոցուած տեղ մը դրուեցաւ, որ հոն մնար մինչև եղբայրներուն ետ դառնալը։ Հիմա աղէկ ու գէշ մարդոց մէջտեղի մեծ տարբերութիւնը կը տեսնենք այս պատմութեան մէջ. այսինքն՝ Յովսեփայ և

անոր եղբայրներուն մէջտեղ եղած տարբերութիւնը։ Առաջինն՝ Աստուծմէ կը վախնար ու կը ջանար անոր կամքը կատարել. իսկ վերջինները հպարտութեամբ, ատելութեամբ, վրէժինդրութեամբ և չարութեամբ լի էին, և թերեւ ճշմարիտ ապաշխարութիւն մը չէին ըրած իրենց մեղքերուն համար, բաղձանք ալ չունէին Աստուծոյ հնազանդելու։ Արդ՝ դուք այս երկու տեսակ մարդոց որո՞ւն պիտի նմանիք։ Դուք բարեպաշտութեամբ, հնազանդութեամբ, դժութեամբ, անկեղծութեամբ, վերջապէս ձեր բոլոր վարքովը Յովսեփայն նման պիտի ըլլաք, թէ անոր եղբայրներուն պէս խստասիրտ և չար։ Աստուծմէ կը վախնաք և զանի կը սիրէ՞ք, անոր պատուիրանքներուն հնազանդել և ուրիշներուն աղէկութիւն ընել ձեզի երջանկութիւն կը համարի՞ք, թէ միշտ ձեր վրայ միայն կը խորհիք, և կը ջանաք թէ ինչ կերպով ընէք կամ ստանաք այնպիսի բաներ որովք ձեր բաղձանքները հաճեցընէք, ու ձեզ երջանիկ ընէք առանց հոգտանելու ուրիշներուն աղէկութեանն ու երջանկութեանը։ Շատ աղէկ դիտէք թէ որ տեսակ մարդոց պարտիք նմանիլ. ձեր խիղճը ձեզի կ'ըսէ թէ որչափ աղէկ պիտի ըլլայ ձեզի Յովսեփայ պէս ըլլալ, քան թէ անոր եղբայրներուն պէս։ Եթէ Աստուծոյ վրայ ճշմարիտ սէր չունիք, ինչպէս Յովսէփ ունէր, ոչ Փրկչին վրայ ճշմարիտ ապավինութիւն և ոչ ալ Աստուծոյ կամքին հնազանդելու և ձեր ընկերին աղէկութիւն ընելու բաղձանք, ի՞նչ պիտի ընէք. պիտի մնա՞ք այնպէս առանց ձեր մեղաց վրայ ապաշխարելու, առանց ջանալու որ Աստուծոյ հաճոյ ըլլաք, Փրիստոսի վրայ հաւատք ունենալով անիկայ ձեզի բարեկամընէք, և այնպէս պատրաստ դտնուիք մահուան,

որպէս զի յոյս ունենաք գերեզմանէն անդին եր-  
շանիկ ըլլալու \*

Եթբ Յովսեփայ եղբայրները նեղութեան մէջ  
ինկան, իմացան որ զայրացեալ Աստուծոյ բար-  
կութիւնը հասած էր զանոնք պատժելու իրենց  
գործած մեղքերուն համար։ Անոնց խիղճերը,  
Յովսեփայ ծախուելէն երկայն ժամանակ ետքը<sup>2</sup>  
արթնցան, և անատեն սկսան խայթ զդալ։

Թէպէտ ձեր գործած մեղքերը ձեզի հիմա  
ձայն չեն տար, քանզի ձեր խիղճը թմրած է, և  
ձեր վտանգը չէք զդար, բայց այս կեանքին մէջ  
անգամ կրնայ Աստուած իր բարկութիւնը յան-  
կարծ ձեր վրայ հասցընել, ձեր խիղճերն արթնցը-  
նել և ձեզ ահիւ լեցընելով իր առջև դողացընել։  
Բայց, ո՞հ, հանդերձեալ աշխարհին մէջ է որ  
խիղճն իր ահարկու գործքերը պիտի կատարէ. հոն  
անզեղջ մեղաւորը որ յաւիտեանս Աստուծոյ երե-  
սէն ու երկնից զուարծութենէն վոնտուած է՝ ուրիշ  
բան պիտի չդանէ, բայց միայն նեղութիւն, ցաւ  
և տառապանք. և ապադան մտածելով՝ յուսա-  
հատութենէ զատ ուրիշ բան պիտի չզգայ։

Ուրեմն թող հիմա ձեր խիղճն իր գործը կա-  
տարէ։ Խորհեցէք թէ որչափ Աստուծոյ դէմ  
մեղք գործած էք. ճշմարիտ սրտի տրտմութեամբ  
անոր երթալով խոստովանեցէք, և աղաչեցէք  
Քրիստոսի ըրածներուն ու քաշածներուն միջնոր-  
դութեամբը որ ձեր մեղքերուն թողութիւն տայ։  
Քրիստոս է ձեր փրկիչն ու ձեր յոյսը. անոր  
միայն ապաւինեցէք։ Աղաչեցէք նաև Հոգւոյն  
Սրբոյ համար՝ որուն նկատմամբ ըստ Քրիստոս  
թէ Աստուած զանի իր անունովը խնդրողներուն  
պիտի տայ։ Աղօթք ըրէք և խնդրեցէք որ այն  
Աստուածային հոգին ձեր սիրտերը դայ ու ձեզի

Հետ բնակի, Աստուածաշունչին ճշմարտութիւններուն գիտութիւնը ձեզի ճանչցընէ, ձեզ առաջնորդէ այն ճշմարտութիւնները սիրելու և անոնց հնագանդելու, ձեզ մեղքէ ետ պահէ և միշտ Քրիստոսի նայել տայ, մեղքին զօրութենէն փրկէ, և քանի որ ողջ էք ձեզ հաւատարիմ ընէ Աստուածոյ ծառայելու, ձեր ընկերացը աղէկութիւն ընելու, մահուան ժամանակն ալ ձեզ պատրաստէ Յիսուս Քրիստոսի Աստուածոյ Որդւոյն երախտիքը գերագոյն և երջանիկ աշխարհի մը մէջ յաւիտեան վայելելու։

---

## ԳԼՈՒԽ ԺԵ

Յանձնեածոյ եղբայրներէն մէկուան սրբակն անոր ուսուցին մէջէն ի'եւէ Ամենու իւ վախուան Զար եւեղճ ու Յանձնոյ ուրանուենան իւ որդուուը ըստածներուն վրայ Յիսուսէնէ անօդու և ժէլ եսուեւը Յանձնոյ հրաման ըստւը որ Բնինեամին երկայ Յանձնոյն վանդն իւ հայրը համոզէլու։

Յովսեփայ եղբայրները քիչ մը ժամանակ ճամբայ երթալէն ետքը, ինչպէս որ կը կարդանք Աստուածաշունչին մէջ, պանդոկ մը մտան կերակուրուտելու և իրենց էշերուն կերակուր տալու։

Երբ անոնցմէ մէկն իր քուրձը կը բանար իր էշուն համար կերակուր հանելու, տուած ստակը քուրձին մէջ գտնելով շատ զարմացաւ, և շուտով գնաց իր եղբայրներուն պատմեց, անոնք ալ շատ խռովեցան և կասկածով լեցուեցան, թէ թերևս Եղիպտոսի իշխանը կամ ուրիշ չար մարդ մը ըրած էր այն բանը, որ անոնց ետ դարձած ատենը զանոնք իբրև գող դատապարտել տար։

**Խորհեցան** թէ աս ալ ուրիշ նշան մըն էր **Առ** տուծմէ, որ կ'ուզէր զանոնք պատժել իրենց առջի չարութեանը համար։ **Առդարև**, **Աստուծոյ** նախախնամութիւնն էր որ այս դիպուածներն այսպէս կը տնօրինէր իր տհաճութիւնն անոնց յայտնելու համար։ ուստի անոնք յիրաւի խոռվեցան և կ'ըսէին, **Ասէնչ** բան է որ **Աստուծած** մեղի ըրաւ։ **Զար** խիղճ մը **Աստուծոյ** նախախնամութեան վրայ խորհելով ամենելին մխիթարութիւն չի կը րնար գտնել։ **Աստուծոյ** ամենատես աշքն ու ամենախնամ ձեռքը մեղաւորներուն տառապանաց և նեղութեան պատճառ են։

**Յակոբայ** որդիքն իրենց երկիրը հասնելով, Եղիպտոսի մէջ պատահածներն իրենց հօրը պատմեցին. և երբ ցորենի քուրծերը պարպեցին, տեսան որ ամենուն ստակն իր քուրծին մէջն էր։ **Այս** բանիս վրայ **Յակոբ** և **որդիքը** շատ զարմացան և վախցան։

**Յակոբ** անոնց ըստ, **Զիս** իմ սիրելի որդիներէս զրկեցիք. **Յովսէփ** չկայ, **Շմաւոն** չկայ, **Բենիամինն** ալ պիտի տանիք. ասոնք ինծի մեծ վիշտ են։

**Առդարև** **Յակոբայ** այնպէս թուեցաւ թէ բոլոր իր գալու տարիներուն ակնկալութեանցը վրայ մութ ամպ մը եկած էր։ **Անիկայ** արդէն շատ նեղութիւններ կրած էր, և կը կարծէր թէ այնուհետև աւելի պիտի կրէր։ **Մոռցած** էր **Աստուծոյ** նախախնամութիւնը, որ կարող է չարիքէն բարիք հանել. ուստի իր հոգւոյն դառնութեամբն աղաղակեց ըսելով, իմ զաւկներուս պատահած բաներն ինծի մեծ վիշտ են։

**Զէր** գիտեր թէ այն դէպքերը որոնց համար հիմա կը վշտանար՝ զՅովսէփ նորէն անոր գիրկը

պիտի բերէին, և թէ իր ընտանեացը մխիթարութեան պատճառ պիտի ըլլային։

**Ո**ուրէն տեսնելով հօրը դժուարութիւնները զբենիամին Եղիպտոս զրկելու, իբր թէ անոր սիրոն առնելու համար ըստ, իմ երկու որդիքս մեռցուր, եթէ Բենիամին քեզի շղարձընեմ. անիկայ իմ ձեռքս տուր ու ես նորէն քեզի կը բերեմ։ Յիմարական և չար էր Ոուբենի խօսքը. ի՞նչ իրաւունք ունէր Ոուբեն իր որդիքը մեռցընելու հրաման տալու. և եթէ Բենիամինը կորմացընելու ըլլար, ի՞նչ օգուտ պիտի ըլլար Յակոբայ այն երկու անմեղ տղաք մեռցընելէ։

**Ո**ուբենի խօսքը Յակոբայ ազդեցութիւն չըրաւ. Անիկայ խորհելով թէ Բենիամինէն պիտի զատուէր, շատ կը վշտանար. Իմ որդիս ձեզի հետ պիտի չգայ, ըստ անոնց, քանզի անոր եղբայրը մեռած է, ինքն ալ մէկ հատիկ մնացած է. և եթէ ձեր դացած ճամբուն մէջ անոր վտանգ մը պատահի, իմ ծերութիւնս տրտմութեամբ գերեղման պիտի իջեցընէք։

**Ա**յս միջոցին սովը Քանանու երկրին մէջ երթալով սաստկացաւ։ Վերջապէս Յակոբ, անոր որդիքը և անոնց ընտանիքը Եղիպտոսէն գնուած ցորենը սպառեցին, և ուրիշ հնարք չկար ցորեն ստանալու բայց նորէն Եղիպտոս երթալով։ Ուստի Յակոբ հրամայեց իր որդւոցը որ նորէն հոն երթան։ Անոնք աղէկ գիտէին, որ եթէ Բենիամին մէկտեղ տանէին, Եղիպտոսի կառավարն անոնց անտարակոյս ցորեն կու տար։ Ուստի Յուդա իր հօրն ըստ, Այն մարդը (այսինքն Յովսէփ) մեզի ըստ որ, եթէ ձեր եղբայրը ձեր հետ չըլլայ, դուք իմ երեսս պիտի չտեսնէք։ Եթէ Բենիամին մեզի հետ կու դայ, ցորեն գնելու կ'երթանք

**Եղիպտոս**, ապա թէ ոչ չենք երթար, քանզի առանց անոր չենք կրնար այն մարդուն ներկայանալ:

Ծերունի նահապետը սկսաւ վարանիլ. ինք, որդիքը և անոնց ընտանիքներն անօթութենէ մեռնելու վտանգի մէջ էին. եթէ ցորեն չգնուէր, սովամահ պիտի ըլլային։ Բայց զբենիամին ալ կը սիրէր Յակոբ իր կենացը պէս, և ի՞նչպէս կրնար այնպիսի սիրելի զաւկէ մը զատուիլ։ Յակոբ իր հոգւոյն տառապանքէն իր որդիքը նախատեց անոնց անխոհեմութեանը համար։ Ոսաւ անոնց, ինչու համար այն մարդուն ըսիք թէ ուրիշ եղբայր մ'ալ ունիք, և այս տարակուսանքն իմ գըլխուս ըերիք։

Անոնք պատասխան տուին թէ, ի՞նչպէս կրնայինք ընել. մարդը մեզի յատուկ հարցումներ կ'ընէր մեր տանը վիճակին վրայ։

Հարցուց մեզի թէ, Զեր հայրը տակաւին ո՞ղջէ, և թէ ուրիշ եղբայր ունի՞ք. մենք ալ պարտաւորեցանք անոր հարցումներուն պատասխան տալ։ Կրնայի՞նք գիտնալ որ ան մեզի պիտի ըսէր թէ բենիամին Եղիպտոս ըերէք։ Յակոբ գեռերկբայութեան մէջ էր, ու մտքին մէջ խռովութիւնը գեռ կը տիրէր։ Որդիքը տեսան որ պէտք էր զանի համոզել աղաչելով, որ հրաման տար իրենց կրտսեր եղբայրը մէկտեղ տանելու։

Յուդա համարձակութեամբ ըսաւ հօրը, Տղան ինծի հետ զրկէ, որ մենք, դուն և մեր զաւկը ները ողջ մնանք։ Խոստացաւ բենիամինի յատուկ հոգ տանիլ, և ամէն ջանք և զգուշութիւն ընել անիկայնորէն ողջ և առողջ հօրը դարձրնելու։ Եթէ տղան նորէն քեզի չըերեմ, ըսաւ, թողյանցաւոր և անարդ ըլլամքու առջեղ։

## ԳԼՈՒԽ ԺԹ

Բենիամին առանելու համար Յակովայ, հաճախ նիւթե առալը ։ Ե-  
ժիղոսոսի հառավարչին համար պատրաստուած ընծանելը ։ Յա-  
կովայ որդուց ճամփայ եւ լուր ։ Անոնց Յաջուտայ ներկայակալը ։  
Անոնց վախը ։ Յանցանուը վախ յառաջ իւ բերե ։ Յաջուտայ  
ճամփակարչին անոնց վախը մեղմացնելը ։

**Յ**ակոբ խորհելով թէ ժամանակ կը կորսնցընեն  
այնպէս նստելով, և թէ եթէ ժամանակին ճամ-  
բայ ելած ըւլային՝ թերես Եղիպտոս գացած ու  
նորէն գարձած կ'ըւլային, հաճեցաւ Բենիամինը  
զրկել ։ Եթէ, ըստ, այսպէս ընել հարկէ, ըրէք ։  
Կամ ձեզ ամենքդ անօթութենէ մեռած պիտի  
տեսնեմ, և կամ իմ ամենէն կրտսեր և սիրելի որ-  
դիէս Բենիամինէն պիտի զատուիմ որ ձեր ալ եղ-  
բայրն է. լաւագոյն է որ Բենիամինը տամ. գացէք  
զաւկըներս, բայց կ'ուզեմ որ ձեր բոլոր զօրու-  
թեամբը ջանաք Եղիպտոսի կառավարին բարեկա-  
մութիւնը ստանալ ։

Թերես անիկայ կը կարծէ թէ ձեր քուրձերուն  
մէջ գտնուած ստակը դուք դողցաք ։ Դուք ալ  
ձեր չդողնալը պարտիք հաստատել ։ Մեր երկրին  
արդիւնքին անոր ընտիր բաներ ընծայ տարէք ։  
բալասան, մեղր, համեմ, ստաշխ, ընկոյզ, նուշ.  
և առջի անգամուն պէս ցորենի համար ստակ  
առէք, ետ բերուածն ալ տարէք որ սխալմամբ կամ  
թերես դիտմամբ ձեր քուրձերուն մէջը դրուած  
էր, և անկէ վսաս մը չդայ ձեզի ։

Բենիամին ալ հետ առէք ու ելէք գացէք այն  
մարդուն, ամենակարողն Աստուած ձեզի ողորմի

ան մարդուն քով, որ ձեր միւս եղբայրն ու Բենիամին ձեզի հետ արձակէ: Եթէ ես իմ զաւկը ներէս պիտի զրկուիմ, թող զրկուիմ:

**Յ**ակոբայ որդիքը շուտով ճամբու համար պէտք եղած պատրաստութիւններն ըրին, ինչպէս **Յ**ակոբ անոնց ըսած էր. և **Յ**ուդա զԲենիամին իր յատուկ պաշտպանութեանը տակ առաւ: **Ա**յսպէս անոնք ճամբայ ելան **Ե**գիպտոս երթալու:

**Ա**նտարակոյս **Բ**ենիամինի բաժանումը շատ դառն եղաւ **Յ**ակոբայ: **Ա**նիկայ ամենուն, մանաւանդ **Յ**ուդայի, պատուիրելէն ետքը որ **Բ**ենիամինի աղէկ հոգ տանին, ամենակարող **Ա**ստուծոյ առաջնորդութիւնն ու պաշտպանութիւնը մաղթելով՝ իր օրհնութիւնը տուաւ անոնց:

**Ա**նոնց կանայքն ու զաւկըններն ալ նոյնպէս ներկայ էին իրենց հրաժարական ողջոյնը տալու: **Վ**երջապէս ողջագուրուելով իրարմէ զատուեցան. բայց մինչև որ ճամբորդները հեռուն եղող բլրոյն ետեի կողմն անցան, անոնց ընտանիքներն անշուշտ կեցած կը նայէին անոնց ետեէն, մինչև որ ալ անհետ եղան:

**Կ**րնանք հաւատալ թէ **Յ**ակոբ իր զգացումներն **Ա**ստուծոյ առջեր թափեց, և իր զաւկըններն անորնախախնամութեանն ու օրհնութեանը յանձնեց, քանզի գիտէր թէ **Ա**ստուած կարող էր զանոնք պահել: **Ա**ղօթիւք խնդրեց նաև անտարակոյս **Ա**ստուծմէ զօրութիւն այն փորձութեան ժամին համբերելու, և **Ա**ստուածային կամացը հնազանդելու: **Ո**վ վշտացեալ ծերունի, **Ա**ստուած քեզի համբերութեան և իր կամացը հնազանդելու դասմը կու տայ, որ սորվիս թէ ինչպէս պէտք է ամէն բան անոր յանձնել: **Մ**ութ ամպերը որ քու աշքիդ առջեւ տարածուած կ'երեւին՝ շուտով ցիր

ու ցան պիտի ըլլան, ետքը պայծառ և փայլուն օր մը պիտի ծագի քեզի, և խաղաղութեամբ գերեզման պիտի իջնես :

**Վ**երջապէս Յովսեփայ Եղբայրներն Եգիպտոսս հասնելով նորէն անոր առջև ելան : **Ա**րդեօք Յովսէփի ինչ զգաց, երբ տեսաւ իր սիրելի համամայր Եղբայրը Բենիամին, որուն հետ մանկութեան ատենը շատ երջանիկ օրեր անցուցած էր, և որուն տեսութենէն զրկուած էր շատ տարիներէ ՚ի վեր : Յովսէփ զանիկայ տեսնելով անտարակոյս շատ դէպքեր յիշեց, և գութն այն աստիճան շարժեցաւ որ քիչ մնաց ինքզինք պիտի յայտնէր, և հազիւ կրցաւ բռնել իր զգացումը :

Յովսէփ որչափ գորովագութ էր, այնչափ ալ հաստատամիտ էր, ուստի և կրցաւ ինքզինք զսպել և ամենեին կասկածել չտուաւ թէ անոնց ով ըլլալը գիտէր :

**Զ**ենք գիտեր թէ Յովսեփայ տեսութիւնն իր Եղբայրներուն հետ ուր եղաւ, բայց յայտնի է թէ իր տանը մէջ չէր. քանզի Աստուածաշունչէն կ'իմանանք որ անիկայ իր մատակարարին հրամայեց Եղբայրները տուն տանիլ, և ամէն բան պատրաստել անոնց ճաշու համար՝ իր կերած սովորական ժամուն . պատուիրեց նաև որ այն հացկերոյթը շատ առատ ու շքեղ ըլլար :

**Մ**ատակարարը Յովսեփայ ըսածին պէս ըրաւ : Երբ Յակոբայ որդիքը Յովսեփայ պալատը պիտի մտնէին, սկսան վախնալ : Կարծելով թէ քուրձերուն մէջ գտնուած ստակներուն համար պիտի դատուէին, և իրենց բոլոր ունեցածներէն զրկուելով Յովսեփայ գերի պիտի ըլլային :

**Ե**թէ այսպէս ըլլար, արդարեւ ճշմարիտ հատուցում մը եղած պիտի ըլլար անոնց որ իրենց եղ-

բայրն իբրև գերի ծախած, իրենց ծերունի հայրն ալ խաբելով անոր այնչափ վիշտ պատճառած էին: Անոնք գիտէին որ այնպիսի պատժոյ մը արժանի էին. և զարմանք չէ որ կը վախնային, քանզի գիտէին թէ Աստուծոյ արդար դատաստանը կրնար այն պատիժն անոնց վրայ բերել:

**Գիտցէք**, սիրելի տղաք, որ բան մը մարդս այնչափ չի վախցըներ, որչափ յանցաւոր խիղճը:

**Աստուծաշունչը** մեզի կ'ըսէ թէ ամբարիշտն առանց մէկէն հալածուելու կը փախչի, բայց արդարն առիւծի պէս յանձնապաստան է: **ԱրդՅովսեփայ** եղբայրներն այս վարանման մէջ ըլլալով, դեռ պալատին դրան առջեր մատակարարին մօտեցան, և սկսան զիրենք արդարացընել իրենց քուրձերուն մէջ դտնուած ստակներուն համար: **Մանր** պատմեցին անոր թէ ինչպէս դտան այն ստակները, և ըսին թէ ետ բերած էին զանոնք՝ նորէն հատուցանելու համար, և թէ ամենեին չէին գիտեր թէ ինչպէս այն ստակներն իրենց քուրձերուն մէջ դրուած էին:

**Մատակարարն** անոնց խռովութիւնը տեսնելով շանաց զանոնք հանդարտեցընել, ըսելով թէ չվախնան, ասոր համար իրենց վնաս մը պիտի չպատահի:

Թերևս մատակարարը **Յովսեփայ** ընտանիքին մէջ ըլլալով **Աստուծապաշտ** էր, ուստի և իբրև **Աստուծմէ վախցող** և անոր հնազանդ կը խօսէր: Խաղաղութիւն ըլլայ ձեզի, ըսաւ. մի վախնաք, ձեր **Աստուծն** ու ձեր հօրն **Աստուծը** դրաւ այն ստակներն իբրև պարգև ձեր քուրձերուն մէջ. ես ձեր ստակն առած եմ: **Ըսել կ'ուզէր** թէ ցորենի համար ձեր ստակն անգամ մը իմ ձեռքս հասած է, և իմ այն ստակներն առնելուս խոտովանութիւնը բաւական է ձեր շիտակ մարդիկ

ըլլան իմացընելու։ Ուստի պէտք չէ որ հոգ ընէք թէ անոնք ինչպէս ձեր քուրծերուն մէջ դտնուեցան։

Անոնք իմ տէրոջմէս իբր ընծայ մը պահեցէք, և համարեցէք թէ զանոնք ձեզի իբրև պարզեղրկած է Աստուծոյ նախախնամութիւնը զոր պաշտել կը դաւանիք, որուն ձեր ծերունի հայրն ալ ապաւինած է։

---

## ԳԼՈՒԽ Ի

**Ե**ւառուն բանակն իը հանուելու է Յովակայ եղբայրներն երենց առարած ընծանելու անոր իւր առան։ Յովակայ եր զէտացումները դժուարաց իը զաղէ։ Եղբայրներն անոր հետ հայ ի՞նուրեն։ Ժումակալունեան վրայ ժանի մը իօսու։

**Կ**ը յիշէք որ Շմաւոն Եղիպտոսի մէջ պահուեցաւ Յովսեփայ հրամանաւ, մինչև որ միւս եղբայրները զԲենիամին Եղիպտոս բերէին։ Բենիամին դալէն ետքը անիկայ պիտի արձակուէր։ Ուստի մատակարարը զՇմաւոն առնելով միւսներուն քով բերաւ, և բոլորն ալ Յովսեփայ պալատը տարուեցան։ Մատակարարն այն ժամանակի սովորութեան համեմատ անոնց ջուր տուաւ որ իրենց ոտուըները լուան, անոնց էշերուն ալ կեր տուաւ։ Այս միջոցին Յովսեփայ եղբայրները Յովսեփայ տալու համար իրենց բերած ծանրագին ընծաները պարաստեցին, քանզի գիտէին թէ Յովսէփ քիչ մը ետքը պիտի գար կերակուր ուտելու։ Նաև իմացան որ իրենք ալ հոն պիտի ճաշէին։ Երբ Յովսէփ եկաւ, անոնք իրենց ընծաներն անոր տուին, և մինչև դետինը ծռելով երկրպագութիւն ըրին

անոր, այսպէս Յովսեփայ երազը զարմանալի կեր՝  
պով նորէն կատարուեցաւ։ Յովսէփի իր թարգմա-  
նին միջոցաւ հարցուց անոնց թէ ինչպէս են, և  
թէ ողջ է տակաւին իրենց ծերունի հայրը։ Անոնք  
պատասխան տուին թէ Քու ծառադ մեր հայրը ողջ  
առողջ է. և ծռելով նորէն երկրպագութիւն ըրին։  
Յովսէփի իր խօսքը Բենիամինի վրայ դարձրնելով,  
որպէս թէ անիկայ չէր ճանչնար, ըստ, Այդ է  
ձեր կրտսեր եղբայրը որուն համար անցեալ ան-  
գամ խօեցաք։ Երբ անոնք Այո, պատասխանը  
տուին, Յովսէփի դժած հօր մը պէս քաղցր և հա-  
մեստ կերպով մը ըստ անոր, Աստուած քեզի  
ողորմի, որդեակ։

Յովսեփայ Բենիամինի վրայ ունեցած սէրն այն-  
պէս սաստիկ էր, որ հազիւ կրցաւ այս խօսքերն  
ըսել. իր զդացումներէն յաղթուելով ուրիշ բան  
չկրցաւ ըսել. և իր եղբայրներուն առջև չկրնա-  
լով կենալ, շուտով սենեակ մը դնաց, ուր դառ-  
նապէս լացաւ։ Սակայն լացած ըլլալը չյայտնելու  
համար երեսը լուալով դարձեալ անոնց քով եկաւ,  
և հանդարտութեամբ հրամայեց որ անոնց համար  
պատրաստուած կերակուրը ներս բերուի։ Յովսէփի  
առանձին կերաւ, ինչպէս որ սովորութիւն էր թա-  
գաւորաց, կառավարչաց և ուրիշ աղնուականաց։  
Քանի մը Եղիպտացիներ ալ կային, որոնք անոր  
ընտանեաց մէկ մասը կը կազմէին, կամ հացկերոյ-  
թին հրաւիրուած էին. անոնք ալ զատ կերան,  
Յովսեփայ եղբայրներն ալ զատ։

Աստուածաշունչը մեզի անոնց այսպէս զատ ու-  
տելուն պատճառը կ'ըսէ։ Եղիպտացիք Երրայեցւոյ  
մը հետ հաց ուտելը դարշութիւն, այսինքն պիղծ  
և գէշ բան մը կը համարէին։

Ոմանք կը կարծեն թէ Եղիպտացւոց այս դար-

շանքն անկէ յառաջ կու դար, որ անոնք կը պաշտէին եզեր և ուրիշ անասուններ զորոնք Երրայեցիք կը մորթէին և կ'ուտէին, կամ զո՞ն կ'ընէին։ Ուրիշներն ալ կը կարծեն թէ Երրայեցիները հովիւ ըլլալով՝ Եգիպտացւոց դարշելի կը համարուէին, քանզի ժամանակաւ շատ մը հովիւներ Եգիպտոսի վրայ յարձակելով բնակիչներուն շատ անիրաւութիւն ըրած էին։ Բայց ասոնք կարծիք են. բուն պատճառը չի կրնար դիացուիլ, քանզի դէպքը շատ հին է, և անոր նկատմամբ ստոյդ տեղեկութիւն մը չկայ։

Երբ Յովսեփայ եղբայրները սեղան նստելու վրայ էին, Յովսէփի խնդրեց որ անոնք իր ուզած կարգովը նստին։ Այնպէս նստելով տեսան որ իրենց տարիքներուն կարգով նստած էին՝ Ռուբէնին սկսեալ մինչև Բենիամին, և շատ զարմացան։

Արդարեւ ասիկայ շատ զարմանալի թուեցաւ անոնց, և պատճառը չէին կրնար հասկրնալ։ Յովսեփայ առջև շատ տեսակ կերակուրներ դրուած էին ինչպէս որ սովորութիւն էր, և Յովսէփի զանոնք իր բոլորտիքը եղողներուն բաժնեց։ Երբ Յակոբայ որդիքն իրենց ամէն մէկուն տրուած բաժիններուն շատութեանը նայեցան, դարձեալ զարմացան՝ տեսնելով որ Բենիամինին բաժինը հիսդանդամ աւելի էր միւսներուն բաժնէն։

Անոնք այն հացկերոյթը վայելեցին, և Յովսեփայ հետ գինի խմելով շատ ուրախացան, ինչպէս որ գրուած է Աստուածաշունչին մէջ։ Ասկէ ամեննեին կարծելու չէ թէ անոնք չափազանց կը խմէին։ Եթէ ժամանակ ունենայի, սիրելի տղաք, հոսքի մը պիտի կենայի ժուժկալութեան վրայ ձեզի քանի մը բան ըսելու. այսինքն՝ թէ ինչպէս պէտք է չափաւոր ըլլալ ուտելու և խմելու մէջ,

թէ ժուժկալութիւնը որչափ առողջ , բարեբարոյ և կորովամիտ կ'ընէ զմարդ , և թէ տղաք ժուժկալ մեծնալով , օգտակար ու երջանիկ մարդիկ կ'ըլլան . Եթէ ժուժկալ ըլլաք , ձեր օրինակը կ'ըլլան . Եթէ ժուժկալ ըլլաք , աղիտի ընէ ձեր եղատ աղէկ աղդեցութիւն պիտի ընէ ձեր եղատ աղդեցութիւն , քոյրերուն և ընկերներուն վրայ . Եթէ բաւական մեծ էք , կը յուսամ թէ արդէն ժուժկալութեան օրինակ եղած էք և կը ջանաք ուրիշներն ալ յորդորել ժուժկալ ըլլալու :

Աղէկ գիտցէք որ անժուժկալութիւնը մարդուս անձին , անոր ընտանեացը և բոլոր աշխարհի անէծք է . ընդհակառակն , ժուժկալութիւնը կու տայ առողջութիւն , ոյժ , ժրութիւն , զուարթութիւն , մոքի աղէկ յատկութիւններ , ու խղճի խաղաղութիւն . Ասոնք ձեզի առատ հատուցում մը պիտի ըլլան ժուժկալութեան համար ձեր ըրած ջանքերուն փոխարէն :

## ԳԼՈՒԽ ԻԱ

Յանեստայ եղբայրներուն Եժեղոտուե ճաճբայ ելլեւ երես երկեր դառնալու համար : Յանեստայ մարտակարարէն անոնց եղուկն հասնելով , և , Կառավարէն բաժակը գողցած ետ , ըսելով , զանոնտ աճառապանելը : Այս բաժակէն ինչ ըլլաւ : Բաժակէն Բէնիս մինչ ուրբէն հզ գոնուելը : Անոնց ետ դառնալով Յանեստայ առջև ելլեւ : Յանեստայէ երես յանցանելը իսուսովանելը : Յանեստայ ինչ համար այսպէս ընելը :

Յովսեփայ եղբայրներն իրենց միտքը դրած էին որ հետեւեալ առտուն ճամբայ ելլեն իրենց երկիրը դառնալու : Մատակարարը որ անոնց տանելու ցորենը պիտի պատրաստէր՝ Յովսեփայ հրամանաւ

անոնց քուրծերն առատօրէն լեցուց, ամէն մէկուն  
վճարած ստակն ալ իր քուրծին բերանը, Յովսէ-  
փայ արծաթէ բաժակն ալ Բենիամինի քուրծին  
մէջ դրաւ :

**Մ**ատակարարն այս հրամանները կատարեց Յով-  
սէփայ եղբայրներուն չիմացընելով. և այսպէս  
անոնք հետևեալ առտուն կանուխ ճամբայ ելան :

Փիչ մը երթալէն ետքը, մինչդեռ քաղաքէն  
շատ հեռացած չէին, Յովսէփ հրամայեց մատա-  
կարարին որ անոնց ետևէն երթալով ըսէ թէ ինչու  
համար կառավարին անոնց ըրած մարդասիրու-  
թեանը փոխարէն չարութիւն ընելով, անոր բաժակը  
գողցան : **Ն**աև ըսէ անոնց թէ այն բաժակէն կա-  
ռավարը դինի կը խմէ և հմայութիւններ կ'ընէ,  
ուստի և անիկայ գողնալով շատ դէշ բան ըրին :

**Ո**մանք կը կարծեն թէ Եգիպտացւոց մէջ աւե-  
լորդապաշտ մարդիկ կը կարծէին թէ այնպիսի բա-  
ժակներ, կամ Յովսէփայ այն բաժակը միայն,  
այնպիսի զօրութիւն մը ունէր որ անոր մէջ նայող-  
ները պատահելու բաններն առաջուց կը տեսնէին,  
կամ թէ անցած գացած բան մը և մէկու մը ըսածը  
կամ ըրածը կը գիտնային : **Ո**ւստի և շատերը կը  
կարծեն թէ մեր **Ա**ստուածաշունչին մէջ հմայել  
թարդմանուած բառն այս նշանակութիւնն ունի.  
ուրիշներն ալ կը կարծեն թէ այն բառը, մէջը  
փնտուել, կը նշանակէ : **Ա**յս վերջի կարծիքն ու-  
նեցողները կ'ըսեն թէ մատակարարը Յովսէփայ  
հրամանաւ անոր եղբայրներուն, **Դ**ուք իմ տէրոջս  
գեղեցիկ բաժակը գողցած էք ըսելէն ետքը, իմա-  
ցուց անոնց թէ անիկայ պիտի հմայէ . այսինքն՝  
շատ զգուշութեամբ փնտուել պիտի տայ, ուստի  
և գողցողն անտարակոյս պիտի գտնուի : **Ա**յս  
մեկնութիւնն աւելի հաւանական կ'երևի :

Մատակարարը Յովսեփայ ըսածին պէս ըրաւ :  
Թէ Յովսեփայ եղբայրներն այս խօսքը լսելով որ  
չափ զարմացան՝ դիւրին է երևակայել :

Անոնք իրենց զարմանքը սկսան յայտնել սա  
խօսքով . Ի՞նչու համար մեր տէրն այս խօսքերը  
կ'ըսէ . քաւ լիցի որ քու ծառաներդ այս կերպ  
բան մը ընեն : Մենք մեր քուրձերուն մէջ գըտ-  
նուած ստակն անդամ Փանանու երկրէն ետ բե-  
րինք , ինչպէս կրնայ ըլլալ որ քու տէրոջդ տու-  
նէն արծաթ կամ ոսկի գողնանք : Մեր մէջէն ան  
որուն քով այն բաժակը գտնուի՝ թող մեռնի ,  
մենք ալ մեր տէրոջը գերի կ'ըլլանք : Մատակա-  
րարն անոնց ըսաւ , Ոչ , թող այն միայն որուն քով  
բաժակը կը գտնուի՝ մեզի գերի ըլլայ , և գուք  
անպարտ եղէք : Մատակարարն Յովսեփայ կողմէն  
այսպէս խօսեցաւ , թէպէտ Յովսէփ այնպէս պիտի  
չվարուէր անոնց հետ : Յետոյ քուրձերը վար առ-  
նուեցան որ բաժակը փնտուուի : Մեծէն սկսուե-  
լով՝ ամենուն քուրձերը փնտուեցան , և բաժակը  
Բենիամինի քուրձին մէջ գտնուեցաւ :

Բաժակն իրենց քովին ելլելուն համար անոնց  
զարմանքն ու տրտմութիւնը խօսքով բացատրել  
անհնար է : Ուստի անոնք իրենց հանդերձները  
պատռելով , ինչպէս որ հին ատենը մեծ գժբախ-  
տութեան մը կամ սաստիկ տրտմութեան ատեն ընել  
սովորութիւն էր , ցորենի քուրձերը նորէն էշերուն  
վրայ բեռցընելով մատակարարին հետ քաղաք դար-  
ձան : Յովսեփայ առջե ելլելով՝ ամէնքը մէկէն գե-  
տինը ծռեցան և անոր խոնարհութիւն ըրին : Երբ  
ոտք ելան , Յովսէփի անոնց ըսաւ , Ի՞նչու համար բա-  
ժակս առիք . չէի՞ք գիտէր որ ինծի պէս մարդ մը  
ամէն իշխանութիւն իր ձեռքն ունի քննելու , և  
զգուշութեամբ կրնայ փնտռել և գողցողը գտնել :

Յուդա իր եղբայրներուն կողմէն սա պատասխանը տուաւ . Ի՞նչ ըսենք մեր տիրոջը , ի՞նչ խօսինք կամ ի՞նչպէս արդարացընենք զմեզ : Առ տուած քու ծառաներուդ անիրաւութիւնը յայտնեց . ահա մենք և ան որուն քով բաժակը գըտնուեցաւ՝ քու ծառաներդ ենք :

Կ'երևի թէ Յուդա շատ յոյս չունէր որ կարող պիտի ըլլար իրենց անմեղութիւնը ցուցընել . թերևս կը կարծէր թէ Բենիամին բաժակը գողցած էր : Բայց հաւանական է թէ առաջ ալ ասոր նման բան մը իրենց պատահած ըլլալուն համար՝ Յուդա խորհեցաւ թէ այն բաները կառավարին կամ ուրիշ մարդու մը հնարքն էին , որպէս զի զանոնք յանցաւոր ընելով սաստիկ պատժէ :

Ուստի Յուդա յուսահատութեան կերպով մը խոստովանեցաւ , թէ չեին կրնար զիրենք արդարացընել . կամ թերևս կը յուսար թէ այս կերպով Բենիամինի կեանքը կրնար ազատել , որուն համար երաշխաւոր եղած էր : Նաև կը խորհէր որ , եթէ զիրենք բոլորովին կառավարին գթութեանը յանձնելով , խոնարհութեամբ իրենք զիրենք իբրև յանցաւոր խոստովանէին , թերևս կառավարին սիրտը մեղմանալով զանոնք մահուամբ կամ բանտարկութեամբ չպատժէր , և այնպէս ժամանակ ունենային իրենց անմեղութիւնը ցուցընելու միջոց մը գտնել :

## ԳԼՈՒԽ ԻԲ

Յովսենիայ առահաւըն էր Եղբայրները Երկնայնունեան մէջ պահանջուց Անոր Հարութիւն վրայ խորհնելու բաներ Անոր Յովուտայ առանձ աղաքատախանը Յովուտայի աղաղանիը ։

**Ա**յս դէպքով Յովսեփի ուրիշ պատեհութիւն մ'ալ ունեցաւ իր Եղբայրները պատժելու ։

Կրնար այն բաժակը գողնալու մասնաւոր յանցանքը թողուլ, և աւելի մեծ յանցանքի մը համար զանոնք յանդիմանել, այսինքն իրենց Եղբայրը գողնալով իրրե գերի ծախելուն համար ։ Եթէ անիկայ ուրանային և սուտ ըսէին ինչպէս որ իրենց հօրն ըրած էին, կարող էր անոնց ստութիւնը յանդիմանել և մեծապէս խայտառակել ։

Եթէ անոր սրտին մէջ վրէժինդրութեան ողի եղած ըլլար, ի՞նչ սաստիկ և արդար յանդիմանութեամբ կրնար զանոնք դատել և իր վրէժն անոնցմէ առնելով սրտին ոիր յագեցընել ։

Սակայն Յովսեփայ իր Եղբայրներուն վրայ ունեցած զգացումը շատ տարբեր էր ։ Յովսեփայ զանոնք այսչափ նեղելն ալ անտարակոյս անոր համար էր որ անոնք զգային թէ Աստուած այն նեղութիւնը և վտանգն անոնց վրայ բերաւ, որպէս զի Եղբայրատեցութեան և անդիութեան այն մեծ մեղքն անոնց ճանցընէր, և այնպէս զանոնք ապաշխարութեան բերէր ։

Զենք գիտեր թէ Յովսեփ Եգիպտոս Եղած ատենը ինչու համար չիմացուց Եգիպտացւոց իր ով ըլլալը, ոչ ալ իր հօրը և Եղբայրներուն վրայով անոնց տեղեկութիւն տուաւ, Աստուածա-

շունչին մէջ այս նկատմամբ մեզի բան մը ըսուած չէ։ Բայց կրնանք ըսել թէ Յովսէփ դիտմամբ և խորհրդով այսպէս ըրաւ։ Շատ հաւանական է որ Յովսէփ Եղիպտացւոց բնաւորութիւնը գիտնալով հասկցած էր թէ այնպիսի գաղանիք մը անոնց տալը՝ մսասակար պիտի ըւլար թէ իրեն և թէ իր ընտանեացը։

Հիմա դանք Յովսեփայ պատասխանին, զոր Յուդայի տուաւ։ Յուդա Յովսեփայ ըսած էր թէ, մենք բոլորս ալ քու ծառաներդ ենք։

Յովսէփ, Քաւ լիցի որ, ըսաւ, ես այնպիսի բան մը ընեմ. բաժակը որու քով որ գտնուեցաւ ան իմ ծառաս պիտի ըւլայ, դուք խաղաղութեամբ ձեր հօրը գացէք։

Արդարեւ ասիկայ սաստիկ փորձ մըն էր Յուդայի որ յանձնապաստանութեամբ ըսած էր իր հօրը թէ ամենեին պիտի չթողուր որ Բենիամինի մսաս մը պատահէր, այլ թէ զանի նորէն ողջ և առողջ Փերրոն պիտի դարձրնէր։

Յուդա Յովսեփէն այն խօսքը լսելով, ինչ կրնար ըսել կամ ընել։ Զէր կրնար ըսել թէ յանցաւոր չէին, քանզի արդէն խոստովանած էր թէ ամէնքն ալ, նաև Բենիամին, յանցաւոր էին։

Անոնք Եղիպտոսի մէջ օտարական էին, և այնպիսի մարդու մը ձեռքն ինկած էին, որ իշխանութեամբ թագաւորին երկրորդն էր։ Միջնորդ կամ բարեկամ չունէին, և այնպիսի ծանր յանցանքի մը, բուն իսկ իրենց խոստովանութեամբը, պարտաւոր եղած էին։

Եթէ այն յանցանքը միայն Բենիամինի վրայ մնար, ինչպէս որ հաւանական էր թէ պիտի մնար, Յովսէփ զանի իրեն գերի ընելով, այլ ևս Փերրոն

պիտի չդարձընէր, և այնպէս Յակոբայ ծերութիւնը տրտմութեամբ գերեզման պիտի իջնէր:

Երբ անոնք այս շփոթեալ ու յուսահատեալ վիճակին մէջ էին, Յուղա սրտառուչ և ցաւադին կերպով խօսեցաւ այսպէս. Կ'աղաչեմ քեզի, տէր իմ, թող որ ծառադ խօսք մը ըսէ քեզի, և բարձրութիւնդ թող չբորբոքի քու ծառայիդ դէմ: Զեմ համարձակիր առանց քու թոյլտութեանդ խօսիլ քու առջեղ, քանզի դու ալ Փարաւոնի պէս ես, և իշխանութեամբ անոր հետ հաւասար:

Տէր իմ, դու հարցուցիր մեզ, քու ծառաներուդ, թէ հայր և եղբայր ունի՞ք. մենք ալ մեր տիրոջն ըսինք թէ ծերունի հայր մը ունինք, և թէ մեր կրտսեր եղբայրն իր հօրը քով է, քանզի հօրը միսիթարութիւնն է. անոր եղբայրն ալ մեռած ըւլլալով, անիկայ իբրև միամօր որդի իր հօրը շատ սիրելի է:

Բայց և այնպէս պահանջեցիր մենէ անիկայ Եղիպտոս բերել. մենք մեր տիրոջն ըսինք թէ տղան իր հայրը չի կրնար թողուլ, և եթէ անկէ բաժնուի, խեղճ ծերունին կը մեռնի: Ան ատեն քու ծառաներուդ ըսիր որ, Եթէ ձեր կրտսեր եղբայրը մէկտեղ չբերէք, այլ ևս իմ երեսս չէք կրնար տեսնել:

Երբ քու ծառայիդ մեր հօրը դացինք, մեր տիրոջը պատուէրն անոր պատմեցինք: Եւ երբ մեր հայրն ուզեց որ նորէն Եղիպտոս գալով ցորեն դնենք, անոր ըսինք թէ, Զենք կրնար երթալ, եթէ մեր կրտսեր եղբայրը մեր հետ չգայ, քանզի առանց անոր չենք կրնար այն տեղի իշխանին ներկայանալ: Քու ծառադ մեր հայրը մեզի ըսաւ, Դուք գիտէք որ իմ կինս երկու որդի ունեցաւ, մէկը ձեռքէս ելաւ, և ըսիք թէ դազանակուր

եղաւ, և այն ժամանակէն՝ ի վեր անոր երեսը տեսած չէմ. հիմայ այս տղան ալ կ'ուզէք տանիլ, եթէ վտանգ մ'ալ ասոր պատահի, իմ ծերութիւնս տրտմութեամբ գերեզման կ'իջեցընէք :

Ուստի եթէ հիմայ ես քու ծառայիդ մեր հօրը առանց այս տղուն երթամ, անոր կեանքն ասոր կենացը հետ կապուած ըլլալով, երբ անիկայ տղան մեր հետ չտեսնէ, պիտի մեռնի, ու քու ծառաներդ՝ մեր հօրը ծառայիդ կեանքը տրտմութեամբ գերեզման իջեցուցած պիտի ըլլանք :

Ծառադ երաշխաւոր եղած եմ մեր հօրը, որ եթէ տղան նորէն անոր չդարձընեմ, յաւիտեան մեղապարտ ըլլամ անոր առջեւ :

Ուստի հիմայ կ'աղաչեմ քեզի որ այս տղուն տեղ ծառադ գերի ըլլայ, և անիկայ իր եղբայրներուն հետ երթայ, քանզի հօրս երեսն ի՞նչպէս տեսնեմ. թերևս չարիք մը պատահի անոր :

## ԳԼՈՒԽ ԻԳ

**Յ**ԱՆԴ ինչու ինչու եր եղբայրներուն կը յայտնէ : **Ա**ՆՈՐ եր եղբայրներուն բառձները : **Ա**ՆՈՒՅ յանցաներուն ներեւը : **Ս**ԵՐԵԼ պարստ է : **Ա**ՐԴԵԾ կարդացողն այս հոգին սակէ :

**Յ**ՈՒՂԱՅԻ աղաչանքն անօդուտ չեղաւ : **Յ**ՈՎԱԿԻ երբ իր եղբօրն ըսածը լսեց, մայրը, տունը, գերըն, Սիւքեմ, Դովթայիմ խկոյն անոր միտքն ինկան : **Ա**ՆԻԿԱՅ ամենեին չէր ուզեր որ իր ծերունի հօրը նեղութիւն պատճառող բան մը ընէ, և անոր ծերութիւնը տրտմութեամբ գերեզման իջեցընէ : **Մ**ԻՆՉ որ **Յ**ՈՒՂԱ իր խօսքը լմնցուց,

**Յովսէփ** ուշադրութեամբ մտիկ կ'ընէր փղձկեալ սրտով, ինչպէս որ դէմքէն ու ձայնէն կ'իմացուէր. և երբ չկրցաւ այլ ևս իր զգացումները զսպել, հրամայեց որ եղբայրներէն զատ բոլոր մարդիկ դուրս ելլեն, և ըսածին պէս եղաւ:

**Ան** ատեն **Յովսէփի** բարձր ձայնով սկսաւ լալ, այնպէս որ բոլոր տանը մէջ անոր ձայնը կը լսուէր. և այս զարմանալի վիճակին մէջ իր եղբայրներուն ըսաւ, **Ես** **Յովսէփին** եմ. տակաւին հայրս ո՞ղջ է: **Անոնք** ապշելով պատասխան չկրցան տալ: **Յով-** **սէփ** նորէն անոնց ըսաւ, **Կ'**աղաչեմ ձեզի, մօտ եկէք: **Երբ** անոնք քովը դացին, **Ես** եմ, ըսաւ նորէն, ձեր եղբայրը **Յովսէփի**, զոր դուք վաճառեցիք. բայց ասոր համար մի վախնաք: **Աս-** տուած ձեր առջևէն զիս հոս զրկեց, որ ձեր կեանքը փրկեմ: **Երկու** տարի է որ սով կայ երկրիս վրայ, և հինգ տարի ալ պիտի տեէ. այս միջոցին վար ու ցան և հունձ պիտի չըլլայ: **Աստուած** զիս ձենէ առաջ հոս զրկեց, որ ձեզ ու ձեր զաւկըներն աշխարհի վրայ պահպանեմ որ սովէ չմեռնիք:

**Դուք** չէիք որ զիս հոս զրկեցիք, այլ **Աս-** տուած, անիկայ զիս **Փարաւոնի** հայր ըրաւ, որ զանի խրատեմ, և հայրական խնամով անոր պաշտօններուն հոգ տանիմ, ու անոր տանը վրայ տէր, և բոլոր **Եղիպտոսի** երկրին մէջ կառավար ըլլամ:

**Շուտով** դացէք հօրս ըսէք, **Այսպէս** կ'ըսէ որ դիդ **Յովսէփի**, **Աստուած** զիս բոլոր **Եղիպտոսի** տէր ըրաւ: **Փութա** դալ հոս. **Գեսեմի** երկրին մէջ պիտի բնակիս, և դուն, քու որդիքդ ու թոռներդ, առջարներդ և ոչխարներդ և ինչ որ ունիս ինծի մօտ ըլլան: **Ես** հոս ձեզ պիտի կերակրեմ, քանզի տակաւին հինգ տարի սով պիտի ըլլայ. դու և բոլոր քուկիններդ նեղութիւն չկրէք:

**Ա**հա ձեր աչքն ու եղբօրս Բենիամինի աչքը կը տեսնեն որ իմ բերանս ձեզի հետ կը խօսի : Հիմա դացէք, Եղիպտոսի մէջ ունեցած բոլոր փառքս, և ինչ որ տեսաք հօրս պատմելով՝ անիկայ շուտով հոս բերէք : Յովսէփի Բենիամինի վզին վրայ ինկաւ ու լացաւ . Բենիամին ալ անոր վրայ ինկաւ և լացաւ . Յովսէփի միւս եղբայրներն ալ լալով համբուրեց, եղբայրներն ալ անոր հետ խօսեցան :

Ի՞նչ օդտակար և ազդու օրինակ է այս, սիրելի տղաք : **Ա**ստուած անիկայ ձեր վարժութեանը համար **Ա**ստուածաշունչին մէջ դրաւ : **Ա**րդարեւ դուք անկէ շատ օդուտ կրնաք քաղել : **Ա**ղէկ միտ դրէք Յովսէփայ վարուցը, քանզի արժանի է որ դուք անոր վարուցը նմանիք :

Բայց մենք Յովսէփայ եղբայրներուն դանք : **Ա**նոնք բոլորովին ապշած կը կենային անոր առջին . գիտէին որ շատ վսաներ ըրած էին անոր, և հիմա իմանալով թէ անիկայ Եղիպտոսի հզօր կառավարն էր, ո՞րչափ խոռվեցան, ի՞նչ մեծ ամօթ զգացին արդեօք անոր առջեր, երբ իրենց ըրածներն յիշեցին . թերեւս կը խորհէին թէ անոր սաստիկ յանդիմանութեանն արժանի էին : **Ա**րդարեւ, եթէ ոչ ծանր պատժոյ մը, գէթ սաստիկ յանդիմանութեան մը սպասելու պատճառ ունէին : Բայց ո՞րչափ Լցան զարմանօք, երբ տեսան որ այն իրենցմէ հարստահարեալ եղբայրը մարդասիրութիւն ընելու կ'աշխատէր անոնց . ամենեւին չէր մեղադրեր զանոնք, այլ կը ջանար անոնց ըրած չար գործն իբր **Ա**ստուծոյ նախախնամութեան կարգադրութեամբը թոյլ տրուած համարել, ցուցընելով թէ **Ա**ստուած էր որ ամէն բան այնպէս զարմանալի կերպով տնօրինած էր՝ իրեն, իր հօրը, եղբայրներուն և անոնց ընտանեաց օդտին համար :

**ԹԵՐԿՈ** Յովսէփի այս մասին չափէն աւելի քաղցըր էր, գիտնալով թէ ուրիշ աւելի յարմար ժամանակ մը պիտի գար՝ որ անոնք իրենց բոլոր ըրածներուն վրայ պիտի խորհէին։

Յովսէփ կ'ուզէր որ անոնք գիտնային թէ ինք բոլորովին ներած էր անոնց։ Եթէ կար բան մը որ զանոնք ապաշխարութեան կրնար առաջնորդել իրենց յանցանքին համար, անտարակոյս անոնցմէ այն աստիճան անիրաւութիւն կրող եղբօր մը ներող և անյիշաչար վարմունքն էր։

Դուք, տղաք, ձեզի մսասողներուն վրայ ի՞նչ զգացում ունիք, և անոնց հետ ի՞նչպէս կը վարուիք։ Կը յուսամ թէ ոչ ոք ձեզի մսաս մը ըրած է այն մսասին պէս, զոր Յովսեփայ եղբայրներն անոր ըրին։

Յովսէփ ամենելին վրէժ խնդրելու միտք չունէր անոնց ըրածին փոխարին։ ընդհակառակն, կ'ուզէր ըստ կարի անոնց բարիք հատուցանել։ Տեսէք, ի՞նչ մարդասէր, ազնիւ և բարի կերպով իր զգացումներն անոնց յայտնեց։ Յովսէփ անոնց ըրած չարութեանն ու անգիտութեանը վրայ ամենելին խօսք չըրաւ։ չուրախացաւ որ անոնք իր իշխանութեանը տակ ինկան։ յանդիմանութիւն, նախատինք չըրաւ զանոնք նուաստացընելու կամ թշնամանելու։ անոնց յանցանքին թողութիւն տալ ալ իրեն պարծանք չհամարեցաւ։

Դուք ալ ձեզի մսասողներուն վրայ այնպիսի զգացում ունեցած էք, ինչպէս որ ունէր Յովսէփ։ չէ՞ք ուզէր և չէ՞ք ջանար Յովսեփայ վարուցը նմանիլ։


Յովսէփ արդարեւ արժանի է որ անոր նմանիք։ Եթէ ձեզի մսասողներուն համար ձեր զգացումը Յովսեփայ զգացման պէս չըլլայ, եթէ անոր ըրա-

ծին պէս չընէք , անոր անիրաւ եղբայրներուն պէս  
եղած կ'ըլլաք , և այն վրէժինդրութեան չար  
կիրքը ձեր սրտին մէջ կ'աճի :

**Եթէ** դուք ձեզ այսպէս կը գտնէք , **Աստուծոյ**  
առջե ճշմարիտ ապաշխարութեան կարօտ էք . և  
ասկէ կը տեսնուի թէ ձեր սիրտը չար է , քանզի  
դուք **Յովսեփայ** ու **Քրիստոսի** հոգին չունիք :

**Քրիստոս** ներեց իր թշնամիներուն , այսինքն  
այն չար և անողորմ մարդոց որ զանի խաչ հանե-  
ցին . իր մեռնելու ըոպէներուն մէջ անոնց համար  
աղօթք ըրաւ , և անոնց համար **Աստուծմէ** թո-  
ղութիւն խնդրեց : **Անիկայ** մեզի ըսած է որ ,  
եթէ մեր թշնամիներուն , որ և իցէ կերպով մեզի  
չարիք ընողներուն չներենք , անոնց համար աղօթք  
չընենք , վերջապէս եթէ չարեաց փոխարէն բարիք  
չհատուցանենք , **Աստուծած** ալ մեզի պիտի չներէ ,  
այլ իր ներկայութենէն յաւիտեանս մեզ պիտի  
մերժէ :

**Այս** բաներուն վրայ խորհեցէք , և եթէ **Քրիս-**  
**տոսի** պատուիրածին պէս չէք դործեր , դուք ձեզի  
հարցուցէք թէ ձեր այս վիճակը պիտի չփոխուի՞ ,  
և **Աստուծոյ** հոգւովը պիտի չնորոգուի՞ք , որպէս-  
զի կարող ըլլաք յուսալ երկնից մէջ անոր ներկա-  
յութիւնն ու շնորհքը վայելելու :



## ԳԼՈՒԽ ԻԴ

**Փարաւոնի** և անոր ընտանեաց սուրախութեանը Յովսեֆայ  
Եղայրներուն Եժեղապահ գույք ։ **Փարաւոն** Յովսեֆայ  
իւ պատուիրել էր հայրը և բուլը անոր ընտանիւը Եժեղապահ  
հրաւերել ։ **Յովսեֆի** էր Եղայրներուն մամբու պատրաստութեանը  
իւ հոգայ ։ **Յովսեֆայ** պատուծ իրադա անոնց զարութելու ժամա-  
նակը ։ **Յովսեֆայ** և անոր Եղայրներուն մէջուղ Եղայր իրա-  
շութեանը ։

**Չ**ատ ժամանակ չանցաւ, **Եղիպտոսի** թաղաւորն  
ու անոր ընտանիքը լսելով որ ցորեն գնելու եկող  
այն մարդիկ **Յովսեփայ** եղբայրներն էին, և թէ  
անոր սիրելի հայրը տակաւին ողջ էր, շատ ուրա-  
խացան, և **Փարաւոն** **Յովսեփայ** վրայ ունեցած  
բարեկամութիւնը, և **Յակոբայ** ու անոր ընտանեաց  
երջանկութեանը համար ունեցած մարդասիրու-  
թիւնը ցուցընել ուզելով, **Յովսեփայ** պատուիրեց  
իր հայրը բոլոր ընտանիքով **Եղիպտոս** հրաւիրել:

**Ըսէ**, ըստ, եղբայրներուդ որ իրենց անա-  
սունները բեռցընելով **Քանանու** երկիրը երթան,  
և իրենց հայրն ու ընտանիքն առնելով հոս բերեն.  
անոնք **Եղիպտոսի** բարութիւնն ու պարարտու-  
թիւնը պիտի ուտեն ։

**Եղիպտոսէն** կառքեր ալ թող առնեն իրենց  
տղոցը և կանանցը համար ։

**Յովսեփայ** եղբայրները **Փարաւոնի** մարդասի-  
րութենէն շնորհակալ ըլլալով, անոր հրամայածին  
պէս ըրին ։

**Այն** ատեն հարուստ մարդոց սովորութիւնն էր  
հանդերձ տալ անոնց՝ որոնց մասնաւոլ յարգու-

թիւն և բարեկամութիւն ցուցընել կ'ուղէին ։  
Անոնք սովորաբար այլսայլ մեծութեամբ հան-  
դերձներ կը պահէին պէտք եղած ատեն անմիջա-  
պէս ընծայ ընելու ։

**Այս** սովորութեան համեմատ Յովսէփի իր եղ-  
բայրներուն շատ հանդերձներ տուաւ ։ Բաւական  
ստակ ալ տուաւ անոնց ամէն մէկուն . իսկ Բե-  
նիամինի երեք հարիւր կտոր ոսկի տուաւ , որ  
միւսներուն տուածէն հինգ անգամ աւելի էր ։  
Իր ծերունի հօրն ալ ընծաներ զրկեց՝ տասը էշ  
լեցուն Եղիպտոսի ազնիւ բաներէն , ուրիշ տասն  
էշ ալ լեցուն ցորեն , հաց և ընկոյզ Փանանէն  
Եղիպտոս գալու ատենը ճամբան գործածելու  
համար ։ **Վերջապէս** բոլոր պատրաստութիւննե-  
րը լմննալէն ետքը , Յակոբայ որդիքն իրենց եղ-  
բօրը մնաս բարով ըսելով , ճամբայ ելան Փերըն  
երթալու ։

Յովսէփ անոնց խրատ տուաւ ճամբան իրարու-  
հետ չկուռիլ . և այս խրատն անոնց շատ հար-  
կաւոր էր ։

**Անիկայ** կը խորհէր թէ թերես այն անիրաւու-  
թեան յանցանքը զոր , իրեն ըրած էին՝ իրարու-  
վրայ նետելով՝ կռիւ յարուցանէին իրարու ըսելով ,  
Դուն առաջարկեցիր , դուն պատճառ եղար որ մեր  
եղբայրը ծախեցինք ։ **Եւ** կամ թերես Ռուբէն և  
Յուդա ջանային զիրենք արդարացընել , սաստիկ  
նախատինք միւսներուն վրայ թափելով ։ Թերես  
Բենիամինի նախանձէին Յովսէփէն այնչափ սէր  
և պատիւ և աւելի ընծաներ ընդունելուն համար ։  
Կամ թէ ՚ի դարձին իրենց հօրը նեղութիւն տային  
ոչ միայն արդէն պատահած , այլ և պատահելու  
բաներու վրայ ալ դժուարութիւններ հանելով ,  
զորօրինակ՝ թէ ինչպէս իրենց ստացուածքը Եղիպ-

տոս կրնային տանել, և կամ ամէն մէկը ճշդիւ իր ունեցածը որոշել:

**Յովսէփ** գիտնալով որ անոնք այս բաներուն նկատմամբ խրատի կարօտ էին, անոնց այն պատուէրը տուաւ . և այնպէս ընելով անտարակոյս Աստուծոյ հաճելի բան մը ըրաւ, ինչպէս որ **Տէրը** կ'ըսէ թէ, “Երանի խաղաղութիւն ընողներուն, ինչու որ անոնք Աստուծոյ զաւկըները պիտի կանչուին”։ Հաւանական է թէ **Յովսեփայ** խրատն անոր եղբայրներուն շատ օդտակար եղաւ։

**Ուրեմն**, սիրելի տղաք, **Յովսեփայ** նմանեցէք . ամէն մէկդ խաղաղութիւն ընող եղէք . ամէն ժամանակ ձեր եղբայրներուն ու քոյրերուն և ձեր ընկերներուն հետ խաղաղութեամբ վարուեցէք . որչափ որ հնար է՝ հակառակութիւն և կոխ ընելէ զդուշացէք . ամէնքդ իրար սիրելու, և իրարու բարիք ընելու աշխատեցէք :

## ԳԼՈՒԽ ԻԵ

**Յակոբայ** ուրեմն Վրանան հասնելով անոր կը պարագն Յակոբայ ուղարկուած է Յակոբայ ուրախութիւնը ։ Անոնց բոլորն նաև բայ եւլոււ Եղիուսոս երեալու ։ Անոնց Բերաբբէի, այսինքն երդման ջրհորին ուղինարելու ։ Հոն Աստուծոյ ըրած խոսքուածը Յակոբայ ։ Անոր Եղիուսոս հասնիլը ։

**Յակոբայ** որդիքը ճամբայ ելան Եղիպտոսէն Փանան երթալու ։ Ի՞նչ զարմանալի լուրեր ունէին տալու իրենց հօրը և ազգականներուն . սակայն ի՞նչ ամօթով և ուրախութեամբ խառնուած զգացումներով Յովսեփայ յաջողութեան պատմութիւնը

պիտի ընէին, քանզի իրենց անօրէնութիւնն ու ստութիւնն ալ պիտի յայտնուէր:

Վերջապէս Քերոն համելով, պատմեցին Յակոբայ իրենց այս երկրորդ ճամբորդութեան ելքը, մանաւանդ Յովսէփայ ողջ, և բոլոր Եղիպտոսի կառավար ըլլալը:

Ասիկայ ՚ի սկզբան անյուսալի և շատ զարմանալի բան մը թուեցաւ Յակոբայ, այնպէս որ չէր կրնար հաւատալ, քանզի զՅովսէփ շատոնց մեռած կը կարծէր: Բայց երբ պատմութիւնը պարագայիւք լսեց, և տեսաւ Յովսէփայ զրկած ընծաներն ու կառքերը Եղիպտոս երթալու համար, անատեն անոր զգացումները փոխուեցան. տարակուսանաց և յուսահատութեան տեղ ուրախութիւն եկաւ, և ըստ, Բաւական է ինծի, որ Յովսէփի որդիս ողջ է, չմեռած երթամ զանի տեսնեմ:

Հօր մը սիրոյն զօրութիւնն այս քանի մը ազդուխուքերէն կ'իմացուի: Յակոբ ամենեին Յովսէփայ զօրութեանը, աստիճանին և անոր մեծ փառքին և հարստութեանը չնայեցաւ, հապա միայն խորհեցաւ որ Յովսէփի տակաւին ողջ է և պիտի տեսնէ զանի, իր սիրելոյն Ռաքելի որդին, իր ծերութեանը տարիներուն մխիթարութիւնը:

Շուտով քանի մը պատրաստութիւններ եղան, և Յակոբ ու անոր բոլոր ընտանիքը ճամբայ ելան Եղիպտոս երթալու:

Ճամբան Բերսարէէ այսինքն երդման զրհոր ըսուած տեղը եկան, որ Փանանու հարաւային արևմտեան կողմը կ'իյնար, և Փերոնէն իրը քսան մղոն հեռու էր:

Այս այն տեղն էր ուր Աբրահամ, Յակոբայ հաւը, քիչ մը ժամանակ ընակած էր, խումբ մը ծառեր ալ տնկած էր հոն, որոնց ստուերին տակ

իր աղօթքները յաւխտեան կենդանի Աստուծոյ  
կը մատուցանէր։ Հոն երևնալով Աստուած իսա-  
հակայ, ըսած էր անոր, Ես եմ քու հօրդ Ար-  
բահամու Աստուածը. մի վախնար, ես քեզի հետ  
եմ ու քեզ պիտի օրհնեմ, ու քու զաւկըներդ պի-  
տի շատցընեմ իմ Արբահամ ծառայիս համար։  
Այս գեղքը յիշելու համար իսահակ հոն սեղան  
մը շինած էր, ուր իր ողջակէզները կը մատուցա-  
նէր. հոն կը կատարէր նաև իր աղօթքները։

Իսահակայ այս տեղը բնակած միջոցին էր որ  
Յակոբ, իր մօրը Ուերեկայի առաջնորդութեամբը,  
պատրողական և չար կերպով մը առաւ այն օրհ-  
նութիւնը զոր իսահակ կը խորհէր Եսաւայ տալ։  
Դարձեալ նոյն տեղէն Յակոբ հօրը հրամանաւ  
Ասորւոց միջագետը գնաց և հոն ամուսնացաւ Ու-  
քելի հետ, որմէ Յովսէփ ծնաւ։ Երբ Յակոբ նա-  
հապետ այս տեղ հասաւ, անշուշտ այն բոլոր բա-  
ներուն յիշողութիւնն անոր մտքին խորին տպաւո-  
րութիւն ըրաւ։ Անտարակոյս Յակոբ ամչնալով և  
ճշմարիտ զղջմամբ յիշեց այն չար խաբէութիւնը  
զոր իր հօրն ըրած էր, և ջերմեռանդութեամբ  
Աստուծոյ շնորհակալ եղաւ բոլոր իրեն եղած  
բարերարութեանց համար, որոնց ինք արժանի  
չէր։ Յակոբ իր բոլոր կենացը մէջ Աստուծմէ շատ  
բարերարութիւններ տեսած էր, բայց ամենէն մեծն  
էր Յովսէփայ գեղքը զոր և տեսնել կ'երթար։

Ուրիշ ի՞նչ աւելի յարմար տեղ կընար Յակոբ  
Աստուծոյ իրեն համար ըրած մեծամեծ մարդա-  
սիրութիւնները խոստովանիլ, և բոլոր սրտիւ գո-  
հութիւն և շնորհակալութիւն մատուցանել։ Անի-  
կայ այսպէս ըրաւ հոն, քանզի Աստուածաշուն-  
չին մէջ գրուած է, թէ Յակոբ հոն զոհ մատուց իր  
հօրը իսահակայ Աստուծոյն. այն Աստուծոյն՝ որ

խոստացած էր զիսահակ օրհնել, ու անոր անթիւ  
զաւկըներ տալ, և այն խոստումն արդէն սկսած էր  
կատարուիլ նոյն ընտանիքին մէջ, քանզի Յակոբ  
այն ատեն մեծ գերդաստանի մը գլուխ էր։ Աս-  
տուած այն խոստումը Յակոբայ ալ կրկնեց նոյն տե-  
ղը, անոր հետ գիշերը խօսելով։ Յակոբ, Յակոբ,  
կանչեց Աստուած, ես եմ քու հօրդ Աստուածը։  
մի վախնար Եղիպտոս երթալու, քանզի ես քեզ  
մեծ ազդ պիտի ընեմ, քեզի հետ Եղիպտոս պիտի  
երթամ, ու քեզ վերստին քու երկիրդ պիտի դար-  
ձընեմ, և Յովսէփի իր ձեռքը քու աչուրներուդ  
վրայ պիտի դնէ։ այսինքն՝ մեռնելու ատենդ աչուր-  
ներդ պիտի գոցէ։

Աստուծոյ այս խոստումը ճշդիւ կատարուե-  
ցաւ։ Յակոբայ զաւկըները մեծ ազդ եղան Եղիպ-  
տոսի մէջ ու ետքը Քանան դարձան, ուստի կրնայ  
ըսուիլ թէ, Յակոբ իր զաւկըներովը ետ դարձաւ  
Քանանու երկիրը։

Յովսեփայ ալ իբրև շնորհք մը եղաւ, որ իր հօրը  
աչուրները գոցեց։ Այս բանը Յակոբ մեծ ուրա-  
խութեամբ իբր սիրոյ ու մեծարանաց նշան մը ըն-  
դունած պիտի ըլլար։

Յակոբեանք Երդման ջրհորէն ճամբայ ելան  
Եղիպտոս երթալու։ Անոնք իրենց հայրը, կա-  
նայքը և զաւկըները Փարաւոնի զրկած կառքե-  
րով կը տանէին, իրենց ոչ խարներն ու կարասիքն  
ալ զորս Քանանու մէջ ստացած էին՝ մէկտեղ կը  
վարէին։ Անոնք ամէնը Յակոբաւ հանդերձ վաթ-  
սուն և վեց հոգի էին։



## ԳԼՈՒԽ ԻԶ

**Յ**ունէի եր հայրը Գեւեմ մշ կ'ողջունէ : Իր Եղբայրներուն գյուղը կը հանէ Փարաւոնի տուցւ, որ անոնց Գեւեմ մշ բնակչութան կուտայ : **Յ**ունէի եր հայրը Փարաւոնի տուցւ կը հանէ : **Յ**ակոբայ իօսուց : Կենաց կարճութեալը : **Մ**ահուան բնւ ըլլալը : **Ա**յս ժերտը կարդացողը մահուան պատրաստուած է :

**Յ**ովսէփ իր հօրը լուր ղրկած էր որ, երբ իր ընտանիքովը Եղիպտոս գար, Եղիպտոսի Գեւեմ կոչուած տեղը պիտի բնակէր : Գեւեմ Եղիպտոսի արևելեան կողմը դէպ ՚ի կարմիր ծովուն և Քանանու սահմաններուն վրայ կ'եյնար :

**Յ**ակոբ Յուդան ղրկեց, որ իր հօրը մօտենալը Յովսէփայ իմացընէ . ան ալ կառքը պատրաստելով Գեւեմ գնաց իր հայրը ողջունելու . և երբ զանի տեսաւ, վիզն իյնալով քիչ մը ժամանակ լացաւ : **Ա**նոնց զգացումն ի՞նչ եղաւ արդեօք այն վարկենին՝ այնչափ ժամանակ իրարմէ զատուած մնալէն ետքը : **Ո**րչափ վտանգներէ անցած էին, ի՞նչ արկածներ եկած էին անոնց վրայ :

**Հ**օրը մազերն արդէն ճերմկած, ծերութիւնն ու վիշտերն անոր երեսները խորշոմեցուցած, ուսերն ալ տնկուած էին : **Յ**ովսէփ իր հօրմէն բաժնուած ատենը, այսինքն՝ **Ս**իւքեմի ձորն իր եղբայրները վնառելու երթալով՝ անոնցմէ ծախուած ժամանակը, տասնուեօթը տարեկան էր . բայց հիմա այր կատարեալ եղած էր, հայր և կառավար Եղիպտոսի :

**Յ**ակոբ Յովսէփայ ըսաւ, Թող այսուհետեւ մեռնիմ, քանզի քեզ ողջ տեսայ :

**Աւելի բան չեր կրնար ըսել.** սրտին վերջին փափաքը կատարուած էր, և պատրաստ էր խաղաղութեամբ երկրէս ելլելու, որչափ շուտով որ **Աստուած յարմար դատէր զանի կանչել.** **Յովսէփ** էր եղբայրներուն ըսաւ, **Փարաւոնին երթամ** ու ձեր դան անոր իմացընեմ: **Ըսեմ թէ դուք հովիւ էք,** և ձեր ոչխարները և արջառները բերած էք: **Անոնց ըսաւ նաև որ, երբ Փարաւոնի առջև ելլեն,** անկէ խնդրեն որ իրենց հրաման տայ **Գեսեմ բնակելու.** այսպէս անոնք այնպիսի երկրի մը մէջ պիտի ըլլային, որ իրենցը եղած պիտի ըլլար, **Եղիպտացիներէն ալ զատ պիտի մը նային:** **Յովսէփ գիտէր որ ասիկայ անոնց մեծ մսիթարութիւն և յաջողութիւն պիտի տար:**

**Անոնք ազատ պիտի ըլլային Եղիպտացիներուն ատելութենէն,** որոնք, ինչպէս առաջ ըսինք, հովուութիւնը շատ կ'անարդէին: **Յովսէփ անոնց դալը Փարաւոնի իմացընելէն ետքը,** իր եղբայրներէն հինգ հոգի առաւ, ու **Փարաւոնի առջև հանեց:**

**Փարաւոն անոնց արհեստը հարցուց,** անոնք ալ պատասխան տուին թէ հովիւ են:

**Նաև Փարաւոնի ըսին թէ, այն երկիրը բնակելու եկած էին,** քանզի իրենց և իրենց արջառներուն, ոչխարներուն և այծերուն համար անունդ չունէին **Քանանու մէջ,** ուր սովը սաստկացած էր, և աղաչեցին անոր որ հրաման տայ անոնց **Գեսեմ բնակելու:** **Թագաւորն անոնց խընդրուածքն ընդունեց,** և ըսաւ **Յովսէփայ,** **Եթէ եղբայրներէդ յարմար մարդիկ կան՝ հմուտ իրենց արհեստին,** թող իմ արջառներուս վերակացութիւն ընեն: **Յովսէփ իր հայրը Յակոբ ալ Փարաւոնի առջև հանեց,** և **Յակոբ օրհնեց զՓարա-**

ւոն։ **Փարաւոն** հարցուց անոր թէ քանի տարեկան էր, ան ալ պատասխան տուաւ։ “Իմ պանդիսութեան տարիներուս օրերը հարիւր երեսուն տարի են. քիչ և դժուարին եղան կեանքիս օրերը, իմ հայրերուս կենաց տարիներուն չհասան”։

**Պանդուխտ** կ'ըսուի այն որ իր հայրենիքէն հեռու, օտար երկիրներու մէջ ճամբորդութիւն կ'ընէ։

**Յակոբ** իրաւունք ունէր զինք պանդուխտ կոչելու, քանզի անոր կեանքն արդարե պանդիսութիւն էր։ **Անիկայ** տեղէ տեղ կ'երթար այլ և այլ երկիրներէ անցնելով. հիմա ալ իր ծերութեան հասակին մէջ ուրիշ ճամբորդութիւն մը կ'ընէր, նոր ընակարան մը գտնելու համար։ **Բայց** կը հաւատար թէ երկինքը ուրիշ լաւագոյն տուն մը կար **Աստուծոյ** ժողովրդին համար, և միշտ հոն կը նայէր, քանզի համոզուած էր որ իր պանդիսութիւնն ու փորձութիւնները հոն պիտի դադրէին, ինքն ալյաւիտեան հանգիստ պիտի գտնէր։ **Զէրյուսար** սակայն որ իր նախնեաց ապրած տարիներուն չափ պիտի ապրէր։ **Արդէն** հարիւր երեսուն տարի ապրած էր, բայց այն տարիները ո՞րչափ շուտ անցած էին, ու ո՞րչափ քիչ կը թուէին անվախճան յաւիտենականութեան նայելով։

Իրաւամբ ըսաւ նաև **Յակոբ** թէ, իր տարիները գէշ տարիներ եղած էին, քանզի **Աստուծոյ** իր իմաստուն նախախնամութեամբը յարմար դատած էր որ իր ծառան **Յակոբ** շատ տեսակ նեղութեամբ ու տրտմութեամբ փորձուէր։

**Դուք** ալ **Յակոբայ** պէս կը խորհի՞ք արդեօք որ աշխարհիս մէջ պանդուխտ էք։ **Զէ՞ք** գիտեր թէ որչափ փոփոխութիւններ և փորձութիւններ ձեղի կը սպասեն. թերևս ձեր սիրելի ծնողներէն

և բարեկամներէն պիտի զատուիք, ձեր տունը  
պիտի թողուք, շատ տեսակ նեղութիւններու և  
տրտմութիւններու պիտի հանդիպիք։ Եթէ Յա-  
կոբայ կրած նեղութիւններէն շատ քիչ նեղութիւն  
կրէք, խաղաղ և անդորր օրեր անցընէք, յիշեցէք  
միշտ որ ձեր պանդխտութիւնը շուտով պիտի վեր-  
ջանայ։ Մահը պիտի գայ և անոր որչափ շոյտ  
գալը չէք գիտեր։

Որչափ մարդիկ որ տարիքով ձենէ կրտսեր էին՝  
արդէն իրենց պանդխտութիւնը կատարած են։  
Գացէք ձեր մօտերը եղած գերեզմանատանց մէ-  
կը։ գերեզմաններուն քարերը կարդացէք և տեսէք  
թէ որչափ մարդիկ թաղուած են հոն, որոնց պան-  
դխտութեան օրերը բաւական երկայն եղած են։

Բայց ինչ պիտի ըլլայ, եթէ շատ ապրելու ըլ-  
լաք։ Զեր անցեալ կենացը վրայ նայելով Յա-  
կոբայ պէս պիտի ըսէք, Մեր պանդխտութեան  
տարիները քիչ եղան, անոնք անցան շոգւոյ պէս,  
որ քիչ մը ժամանակ կ'երևայ և ապա անհետ  
կ'ըլլայ։

Դուք ալ Յակոբայ պէս դէպ ՚իյառաջ պիտի  
նայիք այն յաւիտենականութեան՝ որ ամենևին  
վախճան չունի։ Յակոբայ պէս պատրաստուելու էք  
յաւիտենականութեան մէջ մտնելու։ Անիկայ յայտ-  
նեց իր մեռնելու պատրաստ ըլլալը, երբ Յովսէփ  
տեսաւ։ դուք ալ մեռնելու պատրաստ էք։ Մահը  
մեծ և ծանր բան է։ մարդուն ձեռուրները չեն  
շարժիր, շրթունքները չեն խօսիր, աշուրները չեն  
տեսներ, ականջները չեն լսեր, թոքերը չնշառու-  
թիւն չեն ըներ, սիրտն ալ չի բախեր։ Բոլոր մար-  
մինը կը պաղի և անշարժ կը մնայ։ Վերջապէս  
մեռած մարդը շուտով գերեզման կը դրուի հոն  
սպասելու, մինչև որ դատաստանի կանչուած օրը

մեռեներէն յարութիւն առնէ։ Բայց ասիկայ մա-  
 հուան մէկ թեթև մասն է։ Փրիստոնեայ մը ամե-  
 նեին մահէն վախնալու չէ։ մահն անոր քաղցր քնոյ  
 պէս երևնալու է։ գերեզմանն ալ խաղաղ և հան-  
 դարտ հանգստանոցի մը պէս՝ տկար և յոդնած  
 մարմնոյն համար։ Մահն այսպէս թուեցաւ շատե-  
 րուն որոնք կատարեալ խաղաղութեամբ և ուրա-  
 խութեամբ մեռան։ Երանի՛ թէ ձեզի ալ այսպէս  
 թուէր։ Սակայն մարմնոյն ապականութիւնը մա-  
 հուան փոքր մասն է։ Մահը հոգին մարմնէն կը-  
 զատէ ու յաւիտենականութեան կը տանի։ Ար-  
 դարե աս է մեռնելուն ամենէն ծանր մասը։ Զեր  
 մէջ եղած այն բանը որ կը խորհի, կը զգայ և կը  
 գործէ, կարողութիւն ունի զուարճանալու, վշտա-  
 նալու, ձեր անմահ հոգին է։ աս հոգին յաւիտենա-  
 կան աշխարհքը կ'երթայ։ Անիկայ հոն կ'երթայ ան-  
 վախճան դարեր Աստուծոյ ու Փրիստոսի բարե-  
 կամութիւնն ու շնորհքները վայելելու՝ մաքուր ու  
 սուրբ հոգիներուն ընկերութեամբը, որոնք զԱս-  
 տուած և զիրար կը սիրեն, բոլոր արարածոց  
 ամենիմաստ և ամենաբարի Գոյացուցչին երկրպա-  
 գութիւն և ծառայութիւն կ'ընեն, անոր հոն  
 անհամար կերպով ցցուցած իմաստութիւնն ու  
 բարութիւնը տեսնելով ուրախ կ'ըլլան, և անդա-  
 դար սրբութեան, երջանկութեան և գիտութեան  
 մէջ յառաջ կ'երթան։ Բայց կրնայ ըլլալ նաև  
 որ ձեր հոգին այն յաւիտենական աշխարհքը  
 երթայ ասոնց ամենէն զուրկ մնալու՝ անարդ և  
 թշուառական էակներու մէջ զզուելի և մեղանչա-  
 կան բաներ լսելով ու տեսնելով, խղճի սոսկալի  
 ահ և դող զգալով, և սուդ ընելով անզեղջ և Փրիս-  
 տոսի վրայ հաւատք չունենալով մեռած ըլլալուն  
 յիմարութեանը վրայ։ Հոգին այս վիճակին մէջ,

Երբ ետին նայի, ուրիշ բան պիտի չգտնէ բաց՚ի  
վշտալի յիշատակութիւններ. երբ չորս դին նայի,  
մխիթարութեան և օգնութեան նշոյլ մը պիտի  
շտեանէ. երբ առաջ նայի՝ փոփոխութեան մը յոյս  
պիտի չնշմարէ. և այսպէս տրտում և յուսահատ  
պիտի մնայ յաւիտեան, դիտնալով որ բոլոր այս  
թշուառութիւնները պիտի շարունակուին և աւել  
նան առանց թեթևութեան և վախճանի։ Մեռ  
նելու պատրա՞ստ էք։ Մեր Տէրը Յիսուս Քրիս-  
տոս ճշմարտապէս կը սիրէ՞ք, և բոլորով սրտիւ  
կը հաւատա՞ք անոր։

---

## ԳԼՈՒԽ ԻԵ

Յակոբայ և անոր ընդառնի+ին Գեւեմի էջ բնակիլը։ Ա. առաջ  
անոնց ըրած մարդասէրո-նիւնը։ Ա. առն+ կարդացողին չըայ  
Ա. առածոյ առեցած բարերարո-նիւնը։ Կարդացող Ա. առածոյ  
շնորհակա՞լ է։

Յակոբ Աստուծոյ օրհնութիւնը Փարաւոնի վրայ  
մաղթելով դուրս ելաւ։ Այնուհետև Յովսէփ  
սկսաւ աշխատիլ որ այն երկիրն իր հօրը, եղբայր-  
ներուն և անոնց ընտանեացը ժառանդել տայ,  
ինչպէս որ Փարաւոն հրաման ըրած էր։

Գեսեմի համար կը պատմուի թէ շատ դեղեցիկ  
և զուարճալի երկիր մըն էր։ Յակոբ մինչև իր  
մահը հոն բնակեցաւ իր զաւկըներովը և անոնց  
ընտանիքներովը։ Յովսէփի, այն ճշմարիտ հնա-  
զանդ որդին ու սիրելի եղբայրը, անոնց ամէն  
պիտոյքը պատրաստեց, այնպէս որ անոնք սովին  
մնացեալ տարիներուն մէջ ամենևին նեղութիւն  
չկրեցին։

**Յովսեփայ Եղիպտոսի կառավարը ըլլալը և Եղիպ-**  
տացւոց առջև ունեցած պատիւն ու ազդեցութիւնը  
բաւական մեծ ապահովութիւն մըն էր անոր հօրն  
ու եղբայրներուն, և անոնց հետ տեսութիւն  
ընողները յարգութեամբ կը վարուէին անոնց հետ,

**Յակոբ և անոր մեծ ընտանիքն այս կերպով նա-**  
խախնամութեան շնորհքները վայելելով և անոր  
առատ ձեռքէն կերակրուելով՝ անտարակոյս կը  
զգային **Աստուծոյ իրենց վրայ ունեցած զարմա-**  
նալի խնամքը, որով զանոնք այնպիսի աղետալի  
սովի ժամանակ բերած էր այն երկիրն, ուր միայն  
մնունդ կը գտնուէր։ Ի՞նչ զարմանալի կարգա-  
դրութիւն էր ասիկայ։ **Նաև անոնք այն երկրին**  
կառավարութեան պաշտպանութեանը տակ էին,  
ու անոր շտեմարանէն կը կերակրուէին առատօրէն  
և թերևս ձրի։ **Ամենէն զարմանալին սա էր որ**  
**Աստուած բոլոր այս բարիքներն ու շնորհքները**  
կու տար անոնց իրենց ընտանեացը մէկ անդամին  
ձեռքով, որուն իր եղբայրներն անողորմաբար  
չարիք նիւթած էին, բայց **Աստուած իր իմաս-**  
տութեամբն ու ողորմութեամբը չարն ՚ի բարին  
դարձընելով՝ անիկայ անոնց փրկիչ և պաշտպան  
ըլլալու պատրաստած էր։

**Անտարակոյս հիմա դուք պիտի ըսէք թէ Յա-**  
կոբ ու անոր ընտանիքը մեծամեծ պատճառներ  
ունէին երախտագէտ ըլլալու **Աստուծոյ**, և պար-  
տական էին իրենց շնորհակալութիւնը ցուցընել  
զանի սիրելով ու անոր պատուիրանացը հնա-  
գանդելով։

**Աստուած ո՞չ ապաքէն ձեզի համար ալ շատ**  
բաներ ըրած է և կ'ընէ։ անոր բարութեանն ու  
ձեզի ցցուցած երկայնմտութեանը վրայ կը խոր-  
հիք։ **Անիկայ ձեզ ձեր ծնանելէն ՚ի վեր շատ**

կերպով խնամած և պահպանած է, բայց դուք  
անոր դէմ շատ անդամ մեղք գործած էք:

**Ա**նիկայ իր խնամքն ու պաշտպանութիւնը ցը-  
ցուցած է ձեզ ձեր ծնողացն ու բարեկամներուն  
ձեռքով, ինչպէս որ հոգաց զՅակոբ և անոր ըն-  
տանիքը Յովսեփայ ձեռքով:

**Զ**եզի համար վտանգ չկայ ձեր հայրենիքը,  
ձեր տունը, տեղը, բարեկամները թողլով օտար  
երկիր երթալու, որպէս զի կերակուր գտնելով  
սովամահ չըլլաք: **Դ**ուք մինչև հիմա ամէն միի-  
թարութիւն ու դիւրութիւն ունեցած էք, Յա-  
կոբայ և անոր որդւոցն ունեցածէն ալ աւելի:  
**Ա**րդ սրտանց շնորհակալ կ'ըլլա՞ք դուք **Ա**ստուծոյ  
բոլոր այս երախտեաց համար, մանաւանդ այն մեծ  
շնորհաց համար որ ըրած է ձեզի **Ա**ստուած իր  
Որդին Յիսուս Քրիստոսը տալով, որ աշխարհք  
եկաւ և խաչին վրայ իր արիւնը թափեց ձեզ  
փրկելու համար:

**Մ**իթէ ձեր երախտագիտութիւնը կը ցուցընէ՞ք  
**Ա**ստուծոյ՝ զանի սիրելով, անոր հնազանդելով,  
Յիսուս Քրիստոսի օրինակին նմանելով, և ուրիշ-  
ներուն օդտին և երջանկութեանը համար աշխա-  
տելով ըստ ձեր կարողութեան: **Ա**սոնք կարեոր  
հարցումներ են որոնց վրայ դուք անկեղծաբար  
խորհելու էք. ի՞նչպէս պատասխան պիտի տաք  
ասոնց:

**Պ**իտի ըսէ՞ք թէ՛ **Մ**ենք չենք գիտեր ինչ է  
**Ա**ստուծոյ և անոր Որդւոյն շնորհակալ ըլլալ. չենք  
գիտեր թէ ինչպէս կրնանք **Ա**ստուծոյ կամքը  
կատարել և ուրիշներուն օդտին՝ մանաւանդ անոնց  
հոգեոր օդտին համար աշխատիլ:

**Ի**՞նչ կը կարծէք, եթէ Յակոբ և անոր ընտա-  
նիքն **Ա**ստուծոյ իրենց ըրած շնորհքներուն ապե-

ըախտ ըլլալով զանի չսիրէին և անոր պատուիրան ները չպահէին, ո՞չ ապաքէն շատ չար և անարժան պիտի համարուէին Աստուծոյ առջեւ։ Հիմա եթէ դուք այնպէս ընէք, այսինքն՝ եթէ Աստուծոյ ձեզի ըրած այնչափ բարութեանցը դէմ ապերախտ գտնուիք, անոր կամացը հակառակ մեղք գործելով կամանոր հրամայածին պէս չգործելով, խորհեցէք թէ Աստուած և անոր Որդին Յիսուս Քրիստոս, ձեր Փրկիչը, ձեր վրայ ինչ համարում պիտի ունենան, և ձեզի հետ ինչպէս պիտի վարուին։

Ուրեմն պէտք է ձեզի Աստուծոյ առջեւ խոնարհիլ, ու ապերախտութենէ և ուրիշ մեղքերէ ետ կենալ։

Պարտիք բոլոր ձեր մեղքերն Աստուծոյ խոստովանել և անոր աղաչել Քրիստոսի միջնորդութեամբը որ թողութիւն տայ ձեզի, և Հոգին Սուրբ Պրկէ ձեր վրայ, որ այսուհետեւ զղջացեալ և շնորհակալու սրտով սիրէք զԱստուած և ձեր Փրկիչը և ձեզի տրուած Աստուածային պատուէրները կատարէք։

Եթէ այնպէս ընէք, Աստուծոյ շնորհքը, Քրիստոսի բարեկամութիւնը և Հոգւոյն Սրբոյ զօրութիւնը կ'ընդունիք, ու թէ այս և թէ յաւիտենական կենաց մէջ օրհնեալ և երջանիկ կ'ըլլաք։

---

## ԳԼՈՒԽ ԻԸ

Եժեղացացիներուն էրենց անաստաները կերակուրք համար  
Յովսետայ առալը ։ Անոնց նորէն կերակուրք ուղևը ։ Զերեն+  
լ էրենց երկերներն ալալը ։ Յովսետայ անոնց սերմ առալը ցա-  
նելու համար ։ Մշտնջենաւոր օրէն+ ճը դրուելը որ բուլը  
բերերուն հինգերորդ ճառը Փարաւոնին ըլլայ ։ Դիտողութեան  
արժանի խորհրդածունեւն ճը Յովսետայ վարչին վրայ ։

Սովը սաստկացաւ Եղիպտոսի և Քանանու մէջ ։  
Աստուածաշունչին մէջ կը կարդանք որ մարդիկ  
երթալով կը տկարանային և սրտաթափ կ'ըլլային  
սովին պատճառաւ ։

Յովսէփ շարունակ Եղիպտոսի ու Քանանու  
բնակիչներուն ցորեն կը ծախէր, ու փոխարէն  
ստակ կ'առնէր, մինչև որ ժողովուրդին գրեթէ  
բոլոր ստակը սպառեցաւ ։ Այն ստակները Յովսէփ  
կ'առնէր ու Փարաւոնի տունը կը պահէր իբրև  
թագաւորական գանձ ։ Եղիպտացւոց ստակը  
սպառելէն ետքը՝ անոնք Յովսէփայ գալով ըսին,  
Մեղի հաց տուր, քանզի ինչու մեռնինք ստակ  
չըլլալուն համար ։

Յովսէփ պատճառ ունէր Եղիպտացիներուն  
առանց ստակի ցորեն չտալու ։ Եթէ անոնց ձրի  
ցորեն տար, թերևս շատերը ծոյլ պիտի մնային,  
ուրիշներն ալ ձրի տրուած կերակուրն իրենց  
և իրենց անասուններուն համար անխնայ պիտի  
գործածէին ։

Ուստի Յովսէփ անոնց ըսաւ որ ցորենի համար  
ստակի տեղ անասուն տան ։ Այսպէս ընելուն օգու-  
տը սա էր որ այն անասնոց շատերն անօթութենէ

**Ա**ւոնելէ կ'ազատէին։ Առդ Եղիպտացիք իրենց  
անասուններն, այսինքն՝ ձիերը և էշերը, ոչ խար-  
ներն ու արջառները Յովսեփայ բերելով՝ փոխա-  
րէն ցորեն կ'առնէին։ բայց շուտով ժողովուրդին  
անասուններն ալ սպառեցան, քանզի բոլորն ալ  
Յովսեփայ տրուեցաւ, և ժողովուրդը նորէն կա-  
րու եղաւ կերակրոյ, ուստի և հարկ եղաւ անոնց  
իրենց երկիրներն ու անձերն ալ **Փարաւոնի** ծախել։

**Ա**յսպէս ըրին, և Յովսէփ անոնց դարձեալ  
կերակուր տուաւ. այս կերպով բոլոր Եղիպտոսի  
երկիրն ու անոր բնակիչները **Փարաւոնի** ստա-  
ցուածքը եղան։

**Ա**սիկայ սովին վերջին տարւոյն մէջ պատահե-  
ցաւ, այնպէս որ մարդիկ յոյս ունէին թէ յաջորդ  
տարին երկիրը նորէն պիտի սկսէր առատ պտուղ  
բերել, եթէ ցանուէր։

**Ա**յս պատճառաւ Յովսեփայ աղաչեցին որ  
իրենց սերմ տայ որ ցանեն, և յաջորդ տարւոյն  
համար պաշար պատրաստուի երկրին համար։

Յովսէփ գիւղերուն և աւաններուն բնակիչնե-  
րը քաղաքները փոխադրած էր։ Թերևս անոնց  
գիւղին կերպով կերակուր տալու համար ըրած էր  
ասիկայ, քանզի ցորենի շտեմարաններն, ինչպէս  
առաջ ըսինք, քաղաքներու մէջ էին։

Քուրմերն իրենց կերակուրը թագաւորէն ձրի  
կ'առնէին. անոնք ուրիշ մարդոց պէս իրենց եր-  
կիրները չտուին **Փարաւոնին**։

**Ա**նոնք ժողովրդեան մէջ ազնուական և ազատ  
համարուած էին։ Թագաւորն իր երեւելի գործա-  
կալներն ու պաշտօնեաններն անոնց մէջէն կ'ընտրէր,  
ուստի և իրը տէրութեան մարդիկ՝ մինչև սովին  
վերջը **Փարաւոնի** ծախքովը կերակրուեցան։

**Ս**ովին վերջի տարին անցնելէն առաջ Յովսէփ

սերմ բաժնեց բնակիչներուն, և տուած ժամանակն ըստ, Ահա այսօր ձեզ ու ձեր երկիրները Փարաւոնի համար գնած եմ. ձեզի սերմ կու տամ, ցանեցէք, սակայն ձեր բերքին հինգերորդը Փարաւոնի պիտի տաք, ու չորս մասը ձեզի պիտի պահէք, որպէս զի երկիրը սերմանէք, և ձեզի ու ձեր ընտանեաց և զաւկըներուն համար պաշար ըլլայ: Տարեկան արդիւնքին հինգերորդ մասը թագաւորին տալը մշտնջենաւոր օրէնք մը եղաւ Եգիպտոսի մէջ: Բոլոր բնակիչները կու տային ասիկայ բաց՚ի Քուրմերէն, որոնք այս տեսակ հարկէ ազատ էին:

Այդարև անօթութենէ մեռնելու վտանգին մէջ գտնուող ժողովուրդին ձեռքէն բոլոր ունեցածն առնել, ժողովուրդն ալ գերի ընել ըստ ինքեան աղէկ բան մը չէ: Եւ թերևս զարմանաք թէ Յով սեփայ պէս անձ մը ինչո՞ւ այսպէս ըրաւ. սակայն մենք այն ժամանակի բոլոր պարագաները չգիտնալով, սաչափ միայն կրնանք ըսել թէ, եթէ Եգիպտացիք կիրթ և լուսաւորեալ ըլլային, Յով սէփ անոնց հետ այն կերպով չէր վարուեր:

Կ'երևի թէ Եգիպտացիք բոլոր երկրին գործածութիւնն իրենց վրայ առած էին, իրենց աշխատութեան պտուղը կը վայելէին, բաց՚ի բերքերուն հինգերորդ մասէն որ թագաւորին հարկի մը պէս կը հատուցանէին:

Մինչ Եգիպտոսի ուրիշ կողմերն այս բաները կ'ըլլային, Յակոբ իր ընտանեօքը խաղաղ և ազատ կը բնակէր Գեսեմի մէջ: Անոնք երթալով կը բազմանային և մինչև սովին վերջին տարին իրենց ստացուածքն ալ բազմացուցին և յաջողութիւն գտան ու ծաղկեցան:

## ԳԼՈՒԽ ԻԹ

**Յ**ակոբ էր չափճանին մօդենալը : **Յ**ովետիայ էր հօրը աւ սունեան երնալը : **Յ**ակոբ շ**Յ**ովետի դնութելն անոր երդուա ընել առալս համար , որ էր ինչ մշտնի , մարմինն էր հայրերան ուշ նաղէ : **Յ**ովետիայ այս բանը երդմամբ էր հօրը խոստանալը : Երդման ինչ բալը :

**Յ**ակոբ տասն և եօթը տարի Եգիպտոս բնակելէն ետքը , իբրև հարիւր քառասուն տարեկան ծերունի՝ իր վախճանը մօտեցած տեսնելով , զ**Յ**ովսէփի կանչել տուաւ ըսելով թէ անոր կարեոր բան մը ունէր ըսելու :

**Յ**ովսէփի հասկրցաւ որ **Յ**ակոբ իր մօտակայ մահն իմացընելու համար կը կանչէր զանի , քանզի իր հօրը խոր ծերութեանը պատճառաւ , գիտէր թէ անոր մահը շատ հեռու չէր . բայց և այնպէս մեծ ցաւ ու տրտմութիւն զգաց :

**Յ**ակոբ կ'ուզէր Փանանու մէջ իր հայրերուն գերեզմանը թաղուիլ :

**Ա**բրահամ՝ Փերրոնի այրը գերեզմանի համար գնած ըլլալով , հոն թաղուած էր ինք և **Ս**արրա կինը . հոն թաղած էր նաև **Յ**ակոբ իր հայրը իսահակ , և **Ռ**աքէլ ու **Լ**իա իր կանայքը . ուստի կը բաղձար որ իր որդիքն ալ զինքը հոն թաղէին : **Ա**յնչափ սաստիկ էր **Յ**ակոբայ այս փափաքը որ միտքը դրած էր **Յ**ովսէփայ պատուիրել որ իր մարմինը հոն թաղէ , և անոր երդում ընել տալ այս բանը կատարելու : **Ո**ւստի երբ **Յ**ովսէփի եկաւ , **Յ**ակոբ ըսաւ անոր , **Ե**թէ քու առջեկ չնորհք գտած եմ , այսինքն՝ եթէ զիս ճշմարտիւ կը սիրես ,

ու կ'ուզես ինծի մեծ երախտիք մը ընել, դիր  
ձեռքդ երանիս տակ (այսպէս ընելը երդում  
ընելու ձև մըն էր), և ինծի հետ մարդասիրաբար  
ու ճշմարտաբար վարուէ : Քենէ կը խնդրեմ որ  
զիս Եղիպտոս չթաղես, այլ Քանան տանելով  
մարմինս իմ հայրերուս գերեզմանը թաղես :

Յովսէփի խոստացաւ իր հօրը խնդիրքը կատարել,  
բայց Յակոբ անկէ երդում պահանջեց, ան ալ եր-  
դում ըրաւ . Իսրայէլ այսինքն Յակոբ ալ իր դա-  
ւազանին գլխուն վրայ կոթնելով Աստուծոյ եր-  
կրպագութիւն ըրաւ : Գաւազանին գլխուն վրայ  
կոթնելուն պատճառը՝ մարմնոյն տկարութիւնը  
կամ ծերութիւնն էր : Յակոբայ այսպէս ընելէն  
յայտնի կը տեսնուի թէ, որչափ մեծ բան մը կը  
համարէր անիկայ իր և Յովսեփայ մէջտեղ կա-  
տարուած պայմանը :

Ասոնք կատարուելէն ետքը Յովսէփի իր տեղը  
դարձաւ, բայց գիտէր որ քիչ ատենէն իր հօրը  
մահը պիտի լսէր :

Յովսեփայ երդումը լոկ խոստում մը ըւլալով՝  
այժմու սովորական երդումներէն շատ տարբեր էր :  
Քրիստոս մեզի պատուիրած է որ ամենենին եր-  
դում չընենք . ուստի անոնք որ հասարակ խօսակ-  
ցութեան մէջ երդում կը դործածեն, այսինքն  
Աստուծոյ ահաւոր անունը յիշելով և կամնզովքի  
ձևերով իրենց ըսածը կը ջանան հաւտացընել  
Քրիստոսի պատուէրին դէմ կը դործեն : Բարե-  
պաշտ Քրիստոնեայ մը այսպիսի բան մը չի կընար  
ընել :

## ԳԼՈՒԽ Լ

**Յ**ԱՌԵՔՆ ՀՈՐԸ ԴԱՎ կ'ԵՐԵԱՅ անոր մահուան ադենը ներ-  
կայ գունուելու համար՝ իր որդիքն աւ հետ առնելով։ Յահով  
ՅԱՌԵՔՆ արդիքն իր որդեսցը հարժը դնելով շանոնի կ'օրհնէ։  
Այս օրհնութեան մեխութեանը ։

**Վ**ԵՐՉԱՊԷՍ ՅՈՎՍԵՓԻ առնելով այն ցաւալի լուրը  
թէ հայրը մահուան մօտ է, փութաց անոր քով  
երթալ զանի մխիթարելու և ըստ արժանւոյն հո-  
գալու և խնամելու համար անոր մահուան ժամա-  
նակը, ինչպէս որ վայել է ընել բարի որդւոյ մը։  
Յովսէփի այս անգամ հետ առաւ իր երկու որ-  
դիքը Մանասէ և Եփրեմ, որոնց առաջինը քսան-  
և հինգ տարեկան էր, իսկ վերջինն՝ անկէ տարու-  
մը պակաս։ Անոնց հայրը Յովսէփի այն ատեն յի-  
սուն և վեց տարեկան էր։

**Յ**ակոր այնպէս տկարացած էր որ անկողնէն չէր  
կրնար ելլել. բայց և այնպէս Յովսեփիայ գալը լսե-  
լով՝ այնչափ ուրախացաւ և զօրացաւ, որ կրցաւ  
անկողնին մէջ նստիլ, և այնպէս ընդունեցաւ  
Յովսէփի։

**Յ**ակոր կ'ուզէր իր մեռնելէն առաջ քանի մը  
կարեռը բաներ ըսել կամ յիշեցընել Յովսեփիայ.  
ուստի նախ յիշեցուց անոր Աստուծոյ Աբրահա-  
մու, իսահակայ և նոյն իսկ Յակորայ ըրած խոս-  
տումները, մանաւանդ այն խոստումը զոր Աս-  
տուած ըրած էր Քանանու մէջ անոր երենալով  
և զանի օրհնելով, այսինքն՝ թէ անոր սերունդը  
բազմացընելով Քանանու երկիրն անոնց ժառան-  
գութիւն պիտի տար։

**Յետոյ իմացուց Յովսեփայ թէ անոր որդիքը**  
**Մանասէ և Եփրեմ ալ, իբրև իր որդիքը և իր**  
**ընտանեաց անդամները համարելով զանոնք, կ'ըն-**  
**դունի Խորայելական սերունդին մէջ, և կ'ուղէ**  
**որ անոնք ալայն սերունդին ընդհանուր օրհնու-**  
**թեանը մասնակից ըլլան:**

**Յակոբ հաստատուն հաւատք ունենալով առ**  
**Աստուած՝ աներկբայ էր թէ իր զաւկըները նորէն**  
**իրենց հայրենի երկիրը Փանան պիտի դառնային,**  
**ինչպէս որ Աստուած յայտնած էր, և իր այս**  
**հաւատքը յայտնեց Յովսեփայ:**

**Այս ապադայ դէպքը յիշելով, ինչպէս նաև հոն**  
**թաղուելու համար ցցուցած ջերմ փափաքովը՝**  
**կ'ուղէր իր որդւոցը սրտին մէջ ալ սաստիկ սէր մը**  
**յառաջ բերել այն օրհնեալ երկրին վրայ, որպէս**  
**զի անոնք ալ ջերմ եռանդեամբ փափաքէին հոն**  
**դառնալ, երբ որ նախախնամութիւնը հաճէր անոնց**  
**պատեհութիւն տալ այնպէս ընելու:**

**Այն երկրին անցած դացած դէպքերը Յակոբայ**  
**սիրու քաղցր յիշատակներով լեցուցած էին:**  
**Անիկայ կ'ուղէր իր սիրելի երկրին նկատմամբ**  
**Յովսեփայ մոքին վրայ տպաւորութիւն մը ընել՝**  
**յիշել տալով անոր այն անցած դիպուածներուն**  
**մէկը, զոր բարի զաւակ մը առանց գորովանաց**  
**չի կրնար լսել:**

**Ուստի անիկայ սա կերպով խօսեցաւ Յովսեփայ:**  
**Երբ ես, ըստ, Ասորւոց Միջագետէն կու դայի,**  
**Դաքէլ ճամբան, Փանանու երկրին մէջ, մեռաւ**  
**Եփրաթայի մօտ, և հոն ճամբուն վրայ թաղուեցաւ:**

**Մարդիկ կը սիրեն այն տեղերն ուր իրենց նախ-**  
**նեաց ոսկրները կը հանդչին:** **Մեր հայրերուն**  
**գերեզմանները:** **Ի՞նչ ազդու մտածութիւն յա-**  
**ռաջ կը բերէ այս խօսքը:** **Ո՞վ կրնայ առանց խո-**

ըին զգացման այն տեղւոյն վրայ խորհիլ, ուր  
ծնողաց կամ եղբօր կամ քրոջ կամ ազգականի  
մը և կամ սիրելի բարեկամի մը մարմինը թա-  
ղուած է:

**Կարծեմ թէ Յակոբայ ըրած սրտաշարժ պատ-**  
**մութիւնը Ռաքելի մահուանն ու թաղմանը վրայ՝**  
**Յովսեփայ սիրտը տրտմութեամբ լեցուց։ Որդիա-**  
**կան երախտագիտութեան արտասուք սկսան վա-**  
**զել անոր աչուըներէն, երբ սիրելի մօրն անունը**  
**յիշուեցաւ։**

**Յակոբայ ծերութիւնն անոր աչքին լոյսը գրեթէ**  
**տարած էր. քիչ մը կը տեսնէր, բայց շատ անորոշ։**  
**Ասոնք ո՞վ են, հարցուց Յովսեփայ, երբ տեսաւ**  
**ընդաղօտ երկու պատանի որոնք իր անկողնին քով**  
**կայնած էին։ Ասոնք իմ որդիքս են, ըստ Յով-**  
**սէփի, որոնք Աստուած ինծի հոս պարգևեց։**

**Անատեն Յակոբ Յովսեփայ ըստ, ինծի մօտ**  
**բեր զանոնք որ օրհնեմ։**

**Երբ տղաքը Յակոբայ քով դացին, անիկայ**  
**գրկեց զանոնք և համբուրեց, և Յովսեփայ ըստ,**  
**Ամենսեին յոյս չունէի քեզ նորէն տեսնելու, և**  
**Աստուած ահա շնորհեց ինծի ոչ միայն քեզ,**  
**այլ և քու զաւկըներդ տեսնել։**

**Յովսէփի իր որդիքը հօրը գրկէն առաւ, ու**  
**երեսը դէպ ՚ի գետին խոնարհեցուց։ Այսպէս**  
**ընելով կ'ուզէր Յակոբայ և բոլոր հոն գտնուող**  
**մարդոց ցուցընել թէ ո՛րչափ սէր և յարգանք**  
**ունէր իր ծերունի հօրը վրայ, այնպէս որ մոռցաւ**  
**թէ Եղիպտոսի հարուստ և հզօր կառավարն էր,**  
**և հասարակ զաւկի մը պէս կը կենար իր հօրը**  
**մահուան անկողնոյն քով։**

**Յովսէփի իր երկու որդիքը նորէն հօրը մօտ բե-**  
**րաւ որ անոր օրհնութիւնն առնեն։ Անիկայ կ'ու-**

զէր որ հայրը, ինչպէս որ սովորութիւն էր, օրհնած ժամանակն աջ ձեռքը երիցուն դլխուն վրայ դնէր, ու ձախը՝ կրտսերին։ Այս պատճառաւ Յովսէփի իր աջ ձեռքովը Եփրեմը որ կրտսերն էր՝ բռնելով դէպ՚ի Յակոբայ ձախ ձեռքին տարաւ, իր ձախ ձեռքովն ալ Մանասէն, երէցը, բռնելով հօրը աջ ձեռքին մօտեցուց։

Յակայն շատ զարմացաւ, երբ տեսաւ որ Յակոբ որ չէր տեսներ՝ իր ձեռուրները խաչածև ընելով, աջը՝ Եփրեմի, ու ձախը Մանասէի դլխուն վրայ դրաւ, և այնպէս սկսաւ օրհնել զանոնք։

Յակոբ դՅովսէփի օրհնեց, և անոր երկու որդւոցը համար ըստաւ, Աստուած որուն առջև իմ հայրերս Արրահամ և Իսահակ հաճելի եղան (այսինքն՝ զանի սիրեցին և անոր հնազանդեցան), այն Աստուածը որ բոլոր կենացս մէջ մինչև ցայսօր զիս կերակրեց, այն հրեշտակը որ զիս բոլոր վտանգներէ ազատեց, օրհնեն այս զաւկըները, և իմ անունս ու հայրերուս Արրահամու և Իսահակայ անուններն ասոնց վրայ կանչուին, և անոնք երկրիս վրայ աճին ու բազմանան։

Շատ երկայն կ'ըլլայ, եթէ Յակոբայ դործածած հրեշտակ բառին մեկնութիւնը տալ ուզենք։ Շատ դիտուն և բարեպաշտ մարդիկ կը կարծեն թէ Յակոբ նահապետ հրեշտակ ըստ Քրիստոսի, Աստուծոյ որդւոյն համար, որ ետքը աշխարհք դալով մեռաւ մարդիկ փրկելու։

Եթէ այս մեկնութիւնը շխտակ է, Յակոբ իրաւամբ զՔրիստոս իրեն ազատիչ, փրկիչ կոչեց, և անոր օրհնութիւնը ինդրեց Յովսէփայ և անոր զաւկըներուն վրայ։

Դուք արդէն դիտէք, սիրելի տղաք, որ Քրիստոս է աշխարհիս մի միայն փրկիչը, որ իրեն յու-

սացողները մեղքէ և դժոխքէ փրկելու համար խաչին վրայ արիւն թափեց, զանոնք կ'օրհնէ ու փորձութիւններէ հեռու կը պահէ, և վերջապէս երկնից թագաւորութեան մէջ յաւիտեան իր քով կ'առնէ :

**Յ**ակոբայ այն խօսքը թէ իմ անունս և **Աբրա-** համու ու **Իսահակայ** անունները **Եփրեմայ** և **Մա-** նասէի վրայ կանչուին, կը նշանակէ որ անոնք **Աստուծոյ** կամօքն **Աբրահամու**, **Իսահակայ** և **Յ**ակոբայ այն մեծ ընտանիքին, որ են **Իսրայելա-** ցինները, անդամներն համարուելով, ժառանգ պիտի ըլլային այն օրհնութիւններուն, զոր **Աս-** տուած յիշեալ նահապետներուն և անոնց սերուն- դին խոստացած էր :

**Յ**ակոբայ աղօթքը թէ՝ **Եփրեմայ** ու **Մանասէի** զաւկըններն աճին ու բազմանան՝ սքանչելի կերպով կատարուեցաւ ապագային մէջ :

**Աբրամ** **Յ**ակոբայ այն աղօթքն ընելին իր երկու հարիւր տարի ետքը, **Մովսէսի** ժամանակ, անոնց զաւկըններուն մէջ քսան տարին անցուցած և պատերազմի երթալու կարող եղողներուն թիւը կը հաշուուէր ութսուն և հինգ հազար երկու հա- րիւր . և այս թիւը **Յ**ակոբայ միւս որդւոցը զաւկը- ներուն թիւէն շատ աւելի էր :



## ԳԼՈՒԽ ԼԱ.

**Յ**ակոնք էր օրհնութեանը և կը կատարէ Յաշետայ սրբոցը վրայ ։  
Յաշետայ բաժինը ։ Յակոնքայ մարդարեւթեանը և էր սրբէին  
օրհնելը ։ **Ա**նոր մահը ։ **Ա**սոնտ կարդացոց կ'ուղէ՞ ու Յակո-  
նքայ ուեւ մեռնէ ։

**Ե**րբ Յովսէփ տեսաւ որ հայրն իր աշ ձեռքը  
Եփրեմի գլխուն վրայ դրած էր, նեղացաւ, և  
հօրը աջ ձեռքը Եփրեմի գլխուն վրայէն վերցուց որ  
Մանասէի գլխուն վրայ դնէ, իմացընելով Յակո-  
բայ թէ Մանասէ էր անդրանիկը ։

Գիտեմ, որդեակ, ըստ Յակոբ, Մանասէ ալ  
ազգ մը պիտի ըլլայ, և պիտի բազմանայ. բայց  
շատ աւելի պիտի բազմանան Եփրեմայ զաւկըները  
և աւելի մեծ ազգ պիտի ըլլան ։

Յակոբ Յովսեփայ երկու որդւոց օրհնութիւնը կա-  
տարելէն ետքը, սա խօսքն ըստ անոնց ։ Իսրայէլ  
ձեզմով օրհնէ ըսելով, Աստուած քեզ Եփրեմի ու  
Մանասէի պէս ընէ. ու Եփրեմը Մանասէէն  
առաջ դրաւ ։

**Ա**րդարեւ իսրայէլացիք երբ մէկուն օրհնու-  
թիւն մաղթել կ'ուզէին, կ'ըսէին, Աստուած անի-  
կայ Եփրեմի ու Մանասէի պէս ընէ. այսինքն՝  
ըսել կ'ուզէին թէ անիկայ բազմանայ և յաջողու-  
թիւն գտնէ, ինչպէս բազմացան և յաջողեցան  
Եփրեմի և Մանասէի զաւկըները ։

Յակոբայ իր թոռներուն և որդիներուն համար  
ըսածները ճշդիւ կատարուած ըլլալով, անտարա-  
կոյս անիկայ Աստուածոյ Հոգւոյն ազդեցութեամբը  
խօսեցաւ, ուստի և անոր օրհնութիւնը ճշմարիտ  
մարդարէութիւն էր ։

**Ետքը սկսաւ Յակոբ իր մահուանը վրայ խօսիլ։ Ահա ես պիտի մեռնիմ։ բայց Աստուած քեզի հետ ըլլայ, ըստ Յովսեփայ, և քեզնորէն հայրերուդ երկիրը տանի։ Այսինքն՝ ըսել ուզեց թէ Աստուած քու զաւկըներդ ու միւս որդւոց զաւկըները և բոլոր Իսրայելացւոց ազգը Եղիպտոսէն պիտի հանէ ու Քանան դարձրնէ։**

**Դարձեալ, ըստ Յակոբ Յովսեփայ, քու եղայլներուդ ունեցած երկրին ժառանգութէնէն մաս մը աւելի տուի քեզի, զոր իմ սրովս և աղեղովս առած եմ Ամովրհացւոց ձեռքէն։**

**Կը կարծուի թէ այն երկրին մասը զոր Յակոբ Յովսեփայ և անոր զաւակըներուն ընծայ ըրաւ Սիւքեմի մէջ էր, և այն տեղը Եմովրին զաւկըներէն ծախու առած էր։ Հաւանական է որ Ամովրհացիք բռնութեամբ այն տեղը Յակոբայ ձեռքէն առած էին, անիկայ ալ ետքը նոյն տեղւոյն համար պատերազմ ընելով անոնցմէ ետ առած էր։ Ետքը Յովսեփայ մարմինը հոն թաղուեցաւ։**

**Հիմա ծերունի նահապետն աւելի մեծ և հարկաւոր պաշտօն մը ունէր կատարելու. այսինքն՝ իր որդւոցը մարդարէական նշան մը տալու որ գիտնային թէ իրենց զաւկըներն ինչ պիտի ըլլային, երբ Քանանու երկիրը ժառանգէին։**

**Ժողվուեցէք, ըստ անոնց Յակոբ, որ վերջին օրերը ձեզի պատահելու բաները պատմեմ։ Մէկտեղ եկէք, ով Յակոբայ որդիքը, ականջ դրէք ձեր հօրը Իսրայելի խօսքին և լսեցէք։**

**Հոն տասուերկուքն ալ իրենց հօրը մահուան անկողնին բոլորտիքը կայնեցան։ Ի՞նչ երևելի տեսարան էր։ Յակոբ և որդիքն այնչափ վտանգներէ և արկածներէ անցնելէն ետքը, ողջ և ՚ի միասին կը գտնուէին։**

**Արդարև Յակոբայ որդւոցը համար շատ ազդու  
էին այն խրատներն ու մարդարէութիւնները զու-  
րոնք կը լսէին իրենց հօրմէն, որ անտեսանելի  
աշխարհքը մտնելու վրայ ըլլալով՝ ապագայ  
դէպքերն իր առջև բացուած կը տեսնէր :**

**Յակոբայ մարդարէութիւնները մանրամասն պատ-  
մել շատ երկայն կ'ըլլայ . դուք զանոնք Աստուա-  
ծաշունչէն, կամ ձեր ծնողաց ու վարժապետներուն  
և կամ անոնց ձեզի տուած դիրքերուն օգնու-  
թեամբը կրնաք սորվիլ : Այն մարդարէութեանց մէջ  
կան հասկրնալու դժուարին բաներ . բայց երբ ձեր  
հասակն ու մտաւոր կարողութիւնները զարդանան,  
շատ բաներ պիտի գտնէք անոնց մէջ որոնց համար  
պիտի զարմանաք Աստուծոյ նախախնամութեանը  
վրայ, և այնչափ տարիներ առաջ եղած այն մար-  
դարէութեանց կատարուիլը տեսնելով՝ պիտի հա-  
մոզուիք Առւրբ Գրոց ճշմարտութեանը նկատմամբ :**

**Յակոբ իր մարդարէութիւններն ընելին, և իր  
բոլոր որդիքն օրհնելին ետքը, անոնց ամենուն  
պատուիրեց որ զինքը Գերրոնի մօտ Մամբրէի  
ագարակին մէջ իր հայրերուն քով թաղեն :**

**Մինչև այն ատեն Յակոբ իր անկողնին վրայ  
նստած էր : Թէպէտ մարմնով տկար էր, իր սիրելի  
Յովսէփը տեսնելով՝ մտքին մէջ ծնած զուարթ  
մտածութիւններէն մեծ զօրութիւն ստացած էր :  
Մարդարէական հոգին ալ որ անոր վրայ եկած էր՝  
անոր հոգին սովորականէն աւելի լուսաւորած  
էր . այնպէս որ անոր բոլորտիքը գտնուողները հա-  
զիւ կրնային հաւատալթէ իրենց լսածները մահուան  
վերջին կէտը համող մէկու մը բերնէն կ'ելլին :**

**Վերջապէս Յակոբ ամէն բան կատարելին ետքը,  
յոդնութիւն զդալով, տեսնելով նաև որ անցնելու  
վրայ է, ուզեց քիչ մը հանդարտիլ . ուստի և**

ոտուըներն անկողնին մէջ ամփոփելով և մէկ կողմը կծկտելով, խաղաղութեամբ իր վերջին շունչը տուաւ և հոգին ստեղծողին ձեռքը յանձնեց :

**Տէրոջ** առջին պատուական է իր սուրբերուն մահը : **Արդարին** մահուանը պէս ըլլայ իմ մահս, և վախճանս անոր վախճանին նման : **Դուք** ալ կ'ուզէ՞ք այսպէս մեռնիլ . **Աստուծոյ** ապաւիսեցէք, ինչպէս որ **Յակոբ** ըրաւ . **Քրիստոսի** ապաւինեցէք որուն մի միայն փրկիչ ըլլալը ձեզի յայտնուած է : **Սիրեցէք** անիկայ, հնազանդ եղիք անոր, ջանք ըրէք որ անոր նմանիք : **Զեզ** ըոլորովին անոր տուէք՝ ուրիշներուն բարիք ընելով, քանզի բարիք ընելը շատ զուարճալի գործ մըն է ճշմարիտ **Քրիստոնէի** մը : **Գիտցէք** որ դուք ալ **Յակոբայ** պէս աշխարհիս վրայ օտարական և պանդուխտ էք : **Աշխարհ** մի սիրէք, ձեր յոյսը երկնից վրայ դրէք : **Յակոբայ** պէս հաւատքով ապրեցէք : **Խնդրեցէք** որ այս կեանքէն հրաժարելէն ետքը՝ երկնաւոր **Քանան** տարուիք, ուր միայն յաւիտենական հանդիստ կրնաք գտնել :

**Անատեն** **Յակոբայ** պէս խաղաղութեամբ և միփարութեամբ կրնաք մեռնիլ, և պատրաստ ըլլալ հոգերով և փորձութիւններով լեցուն այս աշխարհք թողլով երկինք երթալու և յաւիտենան **Տէրոջը** հետ ապրելու :

## ԳԼՈՒԽ ՀԲ

**Յ**ԱՌԵՒՔԱՅ ՊՐՊԱՋՆԵՆԵՆՆ էր հօրը մահուանը վրայ ։ **Ա**ՆԻՒՅ  
և հրամայէ հօրը մարմնը պմասէլ և պատել ։ **Յ**ԱՀԵԲԱՅ համար  
եղած սուժը ։ **Ա**ՆՈՐ յուղարկառորդնենը և **Մ**ԱՅԲՐԵԼ այրին  
մշ բաղւեւը ։ **Յ**ԱՌԵՒՔԱՅ եղբայրներուն կասկածն ու վախը ։  
**Զ**ՈՐԵՐՈւն եղճի խայթը ։

**Յ**ՈՎՍԵՎ շատ ցաւ զգաց իր հօրը մահուանը վրայ ։  
**Ա**ՆՈՐ երեսին վրայ իյնալով համբուրեց և լացաւ ։  
Որչափ մեծ էր անոր սէրն իր հօրը վրայ, այնչափ  
սաստիկ եղաւ անոր տրտմութիւնը, երբ իր սիրելի  
հայրն իրմէ բաժնուած տեսաւ ։

**Մ**ԵՌԱԾ ժամանակն անոր աչուըները դոցեց,  
և կ'ուզէր որ ամէն պատիւ ըլլար անոր. ուստի  
և այնպիսի յուղարկաւորութիւն և թաղում մը  
ըրաւ, որ եղբայրներուն և բոլոր Եղիպտացւոց  
յայտնի եղաւ թէ ինչ աստիճան կը սիրէր և  
կը յարգէր Յովսէվ իր հայրը ։

**Ա**ՆՈՐ հրամանաւը դիապատիկներն այն ժամա-  
նակուան սովորութեան համեմատ՝ զմուսեցին և  
պատեցին **Յ**ակոբայ մարմինը ։ **Ե**ղիպտացիք մե-  
ռեներն այլւայլ համեմային նիւթերով օծելու  
և փաթթելու կերպ մը դիտէին, այնպէս որ դիա-  
կունք դարերով փտելէ ազատ կը մնային ։

**Յ**ՈՎՍԵՎԻԱՅ դիապատիկները կամբժիշկները քա-  
ռասուն օր աշխատեցան այս դործողութիւնը  
կատարելու. բայց առաջ երեսուն օրուան մէջ  
պէտք եղած կարեսոր բաները պատրաստեցին.  
այսպէս բոլոր դործողութիւնը եօթանասուն օր  
կատարուեցաւ ։

**Այս** միջոցին Յովսէփ և Յակոբայ բոլոր ընտանիքը բաւական ժամանակ ունեցան սուգ ընելու։ Եղիպտացիք ալ անոնց հետ միացան, և ասով տեսնուեցաւ թէ Փարաւոն և անոր ժողովուրդը զՅովսէփ ո՛րչափ կը յարդէին։ Արդարեւ անոնք Յակոբայ մահուանը համար այս տրտմութեան նշանը ցուցընելով ուզեցին յայտնել իրենց երախտագիտութիւնն առ Յովսէփ։

Եօթանասուն օր ետքը Յովսէփ հրաման առաւ Փարաւոնէն Քանան երթալով իր հայրը թաղելու, ինչպէս որ անոր կենդանութեան ատենը երդմամբ խոստացած էր այնպէս ընել։

Հատ մեծ և հանդիսաւոր թաղում էր ասիկայ։ Յովսէփ և անոր բոլոր եղբայրներն իրենց ընտանիք, բաց ՚ի մանր տղայոց, նաև տէրութեան գործակալները և Յովսէփայ պալատին ազնուականները, Եղիպտոսի ծերունիք և պատուաւոր մարդիկ, կառքերով և ձիերով մեծ խումբ մը ըլլալով մէկտեղ գացին։

**Այն** տեղուր այս մեծ և շքեղ հանդէսը պիտի կատարուէր՝ քանի մը հարիւր մղոն հեռու էր Եղիպտոսէ. և երբ անոնք Քանան հասան, հոն Ատագկոչուած տեղ մը, իրենց սրտին տրտմութիւնը, ինչպէս սովորութիւն էր, շատ մեծ ու սաստիկ ողբով մը յայտնեցին։ Այս սուգը եօթն օր տեսեց։

Հոն մօտ ընակող Քանանացիք այս մեծ տեսարանին ականատես ըլլալով ըսին, Եղիպտացիք մեծ սուգ ունին։ Ետքը այն տեղւոյն անունը Սուգ Եղիպտոսի կոչուեցաւ։

**Անկէ** այն մեծ բազմութիւնը Քերրոն երթալով Մամբրէի այրին մէջ Աբրահամու, իսահակայ, Առայի, Ռեբեկայի և Լիայի քով թաղեցին զՅակոբ։

Իրենց հանգուցեալ հօրն այս վերջին տրտմալի պաշտօնը կատարելէն ետքը, Յովսէփ ու Եղբայրները և բոլոր անոնց հետ եղողները Եգիպտոս դարձան։

Յովսէփայ Եղբայրներն իրենց հայրը մեռած տեսնելով՝ սկսան վախնալ թէ գուցէ Յովսէփ անոնցմէ վրէժ առնել ուզէ։ Կ'երևայ որ անոնք դեռ հասկցած չէին Յովսէփայ երկիւղած, բարեսէր և ողորմած բնաւորութիւնը։ Կը կարծէին թէ անիկայ քինախնդիր ոգւով անոնց առջի անողորմութիւնն ու չարութիւնը միտքը կը պահէր, բայց հօրը սիրոյն համար միայն անոնց հետ մարդասիրաբար կը վարուէր, խորհելով թէ իր ծերունի հօրը սրտին մեծ ցաւ կրնար ըլլալ իր զաւկրներուն մէջ հակառակութիւն տեսնելը։ Կը խորհէին նաև որ հօրը մեռնելէն ետքը, Յովսէփ այլ ևս այն նկատումը չունենալով, կրնար համարձակ իր վրէժ խնդրութիւնը յագեցընել։ Ասոնք խորհելով Յովսէփայ Եղբայրները շատ կը վախնային։

Հոս, սիրելի տղաք, կը տեսնէք զարմանալի վկայութիւն մը որ մեղքին թշուառութիւնը կը ցուցընէ։

Յովսէփայ Եղբայրներն իրենց առջի անօրէնութեան յիշատակութիւնը միշտ կը պահէին. ուստի երբ կը տեսնէին զՅովսէփ, Թովգայիմի դէպքն անոնց միտքը եռւ գար, և կ'ամճնային ու կը դողային։

Երբ Յովսէփայ յագած իշխանական ազնիւ և փառաւոր հանդերձներուն կը նայէին, անոնց աշքին առջև կու գար այն հանդերձը զոր արեան մէջ թաթիսելով իրենց հօրը տարած, և զանի խաբած էին զՅովսէփ անոր մեռած կարծեցընելով։

Երբ կը տեսնէին որ անիկայ իշխանութեամբ և պատուով կը նստէր, կամ իր շքեղ կառքը հեծած

կ'երթար , անոնց երևակայութեան մէջ կը նկարուէին այն աղետալի փոսին պատկերը որուն մէջ նետեցին իրենց եղբայրը , և Իսմայելացիները՝ որոնց իբրև գերի վաճառեցին զանի :

**Ա**յսպէս անցած գացած մեղքեր միշտ մարդուս միտքը կու գան , ու խիղճը կ'արթնցընեն որ թշուառ մեղաւորը յանդիմանէ և տանջէ :

Խիղճը կ'իմացընէ մեղաւորին թէ ըստ արդարութեան արժանի է պատժուելու : **Յ**ովսեփայ եղբայրներուն ալ վախը թէ գուցէ իրենց եղբօրմէն պատժուին , նոյն խղճի խայթէն յառաջ կու գար :

**Ա**նոնք գիտէին թէ պատժոյ արժանի էին , և թէ , եթէ անոնց իրենց եղբօրը դէմ ըրած չարութիւնը հրատարակուէր , բոլոր **Ե**գիպտացիք և ուրիշ մարդիկ իրաւացի պիտի համարէին անոնց պատժուիլը :

## ԳԼՈՒԽ ԼԳ

**Յ**ովսեփայ Եղբայրներն անկէ ներսում իը ինդրէն : **Յ**ովսեփ անոնց չւելու իը ժարապոէ : **Ա**նոնց պարագահանունիւնը շնորհակալ ըւլը ըւլը Աստուծոյ և **Յ**ովսեփայ : **Ա**սոն+ իսրայեղողն սուրէշներն չեշունիւն ըրտօնէ , և այն ժողժին նկատմամբ է՞նչ շնորհում առնի :

**Յ**ովսեփայ բարկութիւնն իջեցընելու համար , եղբայրները խորհեցան անկեղծ սրտիւ աղերս մատուցանել անոր :

**Ա**նոր իր հօրը յիշատակին ունեցած պատիւն ու սէրը գիտնալով , բայց չհամարձակելով անոր անձամբ ներկայանալ , հաւանականաբար պատուաւոր և **Յ**ովսեփայ սերտ բարեկամ մէկը զրկեցին

անոր որ հետևեալ կերպով խօսիւ Յայրդ մեռած  
ատենը պատուիրած է եղբայրներուդ ըսելով թէ,  
Ես մեռնելէս ետքը իմ կողմանէս Յովսեփայ  
ըսէք որ կ'աղաչեմ, թողներէ ձեզի ձեր անոր դէմ  
գործած անիրաւութիւնն ու չարութիւնը։ Ուստի  
հիմա եղբայրներդ, քու հօրդ Աստուծոյն ծառա-  
ները, հօրդ այս վերջին կամքը քեզի իմացընելով,  
քենէ կը խնդրեն որ իրենց ըրածներուն փոխարէն  
անյիշաշար ըլլաս։

Յակոբայ որդիքը յանուն իրենց հօրը կ'ընէին  
այս աղաչանքը Յովսեփայ՝ որ միշտ հնազանդ  
գտնուած էր իր հօրը հրամաններուն, զանի միշտ  
սիրած և յարդած էր. որ այնպէս երկիւղածու-  
թեամբ պաշտած և սիրած էր իր նախնեաց Աս-  
տուածը որուն ծառաներն ըլլալ կը դառանէին  
եղբայրները։

Անոնք գիտնալով որ Յովսէփ այս ազնիւ զգա-  
ցումներն ունէր՝ խորհեցան թէ իրենց հօրը և Աս-  
տուծոյ անունը պիտի շարժէր անոր սիրտը ետ-  
կենալու վրէժինդրութենէ։

Բայց Յովսէփ որ ստուգիւ բոլոր այն սքանչելի  
յատկութիւնները և զգացումներն ունէր՝ թերևս  
մտքէն անդամ անցուցած չէր անոնցմէ վրէժ  
խնդրել։ Անիկայ գիտէր իր առ Աստուած ունե-  
ցած պարտականութիւնները բոլոր այն բարե-  
րարութեանց համար որոնք անկէ ընդունած էր։  
Կը զգար իր մեղանչական և մեղաւոր ըլլալը, և  
շատ խոնարհ ու մարդասէր զգացումներ ունէր առ  
ամենայն մարդիկ. ուստի ի՞նչպէս կրնար խորհիլ  
վրէժ խնդրել իր եղբայրներէն որոնք իր հարա-  
զատներն էին, միևնոյն Աստուծոյ ծառայք և իրեն  
հետ մասնակից իրենց հայրերուն Աբրահամու,  
իսահակայ և Յակոբայ եղած օրհնութիւններուն։

Ուստի եղբայրներուն աղաչանքը Յովսեփայ սրտին զգացումներն արթնցուց . անոր միտքը բերաւ իր հօրը քաղցր յիշատակները : Աստուած պաշտութիւնն աւելի ջերմ բորբոքեցաւ անոր սրտին մէջ , այնպէս որ չկրնալով ինքզինք բռնել սկսաւ լալ :

Կը կարծուի թէ խակոյն իր եղբայրները կանչել տուաւ , քանզի կ'ըսուի թէ անոնք զՅովսէփի տեսնելու գացին , ու ծռելով խոնարհութիւն ըրին անոր . ինչպէս որ ուրիշ անդամներ ալ ըրած էին , և ըսին , Ահա մենք քու ծառաներդ ենք :

Յովսէփի անոնց ըսաւ , Մի վախնաք , զիս Աստուծոյ տեղ դրած էք : Լսել կ'ուզէր թէ , Ես ալ ձեզի պէս մարդ եմ . ինչո՞ւ համար ահով և դողով առջես կը կենաք : Աստուած ձեր գործերը պիտի դատէ , դուք անոր միայն պիտի տաք ձեր ըրածներուն հաշիւը , քանզի անոր դէմ մեղանչեցիք : Հիմա դուք ձեզ անոր առջեւ խոնարհեցուցէք , ու ապաշխարութեամբ անկէ թողութիւն խնդրեցէք : Ինէ ամենելին մի վախնաք :

Դուք ինձի դէմ չարիք խորհեցաք , բայց Աստուած ձեր նիւթած չարիքն ՚ի բարին դարձուց , և իմ ձեռքովս շատ մարդիկ ողջ պահուեցան : Հիմա մի վախնաք . ես ձեզ ու ձեր զաւկըները պիտի կերակրեմ : Այս խօսքերն ըսելով զանոնք կը միխթարէր և մարդասիրաբար կը խօսէր անոնց հետ :

Անտարակոյս մեծ քաջալերութիւն եղաւ Յովսեփայ եղբայրներուն՝ անոր այս սիրալիր ընդունելութիւնը . և եթէ անոնք մարդկային փափուկ զգացումներ ունէին , ինչպէս որ պարտական էին ունենալ , ի՞նչ խորին տպաւորութիւն մը հարկ էր որ ընէր անոնց սրտին վրայ իրենց ազնիւ եղբօրն այն վարմունքը , և ո՞րչափ պարտական էին անոր

Հորհակալ ըլլալ, բայց մանաւանդ Աստուծոյ անոր երկայնմտութեանն ու ներողութեանը համար

Արդարե Աստուծոյ նախախնամութեան կարգադրութիւնն էր որ անոնց չար խորհուրդները խափանեց, և այնչափ աղէկութիւն յառաջ բերաւ անոնց համար Յովսեփայ ձեռօք զոր այն աստիճան ատած և արհամարհած էին։

Աիրելի տղաք, դուք ալ ասոնց նման պարագաներու մէջ գտնուած էք։ Ուրիշի գէշութիւն ընելէն ետքը ձեր խիղճը ձեղյանդիմանած է, և վախցած էք որ դուցէ Աստուծած ձեղ կերպով մը պատժէ ձեր յանցանքին համար։

Հաւանական է թէ այս կերպ բաներ ձենէ ոմանց պատահած են. և եթէ այսպէս է, ձեզի պարտականութիւն համարած էք իսկոյն խոստովանիլ ձեր ըրած յանցանքը կամ անիրաւութիւնն Աստուծոյ առջև, և թողութիւն խնդրել այն անձէն զոր վշտացուցած կամ զնասած էք։

Դուք ձեզ խոնարհեցընելու էք Աստուծոյ առջև ձեր մարդոց ըրած անիրաւութիւններուն համար։ Երբ մարդ իր նմաններուն գէշութիւն կ'ընէ, Աստուծոյ իշխանութիւնն անարդած կ'ըլլայ, քանզի որևիցէ գէշութիւն կամ անիրաւութիւն ընել անոր կամացը և պատուէրներուն հակառակ է։

Աստուծած ոչ միայն գէշութիւն ընելը կ'արդելէ, հապա կ'ուզէ նաև որ միշտ բարիք ընենք։ Ան ձեզի կը պատուիրէ ձեր ընկերը ձեր անձին պէս սիրել. իսկ զԱստուծած բոլոր հոգւով, կարողութեամբ և սրտով։

Հիմա պարտական էք ճշմարիտ տրտմութիւն զգալ այն գէշութեանց համար որ ձեր ընկերներուն գէմ ըրած էք. անոնցմէ ներում խնդրելու, և

այսուհետև անոնց հետ մարդասիրաբար և ներու զամոռութեամբ վարուիլ առաջադրելու էք :

**Ա**ստուծոյ ալ շնորհակալ եղէք, որ ձեր ուրիշին ըրած չարութեանը և տուած վսասին համար ձեզի երկայնամիտ եղած է, և պատժած չէ ձեզ, ինչպէս որ արժանի էիք :

**Հ**աստատութեամբ առաջադրեցէք որ **Ա**ստուծոյ շնորհքովս ու **Ք**րիստոսի **Յ**իսուսի օդնութեամբը նորէն այնպիսի գէշ բաներ չընէք, և առհասարակ ամէն մեղքէ զգուշացէք :

**Ե**թէ այս ըսածներուս վրայ հոս քիչ մը խորհիք, կարծեմ պիտի ճանչնաք ձեր սրտին վիճակը : **Յ**ովսեփիայ եղբայրներուն չարութեանը նկատմամբ ինչ որ կը խորհիք՝ նոյնը խորհեցէք նաև ձեր ըրած անիրաւութիւններուն և մեղքերուն վրայ :

**Թ**ող ձեր խիղճը խօսի : “**Թ**է որ մեր սիրտերը մեզ կը մեղադրեն, հապա **Ա**ստուած մեր սիրտերէն մեծ է և ամէն բան գիտէ”, կ’ըսէ **Յ**ովհաննէս **Առաքեալ :**

**Ա**ն որ իր մեղքերը կը ծածկէ՝ յաջողութիւն չունի. բայց ով որ կը խոստովանի և կը հեռանայ անոնցմէ՝ ողորմութիւն պիտի գտնէ :

## ԳԼՈՒԽ ԼԴ

**Յ**ովսեփայ մահուան օօտենալը = **Ա**նիկայ մարդարէանալով ոչ  
իւրայելացի + **Ե**ժեղառուէ եւլէլով **Ք**անան պէտէ երեան, ի'երու-  
նցընէ զանոնէ + որ իր մարմնն ալ երենց հետ քանան պանին =  
**Յ**ովսեփայ մարմնոյն զմասսուէլով պահուէլը = **Ա**նոր մարմնոյն մինչև  
իւրայելացոց **Ք**անան երեալը **Ե**ժեղառուէ մէջ պահուէլուն  
պարճառը = **Ա**ստուծոյ ստանչելէ նախախնամութեանը =

**Յ**ովսեփայ եղբայրները նորէն իրենց ընտանիքնե-  
րուն քով եկան **Գ**եսեմ, ուր ընակելով սկսան  
բազմանալ, և **Ա**ստուած կը յաջողէր անոնց գործ-  
քերը **Ե**գիպտոսի թագաւորին պաշտպանութեանը,  
և իրենց մարդասէր և խնամու եղբօրը հսկողու-  
թեանը ներքեւ :

Կ'երեայ որ **Յ**ովսեփայ կենդանութեան ատենը  
տիրող թագաւորները շատ կը սիրէին զ**Յ**ովսէփ,  
որ իր քաղցրութեանն ու արդարութեանը համար  
բոլոր **Ե**գիպտացւոց ալ հաճելի և սիրելի էր :

**Յ**ովսէփ այնչափ ապրեցաւ որ **Ե**փրեմի և  
**Մ**անասէի թոռները տեսաւ : **Վ**երջապէս ծե-  
րութիւնը հասնելով իմացաւ որ մահը կը մօտե-  
նար, քանզի տկարութիւնը կ'աւելնար օր ըստ  
օրէ : **Ո**ւստի իր եղբայրները կանչելով անոնց յայտ-  
նեց իր մօտալուտ մահը, և **Ա**ստուծոյ իրենց հայ-  
ըրուն ըրած խոստումներն անոնց յիշեցուց, և  
իբրև թէ մարդարէանալով ըստ, **Ա**ստուած ձեզի  
այցելութիւն պիտի ընէ, և հանելով ձեզ այս երկ-  
էս պիտի տանի այն երկիրը զոր երդմամբ խոստա-  
ցաւ մեր հայերրուն **Ա**բրահամու, իսահակայ և  
**Յ**ակոբայ :

**Յովսէփի գիտէր թէ շատ կարեռը էր Իսրայելացւոց չմոռնալ թէ իրենք օտարական էին Եղիպտոսի մէջ, և պիտի դառնային Քանան որ իրենց իբրև ժառանգութիւն խոստացուած էր Աստուծմէ: Եթէ անոնք այն խոստացեալ երկիրն երթալու յոյս և փափաք չունենային, շատ մնաս կ'ըլլար անոնց, քանզի զիրենք Եղիպտոսի մէջ բնիկ կարծելով, շուտով կը յարէին այն տեղի կուապաշտ ժողովուրդին, և թերեւս քիչ ատենուան մէջ բոլորովին կը մոռնային ճշմարիտն Աստուծ և անոր պաշտօնը:**

**Յովսէփի իր եղբայրներուն յիշեցրնելին ետքը թէ Քանան պիտի դառնան, անոնցմէ երդում առաւ որ Եղիպտոսէն ելած ատեն իր մարմինն ալ մէկտեղ տանելով թաղեն իր հայրերուն քով:**

**Անտարակոյս Յովսէփի անոնց ուրիշ շատ ընտիր խորհուրդներ և խրատներ ալ տուաւ, բայց Աստուծաշունչն այս նկատմամբ բան մը չ'ըսեր:**

**Յովսէփի մեռաւ բարեպաշտութեամբ հարիւր տասը տարեկան, և անոր մարմինը զմուսուելով ըստ օրինի Եղիպտացւոց՝ պահուեցաւ արկղի մը մէջ մինչև Իսրայելացւոց Եղիպտոսէն ելլելը:** **Անտեն Յովսէփիայ մարմինը Քանան տարուելով թաղուեցաւ Ահւքէմ զոր Յակոբ Եմովրին որդիներէն դնած, ու Յովսէփիայ ժառանգութիւն տուած էր:**

**Հաւանական է թէ Յովսէփի գիտմամբ իր մարմինը պահել տուաւ Եղիպտոսի մէջ մինչև Իսրայելացւոց Քանան երթալը, որպէս զի իր յիշտակն անոնց մէջ պահուէր:** **Իսրայելացիք և անոնց որդիքն ու թոռները զՅովսէփի յիշելով՝ պիտի յիշէին նաև Յակոբ, Իսահակ և Աբրահամ, Աստուծոյ իրենց համար ըրած խոստումները,**

Հետևապէս նաև Քանան, և անոնց փափաքը  
միշտ վառ պիտի մնար հոն դառնալու։

**Այսպէս Յովսեփայ մարմինը Եղիպտոսի մէջ**  
երևելի յիշատակարան մը կամ համառօտ պատ-  
մութեան մը պէս պիտի ըլլար Իսրայելի որդւոց  
այն հարիւր և յիսուն տարուան մէջ զոր անոնք  
անցուցին Եղիպտոս Յովսեփայ մահուընէն ետքը,  
մինչև որ Մովսեսի ձեռօք ելլելով անկէ Քա-  
նան դացին։

Չատ հաւանական է թէ Իսրայելացիք քանի  
որ Յովսեփայ մարմինը կամ շիրիմը կը տեսնէին,  
կը յիշէին անոր սա խօսքը. «Աստուած անշուշտ  
ձեզի այցելութիւն պիտի ընէ, ու իմ ոսկրներս  
ասկէ հանեցէք”։

**Այսպէս Յովսէփ,** թէպէտ մեռած էր, իբրև  
կենդանի կը խօսէր անոնց հետ, և կը յիշեցընէր  
անոնց շատ բաներ, մանաւանդ սա թէ իրենք  
պանդուխտ էին Եղիպտոսի մէջ, և թէ սպասե-  
լու էին Աստուծոյ այցելութեանը՝ պանդխտու-  
թեան երկրէն իրենց բուն երկիրը դառնալու  
համար։

**Աստուած** ի՞նչ զարմանալի ճամբաներով իր  
խմաստուն խորհուրդները կը կատարէ։

Աքանչելի կերպով զՅովսէփ գործիք մը ըրաւ  
սոսկալի և վտանգաւոր սովէ մը աղատելու իր  
սեպհական ժողովուրդը որ ճշմարիտ Աստու-  
ծութեան գիտութիւնն ու պաշտօնը պիտի պահէր,  
և որմէ շատ տարիներ ետքը պիտի ելլէր Յիսուս  
Քրիստոս աշխարհի հզօր Փրկիչն ու կենարարը։

**Աստուած Յովսեփայ** մահն ալ զօրաւոր միջոց  
մը ըրաւ նոյն ժողովուրդին հաւատքը պահելու  
և զօրացընելու իրենց հայրերուն եղած խոստում-  
ներուն նկատմամբ, և անոնց փափաքը վառ պահե-

լու աւետեաց երկիրը Քանան դառնալու համար՝  
ուր անոնք ուրիշ ազգերէն ընտրեալ և զատեալ  
ազգ մը պիտի ըլլային, և ուստի փրկութեան  
Աւետարանին աւետիքը պիտի ելլէր և ծաւալէր  
բոլոր աշխարհի մէջ։

Յովսեփայ պատանեկութեան ատենը տեսած  
երազներն անտարակոյս անոր մտքին վրայ օդ-  
տակար ազգեցութիւն մը ըրին զգալու թէ Աս-  
տուած նպատակներ ունէր կատարելու անոր մի-  
ջոցաւ։ Անիկայ անշուշտ իմացաւ թէ պաշտօնի  
մը կանչուած է, թէպէտ իրմով կատարուելու  
գործին ինչ ըլլան խկզբան չէր կրնար գիտնալ։  
Բայց և այնպէս Յովսեփայ միտքը բացուեցաւ,  
զգացումներն արթնցան, և այնպէս յարմար եղաւ  
այն վիճակին որուն մէջ պիտի դրուէր։

Երբ Յովսէփի հասաւ այն բարձր վիճակին  
նախախնամութեան զարմանալի կարգադրութեամ-  
բը, սկսաւ հասկընալ թէ ուր կը նայէին իր երազնե-  
րը, և զօրացաւ անոր հաւատքը թէ Աստուած  
ստուգիւ գործ մը ունէր կատարելու անոր ձեռքով։

Վերջապէս կատարուեցան Յովսեփայ երազ-  
ները մէկիկ մէկիկ։ Նախ եղբայրները գալով  
մատուցին անոր իրենց խոնարհութիւնն ու հպա-  
տակութիւնը։ Երկրորդ անգամին հօրմէն ընծա-  
ներ ընդունեց։ ասիկայ ալ կերպ մը խոնարհու-  
թիւն և հպատակութիւն էր։

Երբ եղբայրներն այն ընծաներն իրենց հօրը  
կողմէն կը մատուցանէին, ոչ միայն ծուեցան անոր  
առջեւ, այլև Յակոբայ որպիսութեանը նկատմամբ  
հարցուելով Յովսեփէն՝ իրենց տուած պատասխա-  
նին մէջ իրենց հայրը ծառայ կոչեցին Յովսեփայ,  
և նորէն ծուելով և երկրպագութիւն ընելով անոր,  
ցուցընել ուղեցին թէ բոլոր իրենց ընտանիքն, Յա-

կորաւ հանդերձ նոյն հպատակութեան զգացումն ունէին դէպ առ Յովսէփ, իբրև առ կառավարն Եղիպտոսի:

Վերջապէս հայրը և բոլոր ընտանիքը դալով տեսան զանի իշխանութեան դահուն վրայ բազմած, իբրև երկրորդ Փարաւոնի:

Յակոր, և անոր որդիքն ու ընտանիքը Եղիպտոսի մէջ իրօք Յովսեփայ հպատակներն եղան, անոր ձեռքէն կերակրուեցան, և անկէ պաշտպանուեցան:

Այսպէս Յովսեփայ եղբայրներուն որաներն անոր որային առջև խոնարհելով երկրպագութիւն ըրին. արեգակը, լուսինն ու մետասան աստեղք իրենց հպատակութիւնը ցուցուցին անոր,

## ԳԼՈՒԽ ԼԵ

Յովսեփայ վարչը: Աստուծոյ վրայ առնեցած զօրաւոր հաստութը: Անոր վարչին ժերազանցունեան բուռն հիմն առ է: Կարդացողն ալ առնէ<sup>®</sup> Աստուծոյ վրայ այս հաստութը:

Աստուած, ինչպէս տեսանք, շատ մեծ գործեր ունէր Յովսեփայ ընել տալու: Ասոնք կատարելէն ետքը՝ իր հաւատարիմ ծառան իրեն առաւ:

Կը հաւատանք թէ Յովսէփ Աբրահամու, իսա հակայ, Յակորայ և Տէրոջը փրկած ուրիշ հոգւոց քովն է:

Թէպէտ անոր ոսկըները խոստացեալ երկրին մէջ պահուած են, անոր հոգին երկնային Քանանու երանութիւնն ու փառքը յաւիտենական հանդստեամբ կը վայելէ:

Սիրելի տղաք, ձեր միտքերը դէպ այն երկնա-

յին ժառանգութիւնն ուղղելու, և ձեր յոյսն անոր վրայ հաստատելու համար էր որ ես Յովսեփայ պատմութիւնը դրելու այնչափ ջանացի։ Ուստի կ'ուզեմ որ խորհիք Աստուծոյ շնորհօքը, թէ որ չափ հարկաւոր է ձեզի պատրաստ գտնուիլ, որ աշխարհիս վրայ ձեր պանդխտութեան ընթացքը կատարելէն ետքը՝ մտնէք երկնից յաւիտենական հանգստեան մէջ, և յաւիտեանս յաւիտենից Տէրութը քով ըլլաք։

Հոս քիչ մ'ալ Յովսեփայ վարքին երևելի յատկութեանցը վրայ խորհինք։ Շատ արժան է մեզ անոր նմանիլ. ուստի տեսնենք թէ այն յատկութիւններէն մենք ալ ունի՞նք։

Նախ՝ Յովսէփ կատարեալ հաւատք ունէր Աստուծոյ վրայ։ Անիկայ զԱստուած տեսած չէր, բայց և այնպէս աներկրայ էր թէ անիկայ գոյ, և թէ անոր զօրութիւնը, իմաստութիւնը, արդարութիւնը, բարութիւնը և ճշմարտութիւնն անհուն և անսահման են։

Երկրորդ՝ Յովսէփ կը հաւատար թէ Աստուած այլեայլ ժամանակ Արրահամու, իսահակայ և Յակոբայ հետ խօսած էր, թէ անոր խոստումներուն վրայ հօրը պատմածները ճշմարիտ էին, և թէ անոնց բոլորն ալ անշուշտ պիտի կատարուէին։

Երրորդ՝ Յովսէփ գիտէր թէ բոլոր իր խորհուրդները, զգացումները և գործքերն Աստուծոյ համար ըլլալու էին։ Ասիկայ շատ ճշմարիտ է։

Երկինք պիտի ընդունուին անոնք միայն՝ որ զԱստուած կը սիրեն և անոր կը հնազանդին. իսկ մեղաւորք անոր երեսէն յաւիտեան պիտի վուըտուին։

Թուրես Յովսէփ քիչ մը տեղեկութիւն ունէր

Քրիստոսի վրայ, և անոր դալստեանը կը սպասէր՝ իբրև իր Փրկչին յուսալով անոր։ Ասիկայ շատ հաւանական է. քանզի գրուած է թէ Աբրահամ Քրիստոսի օրը տեսաւ և ուրախացաւ։ Ապա անտարակոյս Աբրահամ Փրկչին գիտութիւնը սորվեցուց իր որդւոցը, ասոնք ալ իրենց որդւոցը և այս կերպով Յակոբ և անոր ընտանիքն ու զաւկներն ալ անտեղեակ չեին Քրիստոսի և անոր դալստեանը։

Պողոս Առաքելոյն առ Եբրայեցիս գրած թրդ թին ԺԱ. գլխուն մէջ Յովսէփ յիշուած է այն մարդոց հետ՝ որ նշանաւոր էին Աստուծոյ և անոր խոստումներուն վրայ զօրաւոր հաւատքով։

Հոն ըսուած է թէ «Հաւատքով Յովսէփ իր վախճանելու ատենը յիշեցուց Իսրայելի որդւոցը Եգիպտոսէն ելլելը, ու իր ոսկորներուն համար պատուէր տուաւ»։

Ուրեմն Յովսէփ կատարեալ հաւատք ունէր Աստուծոյ խոստմանցը վրայ, և վստահ էր թէ Իսրայելացիք իր եղբայրները՝ նորէն Քանան պիտի դառնային, և այն սքանչելի երկիրն իբրև բուն իրենց հայրենիքը պիտի ժառանգէին։

Յովսէփ այս վստահութիւնն ունէր ոչ միայն Աստուծոյ այն մէկ խոստմանը նկատմամբ, այլ անոր բոլոր խօսքերուն ալ նոյն հաստատութեամբ կը հաւատար, և անոր ամին պատուէրներուն հաւատարմութեամբ կը հնազանգէր։

Յովսէփայ խորհուրդներուն, զգացումներուն, ընաւորութեանը և բովանդակ վարքին մէջ ինչ բարի, ճշմարիտ, ուղիղ և աստուածահաճոյ բան որ կար՝ այս կենդանի և զօրաւոր հաւատքէն յառաջ կու գար։

Անոր հաւատքը կը նմանէր այն մեծամեծ և

ծանր քարերուն որ հողին մէջ խորունկ և հաստատ կը թաղուին, և անոնց վրայ կը կանգնուի տուն մը :

Ճարտարապետները շատ աղէկ գիտեն ասիկայ, այնպէս որ երբ շինուած մը հաստատ կանգնեցը նել կ'ուզեն, անոր հիմը պինդ և անշարժ քարերու վրայ կը դնեն :

**Աստուծոյ վրայ հաւատք ունենալը մարդուս վարքին գերազանցութեանը հիմն է :** **Առանց հաւատքի կրնայ բարութեան նշոյլ մը կամ արտաքին զգաստութիւն մը տեսնուիլ.** բայց ճշմարիտ զգացումներ չեն կրնար ըլլալ սրտին մէջ :

**Մինչև որ տղայ մը չհաւատայ թէ իր հայրը բարի և իմաստուն ըլլալով աղէկ կառավարել և երջանիկ ընել գիտէ, և թէ անոր պատուերներն արդար են, սպառնալիքն 'ի գործ կը դրուին և խոստումները կը կատարուին, մինչև որ այսպիսի մեծ վստահութիւն մը չունենայ իր ծնողացը վրայ, ճշմարիտ սէր և հնազանդութիւն չի կրնար ունենալ անոնց :**

**Կրնայ այնպիսի բաներ ընել որ սիրոյ և հնազանդութեան երևոյթ մը ունենան, բայց սրտին մէջ անոնց համեմատ զգացումներ չի կրեր, ոչ ալ հնազանդ և սիրելի զաւկի մը վարքը կրնայ ունենալ :**

**Այսպէս ալ դուք, սիրելի տղաք, մինչև որ Յովսեփայ պէս ճշմարիտ և զօրաւոր հաւատք մը չունենաք **Աստուծոյ**, ձեր երկնաւոր հօրը վրայ, չէք կրնար ճշմարիտ սէր և հնազանդութիւն ունենալ անոր, ոչ ալ բարի խորհուրդներ, զգացումներ և բարի վարք. ուստի և չէքկրնար պատրաստուիլ երկինք երթալու ձեր մահուընէն ետքը :**

Նիմա քննեցէք դուք զձեզ և տեսէք թէ այս  
հաւատքն ունի՞ք Աստուծոյ վրայ . Սուրբ գրոց  
բոլոր խօսքերուն , պատուէրներուն , խոստումնե-  
րուն և սպառնալիքներուն բոլոր սրտով կը հա-  
ւատա՞ք :

Եթէ Յովսէփ Աստուծոյ այն խոստմունքին  
միայն հաւատացած ըլլար , այսինքն՝ Իսրայելա-  
ցւոց Քանան դառնալուն և Աստուծոյ ուրիշ  
յայտնութիւններուն և հրամաններուն չհաւատար  
և չնազանդէր , կատարեալ հաւատացեալ մը և  
ճշմարտապէս բարի մարդ չէր կրնար ըլլալ , և  
երկնաւոր Քանանը մտնելու յարմարութիւն մը  
ամենեին չէր կրնար ունենալ :

Ուստի եթէ դուք Աստուածաշունչին մէջ որ  
Աստուծոյ խօսքն է՝ բոլոր ըսուածներուն կը հա-  
ւատաք , պէտք է որ համոզուիք թէ մինչև որ  
ճշմարիտ ապաշխարութիւն չընէք ձեր մեղքերուն  
վրայ , և Տէր Յիսուսի չապաւինիք , և ձեր հա-  
ւատքին անկեղծութիւնը չցուցընէք Աստուծոյ  
պատուիրանացը հնազանդելով , չէք կրնար վը ը-  
կուիլ :

Բոլոր այս ճշմարտութիւններուն ուղիղ սրտով  
կը հաւատա՞ք . զանոնք միշտ յիշելով 'ի գործ  
կը դնէ՞ք :

## ԳԼՈՒԽ ԼԶ

**Յ**ԱՆԵՔԱյ էր հօրը սպասած սերն ու հոտղանդառնիւնը ։  
Որդիական սերն ու հոտղանդառնիւնը ճշմարիր և հասպասառն  
էն, երբ Առարտեսոյ վրայ հասարաւ ունենալը յառաջ իւս քան ։  
Ասոնտ իւրդացող աղաւ է նույնէս իւ վարուն էն էրենց ծնողաց  
հետ ։ ՅԱՆԵՔԱյ էր եղբայրներուն վրայ սունեցած սերը և  
անոնց հետ ժաղացանեամբ վարուելը ։ Առարտեսոյ և Քրիստոնակ  
հասարաւալն սուրեներու նկագամամբ այս զբացածներն սունեալ  
իւս քայ ։ Ասոնտ իւրդացող աղան այս զբացածներն սունէ ։

**Յ**ՈՎՍԵՓԱՅ վարուցը մէջ տեսնուած մէկ երեւելի  
բանն ալ՝ անոր իր ծնողացը ունեցած սէրն ու  
հնազանդութիւնն էր ։

Անիկայ այս սէրն ու հնազանդութիւնը միշտ  
և ամէն բանի մէջ կը ցուցընէր, ոչ թէ իրեն  
հաճոյ եղած բաներու մէջ միայն ։ և ասիկայ նշան  
է թէ անոր սէրն ու հնազանդութիւնն Աստուծոյ  
վրայ հաւատք ունենալէն յառաջ կու գար ։

Թերեւս կարդացողը տեսած է այնպիսի ծնողք  
որ Յակոբայ պէս Աստուծոյ բարեկամ չեն, այս  
ինքն՝ Աստուծոյ վրայ կենդանի հաւատք և  
Քրիստոսի վրայ հաստատ յոյս չունին ։ Այնպէս  
կ'ապրին և կը վարուին, որպէս թէ ամենակին եր  
կինք կամ դժոխք չկայ, և այնպէս կը խորհին,  
որպէս թէ միայն այս աշխարհքն է իրենց բնա  
կարանը ։ իրենց զաւկներն ալ այս գաղափարնե  
րուն համեմատ կը կը թեն ։

Զարմանալի բանմը չէ որ այսպիսի մարդոց զա  
ւակները իրենց ծնողքը կը սիրեն և անոնց կը հնա  
զանդին, քանզի անոնք տղայոց բնութեանը հա

ճելի բաներ կը հրամայեն : Սակայն այսպիսի զաւակաց սէրը և հնազանդութիւնը հաստատուն չըլլար : Երբ ծնողք անոնց անհաճոյ բան մը կը պատուիրեն , անոնք չեն ուզեր հնազանդիլ , սէրն ալ շատ անդամ կը դադրի :

Յովսէփ իր հայրը կը սիրէր և անոր կը հնազանդէր , քանզի գիտէր թէ այսպէս ընելն Աստուծոյ հաճելի է , ըսել է թէ անոր սէրը և հնազանդութեան հոգին Աստուծոյ վրայ ունեցած հաւատքէն յառաջ կուգար :

**ԱնշուշտՅակոբ՝** Յովսեփայ տղայութեան ատենը , անոր սորվեցուցած էր հայրը մայրը սիրել և անոնց բոլոր հրամայածը կատարել , իրբեւ առ Աստուած պարտաւորութիւն մը : Հիմա ալ ծնողք պարտին իրենց զաւակները նոյնպէս կրթելու . և այս կերպով կրթուած տղայք Յովսեփայ պէս իրենց ծնողաց բարեպաշտութիւնը ճանչնալով զանոնք պիտի սիրեն , և միշտ , թէ ծնողաց ներկայութեանը և թէ անոնց բացակայութեանը , թէ տղայութեան ատենը և թէ մեծնալէն ետքն , անոնց հրամանները յիշելով պիտի կատարեն , նաեւ երբ ծնողք ծերանալով միսիթարութեան և հոգատարութեան կարօտ կըլլան , այս տղայք շատ հոգ և ջանք պիտի ընեն զանոնք հանդիսաւ և երջանիկ ընելու : Ասոնք կարդացող տղայք ի՞նչպէս կը վարուին իրենց ծնողաց հետ , զանոնք ճշմարիտ և մշտատեւ սիրով կը սիրե՞ն և անոնց կը հնազանդի՞ն իրբեւ առ Աստուած պարտականութիւն մը : Տըղայք դուք պարտիք ձեր ծնողները սիրելու ոչ միայն անոնց ձեզի շատ տարիներէ ՚ի վեր ըրած հոգատարութեան և ցցուցած համբերութեան և սիրոյն համար , այլև ասոր համար որ Աստուած ասիկա ձենէ կը պահանջէ : Ուստի եթէ Աստու-

ծոյ վրայ հաւատք ունենալով զձեզ անոր պատասխանատու կը համարիք, անոր պատուիրանքին համեմատ սիրով հնազանդելու էք ձեր ծնողաց, թէ մեծ բաներու և թէ պղտիկ բաներու մէջ, թէ բերկրութեան ու զուարճութեան ատեններ, թէ վշտի և նեղութեան մէջ։ Եթէ որդիական սէրն ու հնազանդութիւնը յառաջ կուգայ Աստուծոյ վրայ հաւատք ունենալէն, ճշմարիտ և մշտատեւ պիտի ըլլայ։

**Յ**ովսէփ սէր և ամէն ուրիշ տեսակ գովելի զդացումներ ալ ունէր իր եղբայրներուն վրայ և անոնց հետ միշտ քաղցրութեամբ կը վարուէր։

**Ա**նոնք կը նախանձէին անոր, շատ անդամ ալ անոր գէշութիւն կընէին, սակայն ան իր սէրը չէր դադրեցներ։ **Ա**սիկա ալ անոր **Ա**ստուծոյ վրայ հաւատք ունենալուն զարմանալի պտուղ մըն էր։ **Ա**նոր եղբայրներուն բնութիւնը հաճելի չէր անոր, թերեւս անոնց հետ ընկեր ըլլալ անոր շատ տհաճոյ էր, սակայն գիտնալով թէ իր եղբայրներուն հետ սիրով վարուիլ **Ա**ստուծոյ կամքն է, ջանք կընէր այսպէս ընել, մանաւանդ երբ անոնք վշտի մէջ ինկան և սովի պատճառաւ շատ նեղութիւն կը կրէին, անիկա անոնց բոլոր դառն խօսքերուն և թշնամական վարմանցը ներողամիտ ըլլալով, մեծ և զարմանալի սէր կը ցուցընէր անոնց։ **Յ**ովսէփայ եղբայրսիրութեան ինչպէս ալ իր հօրը ցցուցած սիրոյն և հնազանդութեան հիմն **Ա**ստուծոյ վրայ անոր ունեցած սէրն էր։ զ**Ա**ստուած սիրող տղաք նմանապէս, թէ իրենց եղբայրները և քոյրերը, թէ բոլոր ընկերները պիտի սիրեն, և ամենուն հետ քաղցր պիտի ըլլան, գթած, ներելով ամենուն յանցանքները ինչպէս որ **Ա**ստուած իրենցը կը ներէ Փրիստոսով։

Ուրեմն ընկերութիւնն ու բարեսիրութիւնն  
ալ Աստուծոյ վրայ կատարեալ հաւատք ունե-  
նալուն մէկ սքանչելի պտուղն է :

Եթէ դուք ձեր ընկերն անկեղծութեամբ կը սի-  
րէք և անոնց թէ այս և թէ հանդերձեալ աշխար-  
հին մէջ երջանիկ ըլլալուն համար կը ջանաք,  
նշան է թէ Աստուծոյ վրայ սէր և հաւատք  
ունիք :

Հիմա քննեցէք դուք զձեզ և տեսէք, սիրելի  
տղաք, այս նկատմամբ ալ կը նմանի՞ք Յովսեփիայ :  
Զեր եղբայրներուն, քոյրերուն և ընկերներուն  
ու ծանօթներուն համար բարեսիրական զգացում-  
ներ ունի՞ք, ինչպէս որ անիկայ ունէր :

Զեր բոլոր զօրութեամբը կը ջանա՞ք մարդոց  
բարիք ընել, և անոնց հոգիներուն փրկութեանը  
համար կ'աշխատի՞ք :

Զանոնք քաղցրութեամբ կը խրատէ՞ք, երբ  
անոնց մէկ անբարի գործը կը տեսնէք : Կը ջա-  
նա՞ք անոնց բարի օրինակ ըլլալ բանիւք և ար-  
դեամբք . և աղօթք կ'ընէ՞ք որ կարող ըլլաք  
այսպէս ընելու :

Ուրիշներուն համար աղօթք կ'ընէ՞ք որ Ա-  
ստուած իր Առւրբ Հոգին անոնց տայ և զանոնք  
Փրիստոսի հետևողներ ընէ :

Զեզ բարկացնողներուն կամ ձեզի նեղութիւն  
տուողներուն համբերութիւն և խոնարհութիւն  
կը ցուցընէ՞ք, թէ ընդհակառակն անոնց դէմ ոխ  
կը պահէք : Անոնց սրտանց կը ներէ՞ք, թէ կ'ու-  
զէք չարեաց փոխարէն չարիք հատուցանել : Կ'ա-  
ղաչէ՞ք Աստուծոյ որ անոնց շնորհք տայ ապաշ-  
խարելու և թողու անոնց յանցանքը, թէ բոլորո-  
վին անտարբեր էք այս մասին :

Եթէ ձեր զգացումներն ու վարմունքը մարդա-

սիրական չեն, նշան է թէ Աստուծոյ վրայ սէր և հաւատք չունիք, և ձեր բնաւորութիւնը բոլորովին տարբեր է Յովսեփայ բնաւորութենէն, նաև ուրիշ բոլոր սուրբ և բարեպաշտ մարդոց բնաւորութենէն, որոնց հետ Յովսէփ երջանիկ է հիսա երկինքը. և չէք կրնար յուսալ օր մը անոնց բնկերութեան մէջ մտնել, հոն յաւիտեանս զԱստուած վայելելու համար:

Այն աշխարհքը հնազանդներու, բարեսէրներու, գթածներու, խոնարհներու բնակարան է. հոն անհնազանդ, չարասէր, անգութ, վրէժիշնդիր և ամբարտաւան հոգիներու համար տեղ չկայ:

Հոն չեն կրնար մտնել անոնք որոնց մեղքերը Փրիստոսով թողուած չեն: Փրիստոս ինք ըստ թէ անոնք որ ուրիշներուն թողութիւն չեն տար, Աստուծմէ թողութիւն չեն կրնար յուսալ:

“Թէ որ մէկը ըսէ՝ թէ Ես Աստուած կը սիրեմ, ու իր եղբայրը ատէ, անիկայ ստախօս է. քանզի ան որ իր եղբայրը չսիրե՞ր՝ որ կը տեսնէ, զԱստուած որ չտեսներ, ինտո՞ր կրնայ սիրել” (Ա. Յովհ. դ. 20):

“Փու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սըրտովդ և քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ. աս է առաջին ու մեծ պատուիրանքը: Ու երկրորդը ասոր նման՝ քու ընկերդ սիրես քու անձիդ պէս” (Մատթ. իր. 37—39):

## ԳԼՈՒԽ ՀԵ

**Յ**ԱՆԴԻ ամէն գործէն մէջ հաւատարէն ըլլաւը . **Ա**ՄՈՒ օրէն անիները = **Հ**աւատարմութիւնն Ա ՄՈՒ ծոյ վրայ հաւատ + սանէն նալքն յաւազ կուտայ = **Կ**արդացողն այս հաւատարմութիւնն սանի՞ :

**Յ**ովսէփ Ա ՍՈՒ ծոյ վրայ զօրաւոր հաւատք ու նենալով կըզգար թէ անոր աչքը միշտ իրեն վրայ է : **Ա**յս զգացումը զանի ստիպեց հաւատարմութեամբ կատարել ամէն գործ որ մարդիկ ընել կուտային անոր :

Ինչ գործ կամ պաշտօն կամ վիճակ որ ունենար, ան գործին ան պաշտօնին և ան վիճակին մէջ անոր վարքն այս յատկութիւնը կը ցուցընէր : **Տ**ղայութեան ատենը **Յ**ովսէփ պարտականութիւն կը համարէր իր եղբարց գէշ վարքը հօրը իմացընել, և հաւատարմութեամբ այս պարտքը կատարեց : **Ե**րբ **Յ**ակոբ զանի Ա իւքէմ և **Պ**օթայիմ զրկեց եղբայրները տեսնելու, **Յ**ովսէփ հնազանդեցաւ, թէպէտ պատճառ ունէր անոնց վրէժխնդրութենէն վախնալու : **Պ**ետափրեսի գերի ծախուելով հաւատարիմ ծառայ եղաւ անոր, այնպէս որ **Պ**ետափրէսը զանիկա իր տանը վրայ վերակացու ըրաւ, և իր բոլոր ունեցածը անոր ձեռքը յանձնեց : **Բ**անտարկութեան մէջ ալ **Յ**ովսէփ նոյն յատկութիւնը ցուցընելով, բանտապանին հրամանները հաւատարմութեամբ կը կատարէր, այնպէս որ թէ բանտին և թէ բանտարկեալներուն կառավարութիւնն անոր յանձնուեցաւ :

**Բ**ոլոր այս բաներն անոր ազնիւ բնաւորութեան տէր ըլլաւը կը ցուցընէին, և զանի բարձր պաշտօններ ունենալու կը պատրաստէին :

**Տեսաք թէ Փարաւոն զՅովսէփի իրը թէ իրեն աթոռակից և Եղիպտոսի կառավար ըրաւ, և թէ ինչ հաւատարմութեամբ Յովսէփի իր պաշտօնը կը կատարէր այսպիսի ծանր և գժուարին պարագաներու մէջ, և թէ ինչ գոհացուցիչ կերպով թագաւորին ուղածները յառաջ կը տանէր Եղիպտացւոց օդտին համար :**

**Արդարեւ Յովսէփի Աստուծումէ օդնութիւնիրն դրելով այսպէս հաւատարիմ եղաւ :** **Գիտէր թէ Աստուած կուտայ ամէն բարի խորհուրդ և զգացում և թէ, ինք անոր իմաստութեանը և շնորհքին կարօտ է ինչ վիճակի կամ ինչ պաշտօնի մէջ որ ըլլար :** **Նաև միշտ ինքզինքը Աստուծոյ պատասխանատու համարելով առաւել ջանք կընէր ամէն գործ հաւատարմութեամբ կատարել, որպէս զի ոչ միայն զմարդիկ այլ մանաւանդ զԱստուած հաճեցընէ :** **զԱստուած սիրող և զանիկա հաճեցընել ուզող մարդիկ այս բանիս մէջ Յովսէփայ կը նմանին :** **Ինչպէս որ Աստուծոյ վերաբերեալ պաշտօնները սիրով և հաւատարմութեամբ կը կատարեն, անանկ ալ բոլոր իրենց ընկերներուն վերաբերեալ պարտականութիւնները հաւատարմութեամբ կը կատարեն, թէ որ ծառայ են, հաւատարիմ հնազանդութիւն կ'ընեն իրենց մարմնաւոր տէրերուն, չէ թէ աչքի առջև ծառայելով մարդահաճոններու պէս, հապա սրտի միամտութեամբ, Տէրոջմէ վախնալով, ինչ որ կընեն սրտանց կընեն որպէս թէ Տէրոջը ու չէ թէ մարդոց :** **Թէ որ պաշտօնեայ են, իրենց պաշտօնին վերաբերեալ գործը կը կատարեն հաւատարմութեամբ, գիտնալով թէ Աստուծոյ աչքը ամենուն վրայ է՝ և թէ անոր քովը աչառութիւն չկայ :**

**զԱստուած հաճեցընել ուզող և անոր կամքը դի-**

տելով, իբրև անոր պատասխանատու, իր գործերը հաւատարմութեամբ կատարողին մէկ յատկութիւնն ալ սա է, որ անիկայ պաշտօնին որպիսութիւնը և ժամանակին պարագան չի խարեր։ Պատիկ պաշտօնի մէջ այնպէս հաւատարիմ է, ինչպէս մեծին մէջ. այնպէս յաջողութեան՝ ինչպէս ձախորդութեան մէջ. այնպէս անիրաւութիւն և ապերախտութիւն տեսած, ինչպէս վարձատրութիւն և շնորհակալութիւն ընդունած ատենը։

**Այսպիսի էր Յովսեփայ հաւատարմութիւնը։**

Չեր հաւատարմութիւնն ալ այսպէ՞ս է ձեր ծնողացը, վարժապետներուն և բոլոր անոնց որոնցմէկախում ունիք, կամ որոնց մէկ գործին կամ պաշտօնին մէջ էք։

Եթէ ձեզի յանձնուած գործերուն մէջ այսպէս միօրինակ և անկեղծ հաւատարմութիւն չէք ցուցըներ, ձեր մեծերը, ձեր ընկերները, ձենէ ստորին և նոյն իսկ ձեր ծառայութեանը մէջ գտնուող մարդիկ շատ քիչ համարում և վստահութիւն պիտի ունենան ձեր վրայ։

Շատ քիչեր պիտի ուզեն ձեզի գործ մը կամ պաշտօն մը յանձնել, և կամ ձեզի օգնել. ուստի և գուք չկրնալով բանի մը ձեռնարկել, թերեւս շատ թշուառ և կարօտ պիտի ըլլաք։

Եւ որ չարագոյնն է՝ ձեր խիղճը ձեզ պիտի դատապարտէ, քանզի նոյն իսկ ձեր միտքը պիտի վկայէ թէ արժանի չէք որ ուրիշները ձեզի հաւատարմութիւն ընեն, այլ թէ ընդհակառակն շատ իրաւացի է որ ոչ միայն մարդոց, այլ և **Աստուծոյ երեսէն ինկած մնաք**։

**Ապա**, սիրելի տղաք, աղօթք ըրէք և ջանացէք որ անհաւատարմութեան գէշ յանցանքէն ազատ մնաք։ Եւ ասոր համար խնդրեցէք **Սուրբ**

Հոգին որ ձեր հաւատքը զօրացընէ , այնպէս որ  
միշտ խորին զգացում մը ունենաք Աստուծոյ ամե-  
նատես ներկայութեանը , որ մեր ամէն կեղծ և  
խարդախ խորհուրդները և գործերը գիտէ , և  
անոնց ամենուն համար հաշիւ պիտի պահանջէ  
մենէ :

---

## ԳԼՈՒԽ ԼԸ

Յաշետայ արունենը ժողովունեան դէմ դնելու : Այս արո-  
նեն ալ Աստուծոյ վրայ հաստատ + սանենալն յառաջ կու դայ ,  
Ենէ ասոն + կարդացողին ալ այնպէսէ ժողովունենէր պատահին ,  
է՞նպէս պէտի յաղնէ անոնց : Յաշետայ յոյս սանենալն Ա-  
րուծոյ վրայ , և անոր կամացը հնազանդէլը : Ասոն + ալ Ա-  
րուծոյ վրայ ճշմարիտ հաստատ + սանենալն յառաջ կու դան :  
Կարդացողն ալ այս յոյսը և հնազանդունենն սանի՞ :

Յովսեփայ պատմութեանը մէջ արդէն տեսանք  
որ անիկայ մեծ մեղք մը գործելու սաստիկ փոր-  
ձութեան մը դէմ դրաւ , Աստուծոյ վրայ ունեցած  
հաւատքին զօրութեամբը :

Անտարակոյս ասոնց նման փորձութիւններ շատ  
պատահեցան Յովսեփայ : Անիկայ չար և կռա-  
պաշտ մարդոց մէջ բնակելով , և իր կենացը մեծ  
մասը թագաւորներու և հարուստներու հետ ան-  
ցընելով , հաւանական է թէ շատ առիթներ կ'ու-  
նենար Աստուծոյ պատուիրանացը դէմ գործելու :

Բայց անոր առ Աստուծած ունեցած հաւատքին  
զօրութիւնը գիտնալով , պատճառ ունինք հաւա-  
տալու թէ անիկայ ամենսեին տեղի չէր տար փոր-

Ճութեան և հրապուրանաց Աստուծոյ կամացը և հրամաններուն դէմ բան մը ընելու :

Բայց մեծամեծները և հարուստները միայն չեն որ մեղք գործելու կը փորձուին կամ կը հրապուրուին . փորձութիւն ամէն վիճակի , աստիճանի և հասակի մարդոց կը պատահի :

Չեզի ալ , սիրելի տղաք , կրնան փորձութիւններ պատահիլ : Չորօրինակ , ձեր ընկերներէն ոմանք կրնան ձեզ հրաւիրել այնպիսի տեղեր երթալու , այնպիսի բաներ ըսելու կամ ընելու , որոնք ձեզի հաճոյ և հեշտալի կը թուին , բայց մեղանչական են , քանզի Աստուծոյ պատուիրանացը հակառակ են , և առիթ կ'ըլլան ձեզ ձեր պարտականութիւնները մոռնալու կամ զանց ընելու :

Հիմա , սիրելի տղաք , եթէ այսպիսի պարագաներու մէջ գտնուած էք , խորհեցէք թէ ի՞նչպէս վարուեցաք . ձեր հաճոյիցը կամ ուրիշներուն հրապուրանացն անսալով տեղի<sup>ո</sup> տուիք այն փորձութիւններուն , թէ Յովսեփայ պէս դէմ դրիք անոնց , այսինքն՝ աւելի ընտրեցիք Աստուծոյ հնազանդիլ քան ձեր հաճոյիցը և մարդոց պահանջումներուն :

Գիտցէք , սիրելի տղաք , որ որչափ տեղի կուտաք փորձութեան , այնչափ կը տկարանայ ձեր զօրութիւնն անոնց դէմ դնելու . ընդհակառակն , որչափ դէմ կը դնէք անոնց , այնչափ կը զօրանաք բարոյապէս , և դիւրին կ'ըլլայ ձեզի անոնց յաղթել :

Անտարակոյս կը փափաքիք որ դուք ալ Յովսեփայ պէս արի ըլլաք փորձութեանց յաղթելու :

Բայց անոր այս արութիւնն ուստի<sup>ո</sup> էր . ոչ ապաքէն Աստուծոյ վրայ ճշմարիտ հաւատք ունենալէն :

Ուրեմն ջանացէք նախ որ այս սքանչելի հաւատքը կատարելապէս ունենաք : Այս հաւատքն

ունեցողը ստուգիւ դիտէ թէ Աստուած իրեն  
ներկայ է, և այնպէս ներկայ՝ որ ոչ միայն իր ըրած  
ները, հապա մտքին մէջ եղած խորհուրդները և  
սրտին փափաքներն ալ կը տեսնէ և կը քննէ։

Աստուծոյ վրայ կատարեալ հաւատք ունեցողը  
կը հաւատայ նաև որ Աստուած իր պատուիրան  
ներուն դէմ եղած անարգութիւնն իրեն դէմ եղա  
ծի պէս կը համարի։ Երբ Յովսէփ այն մեղքը  
գործելու հրաւիրուեցաւ, ըստ, Ես ի՞նչպէս այս  
մեծ մեղքը, այս չարութիւնը գործեմ Աստուծոյ  
դէմ։ Դուք ալ այսպէս ընելու էք, երբ փորձու  
թեան կը հանդիպիք։

Եթէ այս հաւատքը չունենաք, այս չար և  
նենգաւոր աշխարհիս մէջ միշտ վտանգներու են  
թակայ պիտի ըլլաք։ Այս վտանգները թերևս  
ձեզի այս աշխարհիս մէջ չարիք կամ դժբախտու  
թիւն չերևան, բայց հանդերձելոյն համար ան  
շուշտ կործանում և յաւիտենական թշուառութեան  
առիթներ են։

Ուրեմն Քրիստոսի գացէք, անոր ապաւինե  
ցէք, անոր անուամբն աղաչեցէք որ Աստուած  
ձեզի վերէն զօրութիւն զրկէ որպէս զի կարող  
ըլլաք ձեր հոգիներուն թշնամի եղող թելադրու  
թեանց յաղթել։

Առանց երկնաւոր զօրութեան ետևէ ետև պի  
տի յաղթուիք փորձութիւններէ, մինչև որ կա  
տարեալ գերի ըլլաք մեղաց։

Յովսէփայ Աստուծոյ վրայ ճշմարիտ հաւատք  
ունենալին ուրիշ արդիւնք մ'ալ յառաջ եկած  
էր անոր բնաւորութեանը մէջ. այսինքն՝ Աստու  
ծոյ վրայ բացարձակ յոյս, վստահութիւն և ապա  
վինութիւն։

Անիկայ դիտէր որ ամէն բան անոր կամքէն և

ինամքէն կախում ունի, ուստի և միշտ և ամէն բանի մէջ անոր սիրութ հանդարտ էր, քանզի վրատահ էր որ առանց Աստուծոյ գիտութեանը, առանց անոր որոշմանը և թոյլտութեանը բան մը չէր կրնար պատահիլ իրեն :

Այս վստահութենէն յառաջ կու դար նաև կատարեալ հնազանդութիւն Աստուծոյ նախախնամական կարգադրութիւններուն : Յովսէփ կը հաւատար թէ ինչ որ Աստուած կ'ընէր՝ ճշմարիտ, բարի և օգտակար էր . այս պատճառաւ կը տեսնենք որ Յովսէփ համբերող և անտրտունջ հոդի ունէր, երբ վշտի և թշուառութեան մէջ կ'իյնար :

Դուք ալ Աստուծոյ վրայ այսպէս յոյս և ապաւինութիւն, և անոր կամացը հնազանդութիւն ունիք : Ո՞հ, ո՞րչափ հակամէտ էք դուք ձեր զօրութեանն ապաւինելու, և ամէն բան ձեր կամացը համեմատ ընելու : Ո՞րչափ անդամ անլսող և անհաւան դժնուած էք ձեր ծնողացը խորհուրդներուն, աւելի ձեր խելքին և խմաստութեանը վրատահելով քան թէ անոնց բարեպաշտ դիտողութիւններուն :

Ո՞րչափ անդամ ձեր ծնողացը և կամ բուն ձեր վիճակին դէմ դժգոհութիւն և տրտունջ յայտնած էք, փոխանակ Յովսէփայ պէս ամէն դիպուած համբերութեամբ և հնազանդութեամբ Աստուծոյ ձեռքէն ընդունելու, իբրև ձեր հոդեոր և յաւիտենական վիճակին օգտակար :

Բոլոր այս ըսածներս ո՞չ ապաքէն շատ անդամ պատահած են ձեզի, և ասոնցմէ ո՞չ ապաքէն յայտնի կը տեսնուի որ դուք շատ կարօտ էք Աստուծոյ առջև խոնարհելով ապաշխարելու, և, ինչպէս ձեր ուրիշ մեղքերուն, նոյնպէս ասոնց համար Տէր Յիսուս Քրիստոսին ապաւինելու, որ

պէս զի կատարեալ թողութիւն ընդունիք Աստուծմէ : Պարտիք ջերմեռանդ սրտիւ աղօթել նաև Հոգւոյն Սրբոյ համար , որ անիկայ իր շնորհքովը ձեր սրտերը դալով լուսաւորէ և նորոգէ ձեզ որպէս զի կարող ըլլաք ճանչնալ փորձութեանց դէմ դնելու մասին ձեր տկարութիւնը և Աստուծոյ ապաւինելու մեծ կարօտութիւնը : Անատեն պիտի ըլլաք Յովսեփայ պէս լի հաւատով , յուսով և ապաւինութեամբ առ Աստուծած , այսինքն՝ կատարեալ երկիւղած և աստուածասէր Քրիստոնեաներ :

---

## ԳԼՈՒԽ ԼԹ

Յովետայ խոնարհութիւնը ։ Բարէ մարդոց խոնարհութիւնը յաւաղ կու գայ Աստուծոյ վրայ հաւատու աւելնալքն ։ Կարդացողը խոնարհութիւն աւելի՞ ։ Աւանց առոք Քրիստոնէ հետ հաղորդութիւն աւելնալ անհնար է ։

Խոնարհութիւնն ալ Յովսեփայ բնաւորութեանը երևելի մէկ յատկութիւնն էր : Այս յատկութիւնը թերեւս ձեզի շատ կարեւոր չթուի , բայց շատ գովելի և օդտակար առաքինութիւն մըն է :

Յովսեփայ վրայ այս առաքինութիւնը շատ էր , և անոր Աստուծոյ վրայ հաւատք ունենալէն յառաջ կու գար :

Որչափ զարմանալի է Յովսեփայ բնաւորութեան մէջ այս յատկութիւնը : Եթէ անոր սրտին մէջ հպարտութեան և մեծամտութեան հակամիտութիւն մը ըլլար , ո՞րչափ առիթներ ունէր հպար-

տանալու և փառաւորուելու : Բայց անիկայ գիտնալով որ ինք թշուառ և մեղանչական արարած մըն էր, և ինչ բարի բան որ ունէր՝ Աստուծոյ շնորհքն էր, միշտ ինքզինք խոնարհեցընելով ամէն փառք Աստուծոյ կ'ընծայէր, խոստովանելով ամենուն թէ իր վրայ տեսնուած փառաւոր բաներուն տէրն ու աղբիւրն Աստուած է, ինք ուրիշ բան չէր բայց գործիք մը կամ միջոց անոր ձեռքը :

Բայց Յովսէփ իմաստութեամբ կը խոնարհէր Աստուծոյ առջև, և կը վախնար Աստուծոյ պատիւն ու փառքն իրեն սեպհականել, քանզի եթէ հպարտութեամբ և պարծանօք ինքզինք փառաւորէր կամ մտքէն անդամ ամբարտաւանութեան և պարծենկոտութեան խորհուրդ մը անցընէր, անտարակոյս անհաճոյ պիտի ըլլար Աստուծոյ, և մեծ գործ մը կատարելու անարժան, քանզի Աստուած անկէ իր շնորհքն ու զօրութիւնը պիտի վերցընէր :

Գիտցէք, սիրելի տղաք, որ, ինչպէս Յակոբոս Առաքեալ կ'ըսէ, «Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ” :

Այսպէս եղաւ նաև Յովսեփայ . որչափ անիկայ կը խոնարհէր և ինքզինք ոչընչի տեղ կը դնէր, այնչափ Աստուած անիկայ շնորհքներով կը լեցընէր և կը բարձրացընէր :

Անոր Պետափրեսի տանը և ապա բանտին մէջ այնչափ սիրելի ըլլալն ու իր տէրերուն վստահութիւնը վաստկիլը կը ցուցընէ թէ անիկայ խոնարհէր : Եթէ Յովսէփ հպարտ, ամբարտաւան, ինքնահաւան և գոռող ըլլար, ի՞նչպէս կընար այնպէս հաճոյ ըլլալ ամենուն :

Ամբարտաւանները մարդոց առջևն ալ ատելի

և արհամարհելի են : Հպարտ և ինքնահաւան մարդու հետ ոչ ոք կ'ուզէ յարաբերութիւն մը կամ գործ մը ունենալ, և եթէ ունենալու ըլլայ, շուտով կը զզուի, և կանուխ կամ ուշ կը ջանայ ետ կենալ անոր ընկերութենէն : Այսպէս ամբարտաւանութեան վերջը կործանում և թշուառութիւնէ :

**Յովսէփ**, ինչպէս անոր վարքին մէջ տեսանք, իր խոնարհութիւնը երկու առթի մէջ շատ յայտնի և սքանչելի կերպով ցուցուց :

**Նախ՝ երբ Փարաւոնին առջեր կանչուեցաւ** անոր երազները մեկնելու, ամենենին չպարծեցաւ թէ այնպիսի զարմանալի կարողութիւն ունէր : **Երբ Փարաւոն անոր ըստ**, **Քեզի համար լսեցի** որ կ'ըսեն թէ լսած երազդ կը մեկնես, **Յովսէփ** պատասխան տուաւ, **Ոչ թէ ես, Աստուած պիտի տայ խաղաղութեան պատասխան Փարաւոնին :**

**Երկրորդ՝ երբ Յովսեփայ եղբայրներն իրենց հօրը մեռնելէն ետքը Յովսեփայ վրէժինդրութենէն վախնալով**, **Ահա մենք քու ծառաներդ ենք**, ըսելով, եկան անոր առջեն ինկան, **Յովսէփ** անոնց պատասխան տուաւ թէ **Մի վախնաք**, միթէ ես **Աստուածոյ տեղն եմ :**

**Բոլոր խոնարհ և բարի մարդոց քնաւորութիւնն այսպէս է**, թէև անոնց հարստութիւնը և կրթութեան կերպը՝ տարբեր ըլլան :

**Անոնք Յովսեփայ պէս գիտեն թէ տգէտ են**, թէև ուրիշները զանոնք իմաստուն կարծեն . գիտեն նաև իրենց մեղանչական և յանցաւոր ըլլալը, թէև ուրիշներէ սիրուին և յարգուին :

**Անոնց Աստուածոյ վրայ ունեցած հաւատքը** կ'առաջնորդէ զանոնք նայիլ այն **Եակին որ բոլորովին սրբութիւն և մաքրութիւն է**, և իրենց անձերը խոնարհեցընել անոր առջեր :

Անոնք երբ իրենց ընկերներուն նայելով կը  
տեսնեն այնպիսի մէկը որ զԱստուած չի սիրեր և  
անոր ծառայութիւն չըներ՝ կը սկսին իրենց մոռքին  
մէջ ըսել, Ո՞վ է որ զմեզ անոնցմէ կը տարբերէ ։  
Գիտեն թէ իրենք բնականաբար ուրիշներէն  
աղէկ չեն, և եթէ կայ տարբերութիւն մը, ասիկա  
Աստուծոյ շնորհաց արդիւնքն է։

Նաև երբ իրենց ընկերներուն հետ կը կենցա-  
ղավարին, հեզ և հանդարտ հոգի մը կը ցուցը-  
նեն յուշ ածելով թէ խոնարհութիւնը պատուէ  
առաջ է, և թէ երանի աղքատներուն, քանզի  
անոնցն է երկնից արքայութիւնը։

Դուք ալ, սիրելի տղաք, այն հոգւով աղքատ-  
ներուն կարդէ՞ն էք. Դուք ալ ձեզ Աստուծոյ  
առջեւ ճշմարտապէս կը խոնարհեցընէ՞ք ձեր անար-  
ժանութեանը համար։ Կը խոստովանի՞ք որ անոր  
առջեւ յաճախ մեղք դործած էք, և զանի ըստ ար-  
ժանւոյն սիրած և պաշտած չէք, և կ'ամչնա՞ք ու  
կը զղջա՞ք ասոր համար։

Զեր ընկերներուն և ծանօթներուն հետ, ընդ-  
հանրապէս բոլոր մարդոց հետ, ի՞նչպէս կը վա-  
րուիք։ Զանոնք կ'արհամարհէ՞ք, կը նախատէ՞ք  
կամ անոնց վրայ անհոգ և անտարբե՞ր էք։

Զեր մէկ մարմնաւոր կամ մտաւոր յատկութեա-  
նը, ձեր ազնուականութեանը, հարստութեանը,  
հանդերձին և կամ ուրիշ որևէիցէ բանի մը համար  
կը հպարտանա՞ք և կը պարծի՞ք։

Այս հարցումները կ'ընեմ ձեզի, որպէս զի ձեր  
անցեալ կենացը վրայ նայիք, և այս ըսածներուս  
վրայ աղէկ խորհելով տեսնէք թէ ճշմարիտ խո-  
նարհութեան հոգի ունեցած էք ցարդ։ Առանց  
խոնարհութեան Յիսուս Քրիստոսի հետ հաղոր-  
դութիւն չէք կրնար ունենալ, ոչ ալ կրնաք անոր

փրկութեանը մասնակից ըլլալ. քանզի Քրիստոս  
Տէրն մեր սրտով խոնարհ և հեղ էր, և կ'ուզէ  
որ բոլոր իրեն հետևողները սորվին իրմէ այս խո-  
նարհութիւնը:

Եթէ Քրիստոս իր անձը չխոնարհեցընէր, չու-  
զէր իր երկնային փառքը թողուլ, և նախատանաց  
ու խաչին մահուանը համբերելով մեզի պէս մե-  
զաւորներու համար մեռնիլ յանձն չառնէր, մեր  
վիճակն ի՞նչ պիտի ըլլար:

Մենք մեր մեղքերուն մէջ մեռնելով յաւիտեան  
պիտի կորսուէինք, և դժոխքը պիտի ըլլար մեր  
բաժինը:

Ապա ո՞րչափ ևս առաւել մենք պարտինք խո-  
նարհիլ. մենք, կ'ըսեմ, որ թշուառ և անարդ  
մեղաւորներ ենք, և կարօտութիւն ունինք զմեղ  
միշտ խոնարհութեան մէջ պահելու:

Խորհեցէք, սիրելի տղաք, թէ ինչ էք կամ  
ինչ ունիք հպարտանալու, ուստի միշտ խոնարհ  
և հեղ ըլլալու ջանացէք:

## ԳԼՈՒԽ Խ

Յաշեմայ, բարեսիրուին և Ասիհայ աւ Աստուծոյ վրայ  
հասացաւ ունենալուն արդիւնքն է: Կարդացողը շատ կերպով  
առէնուին իրայ, ընելու բայց գոյաւ ունէ՝ ընելու: Ու ու  
բարեսիրուին նայ՝ հոն շատ մեղք և զետե կայ:

Հաւատքը սիրով կը յաջողի, այսինքն՝ Աստու-  
ծոյ վրայ ճշմարիտ հաւատք ունենալը մարդուն  
սրտին մէջ փափաք մը յառաջ կը բերէ ուրիշնե-

րուն աղէկութիւն ընելու, և այնպիսւոյն խօսքն  
ու գործն այն փափաքին համեմատ կ'ըլլայ:

**Ա**յսպիսի էր Յովսեփայ հաւատքը: **Ա**նոր սըր-  
տին մէջ իր ընկերներուն համար բարեսիրական  
ոդին, և անոնց բարիք ընելու ջերմ փափաք մը  
կը տիրէր:

**Մ**ենք չենք տեսներ որ Յովսէփի իր օդուտը,  
իր փառքը միայն աւելցընել կը խորհէր, և այս  
նպատակաւ միայն կ'աշխատէր: **Ա**նոր կենացը մէջ  
մեծութիւն, իշխանութիւն, փառք և հարստու-  
թիւն **Ա**ստուծոյ նախախնամութեամբը միայն եկան  
անոր, ոչ թէ անոր յատուկ ջանքովը: Թագաւորն  
ու բոլոր ժղովուրդը զանի կը սիրէին և կը պա-  
տուէին անոր այս ազնիւ և բարեսէր բնաւորու-  
թեանը համար:

Յովսեփայ բարերարութեանցը իրը փոխարէն  
Փարաւոն և անոր ժողովուրդն այնչափ մեծ ըն-  
դունելութիւն և սէր ցուցուցին Յովսեփայ հօրը և  
եղբայրներուն. երբ անոնք Եղիպտոս եկան, անոնց  
Եղիպտոսի ամենէն բարեբեր երկիրը տրուեցաւ.  
և երբ Յակոբ մեռաւ, բոլոր ազգը մեծամեծնե-  
րով և պաշտօնեաներով այն մեծ սուզն ու փա-  
ռաւոր յուղարկաւորութեան հանդէսն ըրին:

**Ա**սկէ կրնաք տեսնել, սիրելի տղաք, որ Յով-  
սէփ Եղիպտացւոց ամենէն մեծ բարերարն էր, և  
անիկայ չէր կրնար այսպէս ըլլալ և այնչափ պատիւ  
և յարգանք վայելել, եթէ բարեսիրտ բնաւորու-  
թիւն մը չունենար դէպ առ ամենայն մարդիկ:

Բարեսիրութիւնը կամուրիչներուն բարիք ընե-  
լու փափաքն ու ջանքը ձեր ալ պարտաւորու-  
թիւնն է. և եթէ **Ա**ստուծոյ վրայ ճշմարիտ հա-  
ւատք ունիք, պէտք է որ այն փափաքն ու ջանքն  
ունենաք:

**Զկա՞ն ձեր գրացիներուն մէջ աղքատ և կարօտ մարդիկ։ Կընաք ձեր ծնողաց կամ բարեկամներուն աղաչել որ անոնց քիչ մը ստակ կամ ուրիշ բան տան, և դուք անձամք անոնց կընաք տանիլ։ և այս կերպով ձեր մանկութեան հասակէն կը սովորիք չքաւորներուն և թշուառներուն օդնութեան հասնելու։**

**Եւ եթէ բաւական մեծ էք և քիչ շատ ստակ կը վաստկիք, չէք կընար ձեր վաստակէն մաս մը հանել աղքատաց և կարօտելոց։**

**Այսպիսի փափաք և ջանք ունիք. եթէ ունիք, շատ ուրախ եմ, և աղօթք կ'ընեմ որ բարեսիրական ոգին ձեր սրտին մէջ աճի, և բարիք ընելը ձեր բնաւորութեան գլխաւոր մէկ յատկութիւնն ըլլայ։**

**Այս ունակութիւնը ձեզ երկնից բնակիչներուն կը նմանցընէ, և ձեզ կը պատրաստէ անոնց հետ յաւիտեան սուրբ և երջանիկ ըլլալու։**

**Իսկ եթէ ուրիշներուն բարիք ընելու, անոնց միսիթարութեան և երջանկութեան պատճառ ըլլալու փափաք և ջանք չունիք, նշան է թէ դուք Աստուծոյ կատարեալ հաւատք չունիք, և անիկայ չէք սիրեր։ Քանզի ինչպէս որ աղէկ ծառ մը աղէկ պտուղ կը բերէ, յստակ աղբիւրէ վազած ջուրն ալ մաքուր է, նոյնպէս հաւատացեալ սրտի մը տուած պտուղը, և զԱստուած սիրողին զգացումներէն բղխածը բարեսիրութիւն և ողորմածութիւն է։**

**Բայց մանաւանդ, սիրելի տղաք, կը բաղձա՞ք և կ'աշխատի՞ք ձեր բոլոր զօրութեամբը որ ուրիշները հոգւով երջանիկ ընէք՝ զանոնք Փրկիստոսով փրկութեան առաջնորդելով։**

**Եթէ այս բաղձանքը չունիք, ո՞հ, շատ իրաւամբ**

կրնամ տարակուսիլ ձեր բարեպաշտութեանը և  
ձեր յաւիտենական վիճակին նկատմամբ :

**Ա**ստուած սէր է և կատարեալ բարերար . բա-  
րիք կը սիրէ և միշտ բարերարութեամբ և օրհ-  
նութեամբ կը լեցընէ իր արարածները :

**Յ**իսուս Քրիստոս ալ մարդկային ազգին ամե-  
նամեծ բարերարն է : Խորհեցէք անոր ըրածներն  
ու կրածները մարդիկ յաւիտենական կորստենէ  
ազատելով անվախճան երանութեան հասցընելու  
համար :

**Դ**ուք ալ, սիրելի տղաք, անոր ամենօրհնեալ  
օրինակին նմանեցէք, եթէ կ'ուզէք անոր ձեզի  
համար ըրածներուն երախտագէտ ըլլալ :

**Ե**րկնից բոլոր սուրբերն ալ երբ այս աշխարհիս  
վրայ էին, բարեսէր և բարերար եղան առ ամե-  
նայն մարդիկ, իրենց Փրկչին և Վարդապետին  
նմանելով, և հիմա ալ երկինքը նոյն փափաքն  
ունին . անոնք մարդոց երջանկութիւնը և փրկու-  
թիւնը կ'ուզեն :

**Զ**եր զգացումներն ալ այսպէ՞ս են . ուրիշները  
բարի և երջանիկ ընել կ'ուզէ՞ք և կը ջանա՞ք :

**Ե**թէ մինակ ձեր օգուտը կը փնտռէք, եթէ  
կ'ուզէք որ ուրիշները ձեզի ձեռնտու ըլլան, իսկ  
դուք անոնց համար անհոգ էք, ասիկայ ո՞չ ապա-  
քէն նշան է որ դուք անձնասէր և մեղաւոր էք :

**Ա**ստուած ի՞նչպէս կրնայ առանց տհաճութեան  
նայիլ ձեր վրայ . ի՞նչպէս կրնայ ձեզ երկինք ըն-  
դունել, մինչև որ մեծ փոփոխութիւն մը չըլլայ  
ձեր զգացումներուն և վարքին մէջ :

**Դ**ուք այս փոփոխութեան շատ կարօտ էք . որ-  
պէս զի փոխանակ անձնասէր և շահասէր ըլլալու,  
ըլլաք ճշմարիտ աստուածասէր և ընկերասէր :

**Բ**այց այս փոփոխութիւնը չի կրնար տեղի ու-

նենալ, և դուք երբէք չէք կրնար ձեր այն չար  
զգացումներէն բժշկուիլ, մինչև որ սա երկու բանը  
լընէք, այսինքն՝ ձեր անձնասիրութեանը վրայ  
զղջալ, և **Տէր Յիսուս Քրիստոսի դիմել որ ձեզ**  
**բոլոր ձեր մեղքերէն ազատէ :**

**Այս** է բարեպաշտութեան սկիզբը։ **Հիմա պի-**  
**տի սկսի՞ք ձեր մեղանչականութիւնը խոնարհու-**  
**թեամբ Աստուծոյ խոստովանիլ, փրկութեան հա-**  
**մար Քրիստոսի ապաւինիլ և Հոգւոյն Արբոյ հա-**  
**մար աղօթք ընել որ ձեր հոգւոյն վրայ թափուի,**  
**և այնպէս մեծ փոփխութիւն մը ըլլայ ձեր**  
**սրտերուն մէջ, այնպէս որ մեղանչականութենէ**  
**սրբութեան փոխուին ձեր զգացումները։ և անա-**  
**տեն անձնասիրութեան տեղ պիտի գայ սէր առ-**  
**Աստուած և առ փրկիչն Յիսուս Քրիստոս, զօ-**  
**րաւոր փափաք և գործունեայ ջանք ըստ ձեր**  
**կարողութեան աշխատելու ուրիշներուն բարու-**  
**թեանն ու երջանկութեանը համար։**

## ՎԵՐՋ

8ԱՆԿ

ԵՐԵ

ԳԼՈՒԽԸ ԱՅ ԱՅ ՖԵՐԻՔՆ ՖՐԱ-ԵԼՈ-Ն ՆԱՅԱԿԱՆԻՑ ։ 1

ԳԼ. Բ. Յանձնելու աղքաբանութեանը : Յանձնայ, Արևոտութեան ելլելը : Տաս+ ինչպէս աշարժին երենց ծնողաց հետ վարութել, և այլը : . . . . . = 4

Գլ. Ե. Յանձնելու համար կատարվութեան էղանձն աւելի է  
գայ = Անսանց շարունակական արով է առաջին էրենց էղանձնը  
մերժութեալ = Եթե մեղքեն ապաշխարսութեամբ դարձ բարեւ,  
զայնանը շատ գեշէ, և այսը = . . . . 16

9. 2. 3. Հայությաց կենաց համար Ռուբենի աղաջան-  
ւը = Յայությաց դասը ներառելը = Յայությաց իշխանուց  
ծախությունը և Եփիպառա ապրությունը, և այլն = . 20

ԳԼ. Լ. ՅԱՀՈԵՒՅ, Ճ-Խ-Ն-Ի-Լ-Ը ՊԵՐ-Մ-Դ-Ր-Ե-Մ ՆԵՐ-Ե-Խ-Ն-Ռ-Ն :  
ՊԵՐ-Մ-Դ-Ր-Ե-Մ Ն-Ա-Ն-Ե-Գ-Ա-Ծ Ա-Ե-Ր-Ը ՅԱՀՈԵՒՅ Հ-Ր-Ա-Յ = Ս-Ե-Ր-Ա-Յ  
Ա-Ր-Ը Ն-Ա-Ն-Ե-Գ-Ա-Ծ Պ-Ե-Ր-Ա-Յ-Ն-Ե-Ր-Ե-Ն Ս-Ե-Ր-Ա-Յ-Ն Ե-Ր-Կ-Ա-Յ-Ն  
Հ-Յ-Ն-Ե-Ր-Ե-Ն Ե-Ն-Ե-Ր-Ե-Ն : . . . . . 28

ԳԼ. թ. Յ-ՀԱԵՒՄ, ՎԵՐԱԿԱԳՈ- ԴՐ-ԵԼԸ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԵՐ ՎԵՐԱԿԱԳՈ- ԵԼ ԲԱՆՈՒ ԻՆ ԴՐ-ԵԼ-  
ԲԱՆՈՒՅԻՆ ԻՆՉ անոր Բարեկ Վարդը : Յ-ՀԱԵՒՄ  
ԱՆՎԵՐ ԵՎ ԵՎՐԱՆԻ- ԵԼ ԵՎՐԱՆԻ- ԵԼ ԵՎ ԵՎ-  
31

ԳԼ. Ժ. Ապահարացու վայրին բնակել բնակել անոր օդուագը ։  
Բայց մասսաւահայեցին երազը իւ մինե, եացը ։ 35

առաջուածքը Յշինութեանը համեմատ = Ա. պէտախուածնեան մէղքը, ևայլն = . . . . 39

Գլ. ԺԲ. Փարասոնի երազները = Յշետիայ Փարասոնի + վ կանչութելը = Անոր խոնարհութեանը, ևայլն = 41

Գլ. ԺԳ. Յշետի Փարասոնի երազները իւ մինէ = Եժեղապուէ վրայ կարավար իւ որուէ = Անոր նոր անուանը և ամուսնութեանը, ևայլն = . . . . 45

Գլ. ԺԴ. Ապահովութեայ նախախնամութեանը = Անոր համազանդէլ ու ապահովութեանը մէր պարագահանութեանն է = Յշետիայ ցորեն ժողովը = Աղջին ակնելը, ևայլն = . . 49

Գլ. ԺԵ. Եժեղապօբներուն Յշետիին ցորեն գնելը = Քանակու մէջ ուղղը = Յակոբայ իւ որդեւու կերպար գնելու համար Եժեղապու վրկելը, ևայլն = . . . . 53

Գլ. ԺԶ. Յշետիայ եղբայրներն անոր առջին իւ նարհութեան կ'ընեն = Անոնց բանաւ որութեւը = Անոնցու մէկնան բանապը պահութելը որպէս չէ Բէնիստին բերուէ, ևայլն = . . . . . . . . . . 57

Գլ. ԺԷ. Յշետիայ եղբայրներուն իւնոց յանցանուն իւարու ըսելն անոր սրբն իւ ներդործէ = Եժաւուն կ'ընարութիւնն ու մէջ մնալու = Յշետիայ եղբայրներուն ցորեն առնելով Քանակու երնալը = Աղջին ու գէշ մարդուն մէջ առնել ապահովութեանը, ևայլն = . . . . . . . . . . 61

Գլ. ԺԸ. Յշետիայ եղբայրներէն մէկնան սպահն անոր ուստին մէջին մէջին կ'եւլէ = Ա. մէկնու իւ վախնան = Օար իւղճ մը = Յակոբայ արտօմութեանն իւ որդեւուցը ըստածներուն վրայ, ևայլն = . . . . . . . . . . 65

Գլ. ԺԹ. Բէնիստին առանելու համար Յակոբայ հաճախութեան պալը = Յակոբայ որդեւուց ճամբայ, եւլէլը = Անոնց Յշետիայ ներկայանալը = Անոնց վախնը = Յանցանուը վախն յառաջ իւ բերէ, ևայլն = . . . . . . . . . . 69

Գլ. Խ. Եժաւուն բանապէն իւ հանութիւն = Յշետիայ եղբայրներն իւնոց ապահով ընծաներն անոր կու պահն = Եղ.

Հայոց անոնց հետո հայոց կ'առաջնութեան Յահանձնաբար պահանջման վեց անոնց մասին առաջնութեան աշխատանք է առաջանալ ։ 73

ԳԼ. ԻԲ. ՅԱՀԵՒԴՈՒ ՅԱԿԱՐԵՆ ԵՐ ԵՂԲԱՐԵՆԵՐ ԵՐԵՄԱ-  
ՐՈ-ԵՐԵՆ ԵԴՅ ԱՅԱԿԵԼ : ԱՆԻՇ ՅԱ-ԴԱՐԵ ԱՅԱԿԱ-  
ԽԱԿ : ՅԱ-ԴԱՐԵ ԱԿԱԿԱԿԻ , ԼԱՐՆ : . . . 80

ԳԼ. ԻԳ. ՅԱՎԵՐԻ ՅՆԴԱՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱՎՈՒՄ ԽՈՎՄԱՆ  
ՆԵՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱՎՈՒՄ ԽՈՎՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՎՈՒՄ ԽՈՎՄԱՆ  
ՆԵՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱՎՈՒՄ ԽՈՎՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՎՈՒՄ ԽՈՎՄԱՆ 83

Գլ. Իջ. Յանեժի էր հայրը Գրեւեմ ոչ ի՞նչ զանե ։  
Իր եղբայրներուն հինգը իւ հանէ Փարամունիս առջև, ու  
անոնց Գրեւեմ ոչ ընտեկելու հրաման ի՞ն-պայ ։ Յանեժի  
էր հայրը Փարամունիս առջև իւ հանէ ։ Յահովոյ խօսքը ։  
Կը ենաց հայութեանը ։ Մահացած ինչ ըլլալը, Լայը ։ 94

ԳԵՐԱՎԵՐ ՅԱՅՆ ԱՅ Պ ՊԵՏԱԿ ԱՅ  
ԳԼ. ԻԼ. ՅԱԿՈՒՄ Լ ԱԽՈՐ ԸՆԴԱԿԻՒՄ ՊԵՏԱԿ ԱՅ  
ԸՆԴԱԿԻՒՄ : ՍԱԿԱԿ ԱԽՈՐ ԸՆԴԱԿԻՒՄ ՅԱԿՈՒՄ ՊԵՏԱԿ ԱՅ . 99  
ԼԱՅՈՒՄ :

ԳԼ. ԻԸ. Եժեղագիներուն երեսց անասունները իւ-  
րակուրք համար Յովակայ առաւը = Անոնց նորէն կերա-  
կուր սովորը = Զերեն+ և երեսց երկերներն ալ առաւը,  
ևարը = Պէտրովունեան արժանիք խորհրդաժողովնեան յը  
Յովակայ վարչին վրայ = . . . . . 103

ԳԼ. ԻԸ. Յակովայ եր վահճանին մօրենաւը = Յովա-  
կայ եր հօրը արեսունեան երեւաւը = Յակովայ ԿՅովակ-  
ակականը անոր երդում ընել առաւը համար, որ երբ ին+  
ունանի, մարմին եր հայրեւուն +ով Ռազը = Յովակայ այս  
բանը երդումամբ եր հօրը խոսապանաւը = Երդան ինչ ըլլաւը = 106

ԳԼ. Լ. Յովակակ նորէն հօրը +ով կ'երեսայ անոր մահ-  
աւան ապենը ներկայ գարուուււը համար՝ եր սրդէին ալ  
հետ ապաւոււլ = Յակով Յովակայ սրդէին եր սրդուցը  
չարդը դուել զանոն+ կ'օրհնէ = Այս օրհնունեան մշկու-  
թիւնը = . . . . . 108

ԳԼ. ԼԱ. Յակով եր օրհնունիւնը իւ կապարէ Յովակայ  
սրդուցը վրայ = Յովակայ բաժինը = Յակովայ մարդա-  
րէնունիւնը և եր սրդէին օրհնեւը = Անոր մահը, ևարը = 113

ԳԼ. ԼԲ. Յովակայ արամունիւնիւնը եր հօրը մահաւանը  
վրայ = Յակովայ համար եղած ասածը = Անոր յուղարկա-  
ւուրնունիւնը և Մամբէէ այրէն մէջ Ռազունիւը = Յով-  
ակայ եղբայրնեւուն կասկածն աւ վախը = Զարերուն  
իւնի խայնը = . . . . . 117

ԳԼ. ԼԳ. Յովակայ եղբայրներն անիւն ներում իւ երե-  
տրեն = Յովակայ անոնց վախը իւ փարարէ, ևարը = 120

ԳԼ. ԼԴ. Յովակայ մահաւան մօրենաւը = Անիկայ  
մարդարէւանաւը և իւ իսրայէլցի Եժեղագուէ եւլիւլի Փա-  
ռանան պէտք երեւան, կ'երդուցընէ զանոն+ որ եր մարմին ալ  
երեսց հետ Փառանան առանին, ևարը = . . . . . 125

ԳԼ. ԼԵ. Յովակայ վարչը = Աստուծոյ վրայ սունե-  
ցած զօրաւոր հաւատուրը = Անոր վարչին գերազանցունեան  
բնան հիմն աս է = . . . . . 129

Երես


ԳԼ. ԼԶ. Յովանեսի էր հօրը ցցաւցած աերն ու հնաւ-  
շանդունինը = Յովանեսի էր եղբարիներուն վրայ սանե-  
ցած աերը և անոնց հետ ապացունաւուն վարսելը, Լայըն = 134

ԳԼ. ԼԻ. Յովանեսի առին ժործէ մէջ հասարակէմ ըլ-  
լուը = Ասոր օքինակիները = Հասարակունիսանն Ասոր-  
ծոյ վրայ հասարաւ սանենալին յահաջ կուժայ, Լայըն = 139

ԳԼ. ԼՀ. Յովանեսի արունինը ժորյունին դէմ դնէ-  
լու = Յովանեսի յոյս սանենալին Ասործոյ վրայ, Լ անոր  
կամացը հնազանդէլը = Կարդացողն ալ այս յոյսը և հնաւ-  
շանդունինն սոնի՝, Լայըն = . . . . 142


ԳԼ. ԼԹ. Յովանեսի խոնարհունինը = Բարի ճարդոց  
խոնարհունինը յահաջ կուժայ Ասործոյ վրայ հասարաւ  
սանենալին = . . . . . . . . 146

ԳԼ. Խ. Յովանեսի բարեսիրունինը = Կարդացողը  
շատ կերպով աղքանինին կրնայ ընէլ, Բայս ժափաւ սոնի՝  
ընէլու = Ուր որ բարեսիրունին վկայ հոն շատ մեղք և  
շնորհ կայ, Լայըն = . . . . . 150









891.99